

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>**

<b>1. ԱՆՆԱ ԴԱՆԻՔԵԿՅԱՆ</b> Առևտրային և այլ կազմակերպություններում ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները մերձավոր արտասահմանի երկրների օրենսդրությունում	2
<b>2. ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱԼՍՏՅԱՆ</b> Հանցագործությունների դասակարգումը հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքում	8
<b>3. ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳՍՅԱՆ</b> Կաշառքի շորթման համար քրեական պատասխանատվության առանձնահատկությունները	14
<b>4. ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b> Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները և առանձնահատկությունները	19
<b>5. ՄԱՀԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ</b> Համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլերի որոշ հիմնախնդիրների մասին	28
<b>6. ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ</b> Իրավունքի գերակայության հիմնարար նշանակությունն իրավական համակարգում	34
<b>7. ՄԻՔԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b> Հանրային սեփականության իրավունքի սոցիալական գործառույթը	40
<b>8. ԱՆԻ ՄԱՐԳՍՅԱՆ</b> Վարչական դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժելու հետ կապված որոշ հիմնախնդիրներ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո	49
<b>9. ԷՂՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆ</b> Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնական հայեցակարգերը. էությունն ու նշանակությունը մարդու և քաղաքացու անձնական իրավունքների ու ազատությունների ապահովման գործում	56
<b>10. ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b> Դատավորի կողմից նախնական դատալուծման անցկացումն որպես տվյալ քրեական վարույթին նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք	67
<b>11. DIANA GHAZARYAN</b> Decision-making in the world trade organization: Analysis from the developing countries prospective	69

### ԱՆՆԱ ԴԱՆԻԲԵԿՅԱՆ

Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական  
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԵՄՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ֆրանսիացի հայտնի իրավաբան-գիտնական Մարկ Անսելը կարևորում էր այլ պետությունների իրավունքի ուսումնասիրությունը այնքանով, որ դա նոր հորիզոններ է բացում իրավագետների առջև՝ հնարավորություն ընձեռելով ավելի լավ ճանաչել իրենց երկրի իրավունքը, քանի որ վերջինիս բնորոշ յուրահատկությունները ավելի պարզ են բացահայտվում այլ իրավական համակարգերի հետ համեմատելիս. զինում է իրավագետներին այնպիսի գաղափարներով և փաստարկներով, որոնք հնարավոր չէ ստանալ միայն սեփական իրավունքի նույնիսկ գերազանց իմացության դեպքում՝ Այդ տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում այլ պետությունների քրեական օրենսդրության մոտեցումը առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց կողմից կատարվող հանցագործություններին հակադրելու խնդրին: Մույն հոդվածում վերլուծվում են մերձավոր արտասահմանի երկրների օրենսդրության՝ նշված հանցանքների համար պատասխանատվություն սահմանող նորմերը:

ԽՍՀՄ փլուզման արդյունքում միութենական հանրապետությունների տնտեսական համակարգերում տեղի ունեցած փոփոխությունները՝ պետական սեփականության վրա հիմնված ժողովրդական տնտեսության կառավարման կենտրոնացված համակարգից անցումը դեպի ազատ շուկայական հարաբերություններ, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացումը հանգեցրել են մասնավոր և սեփականության այլ ձևերի վրա հիմնված բազմատեսակ կազմակերպությունների ստեղծմանը, որոնք ընդգրկված չեն պետական կառավարման համակարգում և տարբերվում են պետական կազմակերպություններից սեփականության օգտագործման և տնօրինման կարգով: Վերոգրյալի հետ միաժամանակ ծագել են նաև նոր խնդիրներ: Նորաստեղծ առևտրա-

յին և այլ (ոչ առևտրային) կազմակերպությունների գործունեության կապակցությամբ ծավալվող հասարակական հարաբերությունները պահանջում էին իրավական, այդ թվում նաև քրեաիրավական կարգավորում: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն առաջացավ վերանայելու խորհրդային քրեական իրավունքում ձևավորված դրույթները, որոնք օբյեկտիվ պատճառների ուժով այլևս ի վիճակի չէին ճիշտ արտացոլելու հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջները:

Առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց կողմից կատարվող հանրորեն վտանգավոր արարքների քրեականացման հարցը նախկին միութենական հանրապետությունների օրենսդրությունում ստացել է տարբեր լուծում: Մասնավորապես, կարելի է նշել տվյալ հարցին ետխորհրդային տարածության երկրների օրենսդիրների հետևյալ հիմնական մոտեցումները՝ առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը պաշտոնեական հանցագործությունների համար, վերոհիշյալ անձանց քրեական պատասխանատվությունը բացառելը և առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց՝ ծառայության շահերի դեմ ուղղված արարքների համար քրեական պատասխանատվության սահմանազատումը:

Առաջին ուղին ընտրել են, օրինակ, Ուզբեկստանի, Բելառուսի և Ուկրաինայի օրենսդիրները: Այսպես, 1994թ. սեպտեմբերի 22-ին ընտրված, 1995թ. ապրիլի 1-ից գործողության մեջ դրված Ուզբեկստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի 8-րդ բաժնում («Տերմինների իրավական նշանակություն») տրվում է պաշտոնա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

տար անձի հետևյալ սահմանումը՝ դա կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով օժտված անձ է, որը չունի պատասխանատու պաշտոնատար անձի հատկանիշներ: Քանի որ տվյալ սահմանումը որևէ նշում չի պարունակում այն մասին, թե որտեղ է պաշտոնատար անձ համարվող սուբյեկտը իրականացնում օրենքում նշված լիազորությունները, կարելի է եզրակացնել, որ դա չունի որևէ քրեաիրավական նշանակություն<sup>2</sup>: Օրենսգրքի 5-րդ բաժնի («Իշխանության, կառավարման և հասարակական միավորումների գործունեության կարգի դեմ ուղղված հանցագործությունները») XV-րդ գլխով («Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները») նախատեսված պաշտոնական որոշ հանցագործությունների որակյալ հանցակազմերում («Իշխանությունը կամ պաշտոնական լիազորությունները չարաշահելը», 205-րդ հոդվածի 2-րդ մասի «Յ» կետ, «Պաշտոնական լիազորություններն անցնելը», 206-րդ հոդվածի 2-րդ մասի «Յ» կետ, «Կաշառք ստանալը», 210-րդ հոդվածի 3-րդ մասի «Ճ» կետ, «Կաշառք տալը», 211-րդ հոդվածի 3-րդ մասի «Յ» կետ, «Կաշառքի միջնորդություն», 212-րդ հոդվածի 3-րդ մասի «Ը» կետ) որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք նշված է պատասխանատու պաշտոնատար անձի կողմից հանցանք կատարելը: Օրենսգրքի 8-րդ բաժնում տրված սահմանմանը համաձայն՝ այլ սուբյեկտների հետ մեկտեղ այդպիսիք համարվում են նաև ձեռնարկությունների, հիմնարկների կամ սեփականության այլ ձևերի կազմակերպությունների ղեկավարները, պետական կառավարման գծով իշխանական լիազորություններով սահմանված կարգով օժտված հասարակայնության ներկայացուցիչները: Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող XV-րդ գլխում ընդգրկված 213-րդ հոդվածի («Ծառայողի կաշառում») 1-ին մասով սահմանվում է քրեական պատասխանատվություն պետական մարմնի, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության՝ անկախ սեփականության ձևից, հասարակական միավորման, քաղաքացիների ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձ չհանդիսացող ծառայողի կաշառման համար, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով՝ նշված սուբյեկտի կողմից ակնհայտ ապօրինի նյութական վարձատրություն կամ գույքային օգուտ ստանալը, որն ավելի խիստ է պատժվում, քան 1-ին մասով նախատեսված արարքը<sup>3</sup>:

Բելառուսի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի (ընդունվել է Ներկայացուցիչների պալատի կողմից 1999թ. հունիսի 2-ին, Հանրապետության Խորհրդի կողմից հավանության է արժա-

նացել 1999թ. հունիսի 24-ին, 4-րդ հոդվածի («Քրեական օրենսգրքի առանձին տերմինների պարզաբանումը») 4-րդ կետին համապատասխան, այլ սուբյեկտների հետ մեկտեղ պաշտոնատար անձ են համարվում նաև հասարակայնության ներկայացուցիչները, այսինքն՝ պետական ծառայության մեջ չգտնվող անձինք, որոնք սահմանված կարգով օժտված են իշխանության մարմնի լիազորություններով՝ հասարակական կարգի պահպանման, իրավախախտումների դեմ պայքարի, արդարադատության իրականացման հետ կապված պարտականությունները կատարելիս (2-րդ կետ), մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ հիմնարկներում, կազմակերպություններում կամ ձեռնարկություններում (անկախ սեփականության ձևից) կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական պարտականությունների կատարման հետ կապված պաշտոններ զբաղեցնող անձինք, որոնք սահմանված կարգով լիազորված են կատարելու իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ (3-րդ կետ): Ուշագրավ է, որ ԲՀ ԲՕ 35-րդ գլխում («Ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները») պաշտոնատար անձի կողմից ծառայության շահերին հակառակ կատարվող՝ օբյեկտիվ կողմից գործողությամբ և անգործությամբ դրսևորվող արարքներն առանձնացված են տվյալ գլխի տարբեր հոդվածներում («Իշխանությունը կամ ծառայողական լիազորությունները չարաշահելը», 424-րդ հոդված, և «Պաշտոնատար անձի անգործությունը, 425-րդ հոդված»): Ընդ որում, անգործությամբ դրսևորվող արարքը պատժվում է ավելի մեղմ, քան գործողությամբ կատարվածը, որը, կարծում են, միանշանակ արդարացված չէ՝ նկատի ունենալով, որ արարքի հանրության համար վտանգավորության աստիճանի վրա որևէ կերպ չի կարող ազդել այն գործողությամբ կամ անգործությամբ կատարելու հանգամանքը, հետևաբար՝ ծառայության շահերի դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքների ըստ օբյեկտիվ կողմի հատկանիշների սահմանագատելը հիմնավոր չէ:

Հարկ է նշել նաև, որ Բելառուսի օրենսդիրը՝ նույնացնելով պետական և ոչ պետական կազմակերպությունների պաշտոնատար անձանց պատասխանատվությունը ծառայության շահերի դեմ ուղղված արարքների համար, այն սահմանազատում է պաշտոնատար անձ չհանդիսացող սուբյեկտների կողմից ապօրինի նյութական օգուտներ ստանալու դեպքում: Այսպես կոչված «ավանդական» կոռուպցիոն բնույթի պաշտոնական հանցագործությունների հետ մեկտեղ, ինչպիսիք են՝ կաշառք տալը, կաշառք ստանալը և կաշառքի միջ-

www.lawinstitute.am

նորությունը, ԲՀ ԲՕ 35-րդ գլխում նախատեսված է նաև քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձ չհանդիսացող՝ պետական մարմնի կամ այլ պետական կազմակերպության աշխատակցի կողմից ապօրինի վարձատրություն կամ գույքային բնույթի այլ օգուտ ընդունելու համար (Հոդված 433. «Ապօրինի վարձատրություն ընդունելը»): Ընդ որում, պետական ծառայողին ապօրինի վարձատրություն տրամադրելը քրեականացված չէ: Միաժամանակ, առևտրային կաշառք ստանալու և տրամադրելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող 252-րդ հոդվածը, որի սուբյեկտ է հանդիսանում անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի՝ պաշտոնատար անձ չհանդիսացող աշխատողը, ընդգրկված է «Տնտեսական գործունեության իրականացման կարգի դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրված 25-րդ գլխում (ծառայության շահերի դեմ ուղղված այլ հանցանքների դեպքում մնան սահմանազատում կատարված չէ):

Կարծում ենք, որ նման օրենսդրական լուծումն անտրամաբանական է: Նախ՝ անհասկանալի է, թե ինչով է դա պայմանավորված՝ հիմք ընդունելով, որ միևնույն ոչ պետական կազմակերպությունում կառավարչական կամ այդպիսիք չհանդիսացող այլ գործառույթներ իրականացնող աշխատողների՝ ծառայության շահերին հակառակ կատարված հակաօրինական արարքներն, անշուշտ, ոտնձգում են միևնույն օբյեկտի դեմ՝ անկախ նրանից, թե այդպիսին համարվեն տնտեսական գործունեության, թե ծառայության իրականացման բնականոն կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Բացի այդ, պարզ չէ, թե ինչից էլնելով՝ ոչ պետական կազմակերպության աշխատողին կաշառելը հանցանք ճանաչելու պարագայում, պետական ծառայողի նկատմամբ կատարված նույնանման արարքն այդպիսին չի դիտվում:

Ուկրաինայի Հանրապետության քրեական օրենսդրությունում առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց կողմից կատարվող հանրության համար վտանգավոր արարքների վրա ևս տարածվում են պաշտոնեական հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերի դրույթները: Այսպես, ըստ Ուկրաինայի Գերագույն Ռադայի կողմից 2001թ. ապրիլի 5-ին ընդունված, 2001թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դրված Ուկրաինայի քրեական օրենսգրքի 17-րդ բաժնում («Ծառայողական գործունեության ոլորտի հանցագործությունները») ընդգրկված 364-րդ հոդ-

վածի («Իշխանությունը կամ ծառայողական դիրքը չարաշահելը») ծանոթագրության 1-ին մասի, պաշտոնատար անձինք են համարվում մշտապես կամ ժամանակավորապես իշխանության ներկայացուցիչների գործառույթներն իրականացնող, ինչպես նաև ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում՝ անկախ սեփականության ձևից, կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական պարտականությունների կատարման հետ կապված պաշտոնները մշտապես կամ ժամանակավորապես զբաղեցնող, կամ այդպիսի պարտականությունները առանձին լիազորությամբ կատարող անձինք :

Վերլուծելով վերը թվարկված մոտեցումները՝ նշենք, որ պետական և ոչ պետական կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց պատասխանատվությունը նույնացնելը դժվար թե կարելի է համարել արդարացված՝ հիմք ընդունելով տվյալ կառույցների գործունեության իրականացման տարբեր նպատակները և սկզբունքները: Սակայն, ավելի անհիմն է թվում վերը նշված երկրորդ մոտեցումը՝ ծառայության շահերի դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքներ կատարող առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառելը, որպիսի ուղին ընտրել է, օրինակ՝ Ադրբեյջանի օրենսդիրը:

Այսպես, 1999թ. դեկտեմբերի 30-ին հաստատված, 2000թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դրված Ադրբեյջանի Հանրապետության քրեական օրենսգրքով ընդհանրապես չի նախատեսվում առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական լիազորություններ իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը: ԱՀ ԲՕ 33-րդ գլխում («Պետական իշխանության, պետական ծառայության շահերի և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության դեմ ուղղված հանցագործությունները») ընդգրկված 308-րդ հոդվածի («Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը») ծանոթագրության 1-ին մասի համաձայն՝ պաշտոնատար անձինք են համարվում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցիչների գործառույթներ իրականացնող կամ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և մունիցիպալ հիմնարկներում, ձեռնարկություններում և կազմակերպություններում կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներն իրականացնող անձինք: Վերը նշված նորմի վերլուծությունից բխում է, որ պետական կամ տեղական ինքնակա-

ռավարման մարմին կամ վերջիններիս հիմնարկ, ձեռնարկություն կամ կազմակերպություն չհանդիսացող որևէ այլ կազմակերպությունում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց արարքները հանդիսանում են քրեորեն ոչ պատժելի: Փաստորեն, Ադրբեջանի օրենսդիրն անտեսել է առևտրային և այլ կազմակերպություններում ծառայության շահերի ապահովման կարևորությունը, որի հետևանքով քրեաիրավական պաշտպանության ոլորտից դուրս են մնացել այդ կապակցությամբ ծավալվող հասարակական հարաբերությունները: Մինչդեռ պետական ապարատի պաշտոնատար անձ չհանդիսացող սուբյեկտների անիրավաչափ արարքները նույնպես օբյեկտիվորեն վտանգ են ներկայացնում ֆիզիկական և իրավաբանական անձանց, հասարակության և պետության օրինական շահերի համար, որով թելադրված է նման արարքներին հակազդելու անհրաժեշտությունը:

Առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներ իրականացնող անձանց քրեական պատասխանատվության հարցում նման մոտեցում է ցուցաբերում նաև Լիտվայի Հանրապետության օրենսդիրը՝ որոշակի վերապահումներով: Լիտվայի ՔՕ (հաստատվել է 2000թ. սեպտեմբերի 26-ի օրենքով, ուժի մեջ է մտել 2003թ. հունվարի 1-ին) «Պետական ծառայության և հանրային շահերի դեմ ուղղված հանցագործությունները և քրեական զանցանքները» վերնագրված 33-րդ գլխում բովանդակվող 230-րդ հոդվածի («Հասկացությունների մեկնաբանումը») 1-ին մասի համաձայն՝ սույն գլխում նշված պետական ծառայողներ են համարվում պետական ծառայության պարտականությունները կատարող անձինք՝ պետության քաղաքական գործիչները, պետական ծառայության մասին օրենքով՝ հանրային վարչարարության ծառայողները, ինչպես նաև այլ անձինք, ովքեր, աշխատելով պետական ատյաններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ատյաններում կամ հիմնարկներում, դատական, իրավապահ ատյաններում կամ պետական հսկողության և վերահսկողության մարմիններում, դրանց հավասարեցված ատյաններում, իրականացնում են իշխանության ներկայացուցչի գործառույթները կամ օժտված են վարչական լիազորություններով, հավասարապես նաև այդպիսի պաշտոնների պաշտոնական թեկնածուները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական ծառայողին հավասարեցվում է օտարերկրյա պետության ատյանում, միջազգային հանրային կազմակերպությունում կամ միջազգային դատական ատյաններում համապատասխան լիազորություններով

օժտված անձը, ինչպես նաև այդպիսի պաշտոնների պաշտոնական թեկնածուները: Բացի այդ, նշված հոդվածի 3-րդ մասի ուժով պետական ծառայողին հավասարեցվում է ցանկացած պետական, ոչ պետական կամ մասնավոր հիմնարկում, ձեռնարկությունում կամ կազմակերպությունում պաշտոն զբաղցնող կամ ձեռնարկատիրությամբ զբաղվող և հանրային վարչարարության լիազորություններով օժտված, ինչպես նաև հասարակությանը հանրային ծառայություններ մատուցող անձը, բացառությամբ տնտեսական կամ տեխնիկական գործառույթներ իրականացնող անձանցից: Այսպիսով, Լիտվայի քրեական օրենսդրությունը որոշ դեպքերում կարող է պետական ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ ճանաչել ոչ պետական կազմակերպության ծառայողին, որպիսի օրենսդրական լուծումը՝ կարծում ենք, վիճելի է:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց և առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներն իրականացնող անձանց պատասխանատվության սահմանազատման սկզբունքն արտացոլված է մի շարք մերձավոր արտասահմանի երկրների քրեական օրենսդրությունում, որպիսի մոտեցումը, կարծում ենք, հիմնավոր է և արդարացված: Որոշ հանրապետությունների քրեական օրենսգրքերում առևտրային և այլ կազմակերպություններում ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները առանձնացված են ինքնուրույն գլուխներում:

1996թ. մայիսի 24-ին ընդունված, 1997թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված Ռուսաստանի Դաշնության ՔՕ 23-րդ գլխում («Առևտրային և այլ կազմակերպություններում ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները») նախատեսված են հետևյալ արարքները՝ «Լիազորությունները չարաշահելը» (201-րդ հոդված), «Լիազորությունները չարաշահելը մասնավոր նոտարների և աուդիտորների կողմից» (202-րդ հոդված), «Մասնավոր պահնորդական կամ խուզարկուական ծառայությունների ծառայողների կողմից լիազորություններն անցնելը» (203-րդ հոդված) և «Առևտրային կաշառքը» (204-րդ հոդված)<sup>8</sup>:

Ի տարբերություն ՌԴ ՔՕ՝ Վրաստանի ՔՕ (ընդունվել է 1999թ. հուլիսի 22-ին, գործողության մեջ է դրվել 2000թ. հուլիսի 1-ից) XXIX-րդ «Ձեռնարկատիրական կամ այլ կազմակերպություններում ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները» գլուխը քրեական պատասխանատվություն է սահմանում միայն երկու արարքի՝ լիազորությունները չարաշահելու (220-րդ հոդված)

և առևտրային կաշառքի համար (221-րդ հոդված): Ընդ որում, տվյալ արարքների սուբյեկտներ են հանդիսանում համապատասխան կազմակերպությունում «ղեկավարման, ներկայացուցչական կամ այլ հատուկ լիազորություններ» ունեցող անձինք<sup>9</sup>: Ելնելով վերը նշված նորմերի տառացի մեկնաբանությունից՝ կարելի է եզրակացնել, որ այդպիսիք կարող են հանդիսանալ ոչ միայն կառավարչական գործառույթներն իրականացնող ծառայողները:

1997թ. հոկտեմբերի 1-ին ընդունված, 1998թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված Դրդգստանի Հանրապետության ՔՕ «Տնտեսության ոլորտի հանցագործությունները» VIII-րդ բաժնի «Հանցագործությունները ոչ պետական ձեռնարկություններում և կազմակերպություններում» 23-րդ գլուխը նախատեսում է թվով հինգ հանցակազմ՝ «Առևտրային և այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը» (221-րդ հոդված), «Լիազորությունները չարաշահելը մասնավոր նոտարների և աուդիտորների կողմից» (222-րդ հոդված), «Մասնավոր խուզարկուական ծառայությունների ծառայողների կողմից լիազորություններն անցնելը» (223-րդ հոդված), «Առևտրային կաշառքը» (224-րդ հոդված), որի սուբյեկտ է հանդիսանում միայն առևտրային կազմակերպությունում կառավարչական գործառույթներն իրականացնող անձը, և «Ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը» (225-րդ հոդված): Վերջին հոդվածով նախատեսված արարքի սուբյեկտ է հանդիսանում պետական մարմնի, ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության, հասարակական միավորման, քաղաքացիների ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձ չհանդիսացող ցանկացած ծառայող: Տվյալ նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ այդպիսին պետք է դիտվի ցանկացած, այդ թվում նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ծառայողը՝ նկատի ունենալով նաև, որ «Պաշտոնական հանցագործությունները» 30-րդ գլխով նախատեսված մի շարք կոռուպցիոն արարքների սուբյեկտ են հանդիսանում բացառապես պետական, տեղական ինքնակառավարման մարմնիների, դրանց հիմնարկների, ինչպես նաև զինված ուժերի և այլ զինվորական միավորումների պաշտոնատար անձինք (304-րդ հոդվածի ծանոթագրություն 1-ին մաս)<sup>10</sup>: Նման օրենսդրական լուծումը՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ծառայողին 23-րդ գլխով նախատեսված արարքների սուբյեկտների շրջանակում ընդգրկելը, անհասկանալի է թվում՝ հիմք ընդունելով տվյալ գլխի վերնագիրը:

2002թ. ապրիլի 18-ին ընդունված Մոլդովա-

յի Հանրապետության ՔՕ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ «Առևտրային, հասարակական և այլ ոչ պետական կազմակերպությունները ղեկավարող անձանց կողմից կատարված հանցագործությունները» XVI-րդ գլխում ավանդական հանցակազմների հետ մեկտեղ այն նախատեսում է նաև ծառայողական լիազորություններն անցնելը (336-րդ հոդված), որի հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք է հանդիսանում անվտանգության ապահովման մասնավոր ծառայության կամ մասնավոր խուզարկուական կամ պահնորդական կազմակերպության աշխատողի կողմից կատարելը՝ զուգորդված բռնության կամ բռնության սպառնալիքի հետ (336-րդ հոդվածի 2-րդ մաս): Ծառայողական դիրքը չարաշահելու (335-րդ հոդված) որակյալ հանցակազմի սուբյեկտներ են հանդիսանում նոտարը, աուդիտորը և փաստաբանը (335-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի այդ, Մոլդովայի օրենսդրի կողմից «առևտրային կաշառք» ավանդական տերմինի փոխարեն օգտագործվել է «կաշառք» բառը («Կաշառք տալը», 333-րդ հոդված և «Կաշառք ստանալը», 334-րդ հոդված)<sup>11</sup>:

1998թ. մայիսի 21-ին ընդունված, 1998թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ է մտած Տաջիկստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, սահմանազատելով պաշտոնական հանցագործություններից առևտրային և այլ կազմակերպություններում կառավարչական գործառույթներն իրականացնող անձանց արարքները, վերջիններս չի ընդգրկում առանձին գլխում: Տվյալ արարքները ներառված են տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին նվիրված 27-րդ գլխում<sup>12</sup>: Նույնն է նաև ՀՀ օրենսդրի մոտեցումը տվյալ կատեգորիայի հանցագործությունների նկատմամբ, որոնք ընդգրկված են «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրված 22-րդ գլխում («Առևտրային կաշառք», 200-րդ հոդված և «Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողի կողմից լիազորությունները չարաշահելը», 214-րդ հոդված)<sup>13</sup>:

Անդրադառնալով ուսումնասիրվող արարքների օբյեկտի խնդրին՝ գտնում են, որ վերոհիշյալ օրենսդրական լուծումը վիճելի է: Այսպես, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող՝ շահույթ ստանալու հիմնական նպատակ ունեցող առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ իրականացնող անձանցից բացի, տվյալ արարքների սուբյեկտների շրջանակում ընդգրկված են նաև այլ նպատակներ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություններում համապատասխան լիազորություններով օժտված ծառայողները, ինչպես նաև

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փաստաբանները, արբիտրները (այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրները): Հետևաբար, տվյալ կատեգորիայի արարքները միշտ չէ, որ այս կամ այն չափով առնչվում են տնտեսության ոլորտին: Դժվար թե կարելի է պնդել, որ՝ օրինակ, քրեական գործով պաշտպան նշանակված փաստաբանին կաշառք տալու կամ վերջինիս կողմից կաշառք ստանալու հետևանքով վնասը հասցվում է տնտեսական գործունեության ոլորտում ծավալվող հա-

սարակական հարաբերություններին: Բոլոր դեպքերում նշված արարքները ոտնձգում են ոչ պետական կազմակերպություններում (հասարակական ինստիտուտներում) ծառայության (մասնագիտական գործունեության) իրականացման սահմանված կարգի դեմ: Այդ տեսակետից, կարծում ենք, որ նպատակահարմար կլինեք առանձնացնել տվյալ կատեգորիայի արարքները տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններից:

<sup>1</sup> Տե՛ս Անսել Կ. Մեթոդոլոգիական խնդիրները համեմատական իրավունքի ոլորտում: Մ.: Մոսկովսկի համալսարան, 1981. Ս. 38.

<sup>2</sup> Տե՛ս Վոլժենկին Բ. Վ. Սлужбные преступления. М.: Юристъ, 2000, С. 355.

<sup>3</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс Республики Узбекистан. <http://ugolovnykodeks.ru>.

Уголовный кодекс Республики Узбекистан. <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14405/preview>

<sup>4</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс Республики Беларусь. <http://ugolovnykodeks.ru>.

Право. Законодательство Республики Беларусь. Уголовный кодекс Республики Беларусь.

<http://pravo.kulichki.com/vip/uk/00000001.htm>

<sup>5</sup> Տե՛ս Уголовный кодекс Украины <http://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks>

<sup>6</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс Азербайджана. <http://ugolovnykodeks.ru>. Уголовный кодекс Азербайджанской Республики. <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14108/preview>

<sup>7</sup> Տե՛ս Экономико-правовая библиотека. Уголовный кодекс Литовской Республики.

[http://www.pravo.vuzlib.net/book\\_z794\\_page\\_37.html](http://www.pravo.vuzlib.net/book_z794_page_37.html)

<sup>8</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс РФ. <http://ugolovnykodeks.ru>. Уголовный кодекс РФ от 13 июня 1996г. N 63-ФЗ. Система «ГАРАНТ» [www.garant.ru](http://www.garant.ru)

<sup>9</sup> Տե՛ս Уголовный кодекс Грузии. «ЗАКОН». Интернет-журнал Ассоциации юристов Приморья.

[http://law.vl.ru/comments/show\\_article.php?art\\_id=489&sec\\_id=61&law\\_id=12&law\\_name](http://law.vl.ru/comments/show_article.php?art_id=489&sec_id=61&law_id=12&law_name)

<sup>10</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс Кыргызской Республики. <http://ugolovnykodeks.ru>.

Уголовный кодекс Кыргызской Республики. <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14305/preview>

<sup>11</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс Республики Молдова. <http://ugolovnykodeks.ru>.

Владивостокский центр исследования организованной преступности. Уголовный кодекс Республики Молдова.

<http://www.crime.vl.ru/index.php?p=1320&more=1&c=1&tb=1&pb=1>

<sup>12</sup> Տե՛ս Уголовные кодексы мира. Уголовный кодекс Республики Таджикистан. <http://ugolovnykodeks.ru>.

Уголовный кодекс Республики Таджикистан. <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14346/preview>

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը, «ԻՐՏԵԿ» համալիր:

## РЕЗЮМЕ

***Преступления против интересов службы в коммерческих и иных организациях по законодательству стран ближнего зарубежья***

Настоящая статья посвящена рассмотрению норм уголовного законодательства стран ближнего зарубежья, предусматривающих ответственность за преступления против интересов службы в коммерческих и иных организациях. В статье представлено отношение законодателей иных государств к проблеме криминализации общественно опасных деяний, совершаемых лицами, выполняющими управленческие функции в соответствующих организациях. Затрагивается также вопрос отграничения деяний данной категории от должностных преступлений, который в законодательстве разных стран решается неоднозначно. Статья содержит сравнительный анализ соответствующих норм уголовного законодательства РА и иных государств.

## SUMMARY

***The crimes against the interests of the service for commercial and other organizations under the legislation of neighboring countries***

This article deals with the rules of criminal law neighboring countries, involving responsibility for the crimes against the interests of the services for commercial and other organizations. The article presents the ratio of the legislators of other states to the problem of criminalization anti-socially dangerous acts committed by persons performing managerial functions in their respective organizations. Also raised the issue of delimitation of the category of acts of malfeasance, which in the legislation of different countries is solved uniquely. This article contains a comparative analysis of the relevant rules of the criminal law of RA and other countries.

### ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական

### ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱԼՍՏՅԱՆ

«Միջազգային ինտեգրում» հասարակական կազմակերպության նախագահ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության մագիստրոս

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՆՑԱՓՈՐՁԻ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐՈՒՄ

Երկրում ընթացող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ ինստիտուցիոնալ փոփոխություններ քրեական արդարադատությունում, մասնավորապես նաև՝ քրեակատարողական համակարգում: Իրականացված մի շարք օրենսդրական փոփոխություններ միտված են եղել պատժի նշանակմանը և կրմանը ներկայացվող միջազգային այնպիսի սկզբունքների և չափանիշների ապահովմանը, ինչպիսիք են՝ պատժի անհատականացումը, խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի անթույլատրելիությունը, պատժի կրման համար միջազգային չափանիշներին համապատասխան պայմանների հնարավորինս ապահովումը և այլն:

Քրեական քաղաքականության նպատակների ամբողջական իրականացմանն ուղղված հետազոտ փոփոխությունների կարևորագույն խնդիրներից է պատժի նպատակների՝ սոցիալական արդարության վերականգնման, դատապարտյալի ուղղման, հանցագործությունների կանխարգելման արդյունավետ և ամբողջական իրականացման ապահովումը: Այս խնդրի լուծման համար կարևորվում է այն, որ քրեական արդարադատությունում դեռևս առկա են թե տեսական, և թե գործնական հարթության խնդիրներ: Մասնավորապես, կան խնդիրներ, որոնք կապված են ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների տեսակների հետ, դրանց դասակարգման, հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիժ սահմանելու առանձնահատկությունների հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 33-րդ հոդվածը տալիս է ավարտված և չավարտված հանցագործությունների սահմանու-

մը, ըստ որի.

1. Ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

2. Չավարտված հանցագործություն են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը:

Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար պատասխանատվությունը վրա է հասնում Օրենսգրքի հատուկ մասի նույն հոդվածով, իսկ ավարտված հանցագործության համար՝ հղում կատարելով Օրենսգրքի 34-րդ (հանցափորձը) կամ 35-րդ (հանցագործության նախապատրաստությունը) հոդվածին:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությանը կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամ քիչ անկախ հանգամանքներով:

Օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամ քիչ անկախ հանգամանքներով:

Այսպիսով, Օրենսգրքով հանցագործության փորձի կամ նախապատրաստության համար արարքը որակելիս նշվում է Օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածը՝ հղում անելով

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Օրենսգրքի 34-րդ կամ 35-րդ հոդվածին (օրինակ՝ 34-104՝ սպանության փորձ):

Բացի այդ, Օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանվում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելը, ըստ որի՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կետը (Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մաս): Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Ըստ էության, Օրենսգրքը հստակ սահմանում է հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատժաչափերը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքում պատիժ նշանակելիս, նախ պետք է հաշվի առնել հանցագործության հանգամանքները, արարքը ավարտին չհասցնելու պատճառները, անձի բնութագիրը և այլն:

Հանցագործության հանգամանքներին անդրադառնալիս, քրեական իրավունքի տեսությունում, հատկապես հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքերում, կարևորվում են մի շարք գործոններ՝ արարքի հանցավորությունը որոշելու համար ուսումնասիրվում են արարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը:

Օբյեկտիվ կողմին անդրադառնալիս, ինչպես ավարտված հանցագործության դեպքում, այնպես էլ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի կոնկրետ գործողություն դրսևորված լինի (actus reus): Այսինքն՝ զուտ հանցավոր մտադրությունը բավական չէ, որպեսզի անձը պատասխանատվության ենթարկվի հանցափորձի կամ հանցագործության նախապատրաստության համար<sup>1</sup>:

Սուբյեկտիվ կողմը քննելիս, անհրաժեշտ է, որպեսզի անձի մոտ առկա լինի հանցավոր մտադրություն (mens rea): Արարքը պետք է իր մեջ պարունակի հանցանք կատարելու ուղղակի դիտավորություն: Այս դրույթն ամրագրված է նաև Օրենսգրքի 34-րդ և 35-րդ հոդվածներում. «Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատար-

ված այն գործողությունը (անգործությունը)...», «Հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար...»: Օրենսգրքը հստակորեն սահմանում է ուղղակի դիտավորության անհրաժեշտությունը: Հետևաբար, քննարկվող նյութի իմաստով անգործությամբ կատարված հանցագործության փորձի մասին խոսք լինել չի կարող: Այս տեսակետն առկա է նաև քրեական իրավունքի շատ տեսաբանների մոտ<sup>2</sup>:

Որոշակի առանձնահատկություններ են սահմանվում նաև հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիժ նշանակելիս: Մասնավորապես, բացի Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից, (հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները), 65-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնվեն հանցափորձի և հանցագործության նախապատրաստության ժամանակ, մասնավորապես՝ հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունը ավարտին չի հասցվել: Այս և այլ սկզբունքներ կարևորվում են նաև մի շարք այլ երկրների քրեական օրենսգրքերում՝ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիժ նշանակելիս: Օրինակ՝ Բուլղարիայի քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի ժամանակ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում հանցագործի և արարքի հանրության համար հասարակական վտանգավորության աստիճանը, հանցագործություն կատարելու դրդապատճառները, ինչպես նաև այլ մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքներ: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 132-24-րդ հոդվածի համաձայն՝ հանցափորձի համար պատիժը նշանակելիս և պատժի կրման պայմանները սահմանելիս պետք է հիմնվել հանցագործի անձնային հատկանիշների և հանցագործության հանգամանքների վրա: Լատվիայի քրեական օրենսգրքով, ի թիվս նշված հանգամանքների, պետք է նաև հաշվի առնել հանցագործի կողմից իր կատարած արարքի վտանգավորության գիտակ-

ցումը և հանցագործությունն ավարտին չհասցնելու հանգամանքները: Ավելին, մի շարք երկրներում, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների փորձի համար պատասխանատվություն չի սահմանվում, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Նորվեգիայում, իսկ Ֆինլանդիայում և Լատվիայում հանցափորձը պատժվում է միայն, եթե այն սահմանված է կոնկրետ հոդվածով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից ևս կարելի է եզրակացնել, որ հանցափորձը դիտվում է շատ ավելի մեղմ հանցանք, քան ավարտված հանցագործությունն է, իսկ որոշ դեպքերում անձը անգամ պատասխանատվության չի ենթարկվում:

Եթե հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիժ նշանակելիս մի շարք երկրների օրենսգրքեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ունեն գրեթե նույն մոտեցումը, ապա նույնը չի կարելի ասել հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը դասակարգելու մասին: Օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանվում է հանցագործությունների տեսակները, համաձայն որի՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ, չնայած հանցագործությունների դասակարգման հիմքում արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը որպես չափանիշ դրված լինելուն, դասակարգումն իրականացվում է ըստ հանցագործության համար Օրենսգրքով սահմանված պատժաչափի, սահմանելով հանցագործությունների ծանրության աստիճանները, հիմք է ընդունվում Օրենսգրքի Հատուկ մասով սահմանված կոնկրետ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժաչափը:

Այս մոտեցումն առաջին հայացքից պարզ է: Թվում է, թե Օրենսգրքով տրված է հստակ կարգավորում, որն ընդունված է նաև մի շարք այլ երկրների քրեական օրենսգրքերի կողմից: Մակայն, տեսական և գործնական վերլուծությունները վեր են հանում առկա որոշ խնդիրներ: Մասնավորապես, օրենսդիրն ուղղակի ամրագրել է, որ հանցագործությունների դասակարգումը ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարվում է «ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի»: Դրանից ելնելով՝ պետք է հավաստել, որ յուրաքանչյուր հանցագործություն նշված տեսակներից որևէ մեկին դասելը պետք է իրականացվի հատկապես հաշվի առնելով ոստիկանության հասարակական վտանգավորությունը, դրա բնույթն ու աստիճանը: Մինչդեռ 19-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր տեսակի միակ տարբերիչ հատկանիշ է Օրենսգրքով նախատեսված պատիժը<sup>3</sup>: Կատարված տեսական վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում այն հակասությունը, որ առկա է Օրենսգրքի 19-րդ հոդվածում՝ հանցագործությունների դասակարգման հիմքում նշելով արարքի բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, այնուամենայնիվ, դասակարգումը, փաստորեն, կատարվում է այլ հիմքով՝ պատժաչափով:

Նման մոտեցման վերաբերյալ ֆրանսիացի քրեագետ Ռոսսին (ըստ Ն.Ս. Տագանցկի վկայության) պնդում էր, որ օրենքում հանցագործությունների դասակարգումն ըստ պատժաչափի իրականացնելը նշանակում է ասել հասարակությանը. «Մի՛ աշխատեք ուսումնասիրել մարդկային արարքների ներքին էությունը, այլ նայե՛ք իշխանությանը: Եթե նա որևէ մեկի գլուխը կտրում է, ուրեմն պետք է ենթադրել, որ մարդը մեծագույն չարագործ է»<sup>4</sup>:

Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Արդյունքում, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության հանցափորձի համար նշանակված պատիժը շատ հաճախ համապատասխանում է ավելի նվազ ծանրության աստիճանի համար սահմանված պատժաչափին, սակայն, հիմք ընդունելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը միայն, գործնականում այն որակվում է որպես առանձնապես ծանր հանցագործություն՝ օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության հետևանքով:

Միջազգային իրավական կարգավորման բացակայության պարագայում միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հարցը միանշանակ կարգավորված չէ նաև մի շարք այլ երկրներում ևս:

Որոշ երկրներ իրենց քրեական օրենսգրքերում հստակ սահմանում են, որ հանցավորձը և հանցագործության նախապատրաստությունը չեն կարող համարվել ավելի նվազ ծանրության հանցագործություններ, քան ավարտված հանցագործությունը: Մասնավորապես, Էստոնիայի և Գերմանիայի քրեական օրենսգրքերով սահմանվում է, որ հանցավորձը, ինչպես նաև այլ մեղմացուցիչ հանգամանքները չեն կարող նվազեցնել հանցագործության ծանրության աստիճանը<sup>5</sup>:

Այս մոտեցումն առկա է նաև որոշ տեսաբանների մոտ, որոնք այն կարծիքին են, որ հանցավորձի և հանցագործության նախապատրաստության համար կարող է նշանակվել նույն պատիժը, ինչը որ ավարտված հանցագործության համար է սահմանված և հանցավորձը կամ հանցագործության նախապատրաստությունը պետք է որակվեն որպես ավարտված հանցագործության ծանրության հանցագործություն: Որպես այս տեսակետի հիմնավորում՝ տեսաբանները հիմք են վերցնում «բարոյական վնասը»: Հանցավորձի և հանցագործության նախապատրաստության ժամանակ, անձը դրսևորում է այն հանցավոր մտադրությունը և կատարում է այն գործողությունները, որոնք ուղղված են կոնկրետ հանցագործությունը կատարելուն, հետևաբար անհրաժեշտ է նրանց համար սահմանել նույն պատիժը<sup>6</sup>:

Սակայն, այս մոտեցման ընդդիմախոսները արդարացիորեն նշում են, որ հանցագործության ծանրությունը որակելիս և պատիժ նշանակելիս, պետք է հաշվի առնել ոչ միայն «բարոյական վնասը», այլ նաև մի շարք այլ հանգամանքներ, ինչպես օրինակ՝ հանցագործությամբ պատճառված փաստացի վնասը, արարքի հանրային վտանգավորությունը, հանցագործությունն ավարտին չհասցնելու հանգամանքները, ինչպես նաև հանցագործի անձնային հատկանիշները: Մեկ այլ հանգամանք ևս էթե հանցավորձի կամ հանցագործության նախապատրաստության համար սահմանվի հավասար պատիժ, ինչ որ ավարտված հանցագործության համար, ապա «հանցավորձ», «հանցագործության նախապատրաստություն» հասկացությունները՝ իրենց բոլոր իրավական հետևանքներով հանդերձ, այլևս իմաստազրկվում են (սա վերաբերվում է նաև հանցագործության կազմակերպիչին, դրոյիչին և օժանդակողին):

Բացի այդ, հանցավորձի և հանցագործության նախապատրաստության համար նվազ պատիժ նշանակելը և որպես ավելի նվազ ծանրության

հանցագործություն որակելը բխում է նաև կանկրետ երկրի քրեական ու մասնավորապես, պատժիչ քաղաքականությունից և այն նպատակներից, որոնք դրված են այդ երկրում իրականացվող քրեական քաղաքականության հիմքում:

Այս մոտեցումը որդեգրված է ԱՄՆ-ի մի շարք նահանգների կողմից, որոնց քրեական օրենսգրքերում հստակ սահմանված է, որ հանցավորձը և հանցագործության նախապատրաստությունը որակվում են որպես մեկ աստիճանով նվազ ծանրության հանցագործություն, քան ավարտված հանցագործությունը (օրինակ՝ Տեխաս, Կոնեկտիկուտ, Ինդիանա և այլն):

Նպատակահարմար է օրենսդրական համապատասխան փոփոխությամբ հանցավորձը կամ հանցագործության նախապատրաստությունը սահմանել որպես ավարտված հանցագործություններից նվազ ծանրության հանցագործություն, ինչը բխում է նաև այսօր երկրում իրականացվող բարեփոխումներից և հանդիսանում է ևս մեկ քայլ դեպի քրեական համակարգում մարդասիրության սկզբունքի ամրապնդումը:

Քրեական քաղաքականությանն անդրադառնալիս, ներկայումս պետք է նաև հաշվի առնել տնտեսական արդյունավետության գործոնը: Ինչպես արդարացիորեն նշում է Թոմաս Բիտտները. «երկիրը չունի անսահմանափակ քանակությամբ ռեսուրսներ, որպեսզի հանցավորձի և ավարտված հանցագործության համար նշանակի նույն խստության պատիժ» (THOMAS BITTNER “Punishment for Criminal Attempts: A Legal Perspective on the Problem of Moral Luck” CANADIAN JOURNAL OF PHILOSOPHY *Punishment for Criminal Attempts* 5511, Volume 38, Number 1, March 2008):

Բացի այդ, հանցավորձը կամ հանցագործության նախապատրաստությունը, որպես ավարտված հանցագործությունից նվազ ծանրության հանցագործություն սահմանելը (նույն ձևով հիմք ընդունելով օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժաչափը), ոչ միայն կհստակեցնի կոնկրետ հանցագործության տեսակը՝ դրա նախապատրաստության կամ վորձի դեպքում, այլ նաև հնարավորություն կտա լուծելու նման դեպքերում դատապարտված անձի նկատմամբ պատժի նշանակման և պատժի կրման հետ կապված մի շարք խնդիրներ: Մասնավորապես, որպես հանցագործության դասակարգման իրավական հետևանք կարևոր է նշել, որ հանցագործության տեսակները հաշվի են առնվում ռեցիդիվի տեսակը գնահատելիս, քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամ-

կետները, դատվածության մարման ժամկետները որոշվում են ըստ հանցագործությունների տեսակների, քրեական պատասխանատվությունից և պատժից կարող է ազատվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը և այլն :

Նշանակված պատժի կրման համար ուղղիչ հիմնարկի տեսակը, որով էլ պայմանավորված, պատժի կրման կարգն ու պայմանները, որոշելիս, հիմք է հանդիսանում հանցագործության ծանրության աստիճանը (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 100-րդ հոդված): Հետևաբար, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության փորձի համար առաջին անգամ դատապարտված անձը, պատիժը կրում է ոչ թե կիսաբաց, այլ կիսափակ ուղղիչ հիմնարկում: Գրանով իսկ՝ պատժի անհատականացման սկզբունքի կիրառումը գործնականում դառնում է խաթարված:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը ևս անմիջականորեն կապված են հանցագործության ծանրության աստիճանի հետ (Օրենսգրքի 76-77-րդ հոդվածներ): Այսինքն, առանձնապես ծանր հանցագործության փորձի համար դատապարտված անձը, պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար, պետք է կրի նշանակված պատժի ոչ

պակաս, քան երկու երրորդը, իսկ ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

Ավելին, հարցի օրենսդրական կարգավորումը բխում է նաև Օրենսգրքի գրքի տրամաբանությունից: Եթե Օրենսգրքով հստակ սահմանվում են հանցագործության տեսակները՝ հիմք ընդունելով կոնկրետ պատժի չափը, ապա հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը պետք է հստակ դասակարգվեն հենց պատժաչափից էլ ելնելով, քանի որ Օրենսգրքի 65-րդ հոդվածով հստակ սահմանվում է պատժաչափ թե հանցափորձի, և թե հանցագործության նախապատրաստության համար:

Ի վերջո, հանցափորձի և հանցագործության նախապատրաստության օրենսդրորեն հստակ դասակարգումն անհրաժեշտ է նաև Օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի (արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով. քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է) ամբողջականությունն ու լիարժեքությունն ապահովելու նպատակով:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 18.04.2003, ՀՕ-528-Ն:
2. «ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս» Գասագիրք ԲՈՒՀ-երի համար, խմբ. Գ.Ս. Ղազինյան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 2006:
3. Միքայել Գրիգորյան. «Քրեական իրավունք» ուսումնական ձեռնարկ(ընդհանուր մաս), «Հրագրան» հրատարակչություն, Երևան 2003:
4. THOMAS BITTNER “Punishment for Criminal Attempts: A Legal Perspective on the Problem of Moral Luck” CANADIAN JOURNAL OF PHILOSOPHY Punishment for Criminal Attempts 5511, Volume 38, Number 1, March 2008
5. Уголовное право Российской Федерации. Общая часть, Учебник, Московская Государственная Юридическая Академия, Москва Высшее Образование серия основана в 1996 г.
6. Study Guide to Wayne LeFave: “Crim Law Hornbook” 5th edition, pg.15.
7. Joel Feinberg, “Equal Punishment for Failed Attempts”, Arizona Law Review 37 (1995) 117-33.
8. Andrew Ashworth, ‘Criminal Attempts and the Role of Resulting Harm’, Rutgers Law Review 19 (1988) 725-72.
9. Таганцев Н.С. Русское уголовное право: Лекции. Часть Общая, Т 1. Москва 1994.
10. Наумов А.В. Российское уголовное право. Общая часть. Курс лекций. Москва, 1997.
11. Thaddeus Metz, ‘Arbitrariness, Justice, and Respect,’ Social Theory and Practice 26 (2000) 25-45.
12. Bernard Williams, ‘Moral Luck,’ in Moral Luck (Cambridge: Cambridge UP 1983), 29-30.
Չինաստանում գաղափարական այդ համակարգը միշտ կարևորվել է իր դերակատարմամբ, ընդհուպ մինչև՝ «մարդկային հասարակության պատմական զարգացման օրենքները բացահայտող և ճշգրիտ ու հզոր կենսական ուժով օժտված դրույթներ բովանդակող գաղափարախոսության»<sup>17</sup>:

Ինչ վերաբերում է այսպես կոչված՝ **«Մաո Յզեդունու գաղափարներին»**, ապա անհրաժեշտ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ այն ոչ միանշանակ է մեկնաբանվում<sup>18</sup>: Ընդ որում, շատ հաճախ աղավաղվում է բուն եզրույթի իմաստաբանական նշանակությունը՝ ընկալվելով որպես կոնկրետ «անձի» կամ «անհատի» գաղափարների և հայացքների ամբողջություն:

Ի տարբերություն այս մոտեցման, չինական մասնագիտական աղբյուրագիտության մեջ այդ եզրույթը գործածվում է առավելապես պետության քաղաքական գաղափարախոսության ու պաշտոնական հայացքների համակարգի համատեքստում: Այդպիսի դիրքորոշում՝ իր հստակ ամրագրումն է ստացել, օրինակ, Չինաստանի Կոմունիստական Կուսակցության կանոնադրությունում, ըստ որի՝ «Մարքսիզմ-լենինիզմի հիմնական դրույթները միավորելով չինական հեղափոխության կոնկրետ պրակտիկայի հետ՝ չին կոմունիստները՝ հանձին իրենց գլխավոր ներկայացուցչի՝ ընկեր Մաո Յզեդունու, ստեղծել են «Մաո Յզեդունու գաղափարները»: «Մաո Յզեդունու գաղափարները»՝ որպես Չինաստանում մարքսիզմ-լենինիզմի կիրառման և զարգացման արդյունք, իրենից ներկայացնում է որպես ճշգրիտ ու պրակտիկայով հաստատված չինական հեղափոխության և չինարարության տեսական սկզբունքների ու ընդհանրացված փորձի, ինչպես նաև Չինաստանի կոմունիստական կուսակցության հավաքական (կոլեկտիվ) բանականության ամբողջություն»:

**«Դէն Սյաոպինի» տեսությունը** չինական մասնագիտական գրականության մեջ մեկնաբանվում է որպես մարքսիզմ-լենինիզմի հիմնական դրույթների՝ ժամանակակից Չինաստանի պրակտիկայի հետ միավորման և դրսևորման արդյունք: Այն հռչակվել է որպես Չինաստանի պետական գաղափարախոսական համակարգի տարր և «իրենից ներկայացնում է «Մաո Յզեդունու գաղափար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ների» շարունակությունն ապահովող գաղափարախոսության ուղղություն ՉԺՀ պատմական նոր պայմաններում»<sup>19</sup> :

«Դէն Սյաոպինի» տեսությունը ձևավորվել է ՉԺՀ-ի հռչակումից հետո ընկած ժամանակաշրջանում դրական և բացասական փորձի ընդհանրացման արդյունքում, իսկ 1997 թվականից հետո այն վերածվեց բազմապլանային «ավարտուն գիտական համակարգի»<sup>20</sup> : Չինաստանի սահմանադրականագետները հատուկ ուշադրություն են դարձնում դրա հիմնական հայեցակետերի կենսագործմանը, այդ թվում՝ այդ սահմանադրականագիտության տեսության զարգացման, քաղաքական գաղափարախոսության և տնտեսագիտական փիլիսոփայության մասերով: Տեսության գործնական նշանակությունը պայմանավորված է երկու հիմնական տարրերի համադրմամբ, դրանք են՝ առաջին՝ պետական ու կուսակցական շինարարության փոխարինումը տնտեսության արդյունավետ կառավարմամբ, երկրորդ՝ անցում տնտեսական բարեփոխումների և դրանց հրապարակայնության ապահովման:

Երկրի իրավական քաղաքական կյանքում «Դէն Սյաոպինի» տեսության հիմքում ընկած չորս հիմնական սկզբունքները գրեթե համընկնում է Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներին: Դրանք են՝ սոցիալիստական կարգի սահմանում, ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի հաստատում, Չինաստանի Կոմունիստական Կուսակցության ղեկավար դերի ապահովում և «մարքսիզմ-լենինիզմի» հետ «Մաո Յզեդունու» գաղափարների սերտաճում: Պատահական չէ, որ հենց այս տեսության կենսագործմամբ ուրվագծվեց «չինական յուրահատկությամբ» սոցիալիզմ կառուցելու պետական քաղաքականության ռազմավարությունը:

Ինչ վերաբերում է **«Երեք ներկայացուցչությունների» գաղափարախոսությանը**, ապա հարկ է նշել, որ դրա հիմքում ընկած է Չինաստանի կոմունիստական կուսակցության դերի վերաբերյալ յուրահատուկ գաղափար: Եթե նախկինում կուսակցության դերը պայմանավորված էր միայն բանվոր դասակարգի առաջնորդմամբ կամ ղեկավարմամբ, ապա այս գաղափարախոսության ներդրմամբ Չինաստանի կոմունիստական կուսակցության գաղափարական հիմքում ընկած են հետևյալ երեք ուղղությունները. ա) առաջավոր արտադրողական ուժեր, բ) առաջադիմական հոգևոր մշակույթ, գ) ժո-

ղովրդական զանգվածների արմատական շահեր<sup>21</sup> : Ընդ որում, այս գաղափարախոսությունն ուղղված է «մարքսիզմ-լենինիզմի», «Մաո Յզեդունու» գաղափարների ու «Դէն Սյաոպինի» տեսության միասնության, շարունակականության ու զարգացման ապահովմանը:

Միաժամանակ, անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ ՉԺՀ սահմանադրական կարգի հիմունքներում ուղղակիորեն այլ մեկնաբանությամբ ու նշանակությամբ է ներկայացվում ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման համընդհանուր սկզբունքը: Այսպես, Սահմանադրության 4-րդ հոդվածը սահմանում է, որ բոլոր ազգություններն իրավահավասար են, միաժամանակ, արգելվում է խտրականությունն ու ճնշումը ցանկացած ազգության նկատմամբ, ինչպես նաև ազգությունների համախմբվածությանն ու նրանց պառակտմանն ուղղված ցանկացած գործողության կատարումը: Ընդ որում, Սահմանադրության նույն հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ Չինաստանում գոյություն ունի շրջանային ազգային ինքնավարության համակարգ, սակայն՝ առանց ինքնավարության հաստատման իրավունքի:

Այսպիսով, ընդհանրացված կարգով կարելի է ներկայացնել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրական կարգի հիմնական այն սկզբունքները, որոնք ինքնին ունեն իրենց դրսևորման առանձնահատկությունները.

1. Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը հանդիսանում է իրավական սոցիալիստական պետություն,
2. Չինաստանում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի և տարբեր աստիճանների ժողովրդական ներկայացուցիչների տեղական ժողովների միջոցով,
3. պետությունը հանդիսանում է բանվոր դասակարգի կողմից գլխավորող և բանվորների ու գյուղացիների դաշինքի վրա հիմնված ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրա,
4. սոցիալիստական կարգը ճանաչվում է որպես Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնական կարգ,
5. ՉԺՀ-ի Սահմանադրության մակարդակում ամրագրվել է գաղափարատեսական բաղադրիչը կամ պետության պաշտոնական գաղափարախո-

www.lawinstitute.am

սությունը,

6. Չինաստանի կոնունիստական կուսակցության՝ որպես ղեկավար քաղաքական ուժի անբազմամբ Չինաստանի սահմանադրական կարգում հաստատվում են այսպես կոչված «կուսակցական պետության» տարրեր,

7. պետական մարմինների կազմակերպման հիմքում ընկած է «դեմոկրատական ցենտրալիզմ» սկզբունքը:

Այսինքն, Չինաստանում սահմանվել են սահմանադրական կարգի այնպիսի հիմնական սկզբունքներ, որոնցում թեև զուգորդվում են ժողովրդավարական ու ավտորիտար ռեժիմների տարրեր, այնուամենայնիվ դրանք կրում են ընդհանրական բնույթ և ուղղվում ժողովրդի և պետության ինքնիշխանության արժեքավորմանը:

<sup>1</sup> Гудошников Л. М. Эволюция государственного строя КНР // Государственный строй и важнейшие социально-экономические проблемы КНР (Тезисы международной научной конференции 5-7 апреля 1982 г.). М.: Институт Дальнего Востока АН СССР, 1982. С. 6., Чупанов А.С., Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), Автореф. дисс. канд. юрид. наук. М.: 2006. С. 11 և ուրիշներ:

<sup>2</sup> Մանրամասն տես՝ Юридический энциклопедический словарь / Под общ. ред. Крутских Б.Е. М.:Инфра-М, 2003. С. 70, Арутюнян Г.Г., Баглай М.В., Конституционное право: Энциклопедический словарь. М.: Норма, 2006. С. 112 և ուրիշներ:

<sup>3</sup> Марченко А.Н. Государственный строй: политико-правовой аспект // Конституционное и муниципальное право, 2011, выпуск 4. С. 13.

<sup>4</sup> Конституционное право России: Энциклопедический словарь / Под общей ред. Червонюка В. И. - М.: Юрид. лит., 2002. С. 63.

<sup>5</sup> Պողոսյան Վ.Վ. Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան, Երևան, 2001, էջ 201:

<sup>6</sup> Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ առավել գործածական է «սահմանադրական կարգ» հասկացությունը, թեև այն և «պետական կարգ» հասկացությունը նույնական չեն: Այս հասկացությունների վերաբերյալ առկա է այսպես կոչված ռացիոնալիստական (բանական) մոտեցումը, ըստ որի. 1) «պետական կարգ» և «սահմանադրական կարգ» հասկացությունների միջև տարբերությունը պայմանավորված է պետությունում սահմանադրության առկայությամբ, 2) «պետական կարգը» ավելի լայն հասկացություն է, քան սահմանադրական կարգը, ինչը պայմանավորված է այնպիսի հատկանիշների առկայությամբ, ինչպիսիք են՝ պետության ինքնիշխանություն, իշխանությունների տարանջատում, մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների անխախտելիության և անօտարելիության հնարավոր բացակայություն և այլն: Անհրաժեշտ է նաև նշել պրոֆեսոր Վ. Ի. Չերվոնյուկի մոտեցումը, ով «պետական կարգը» չի առանձնացնում «սահմանադրական կարգից», միայն սահմանափակվելով սոսկ դրանց ոչ նույնականության արձանագրմամբ: Տես՝ Борисин А. Б. Государственный строй // Большой юридический энциклопедический словарь. М.: Книжный мир, 2005. С. 273, Конституционное право России: Энциклопедический словарь / Под общей ред. Червонюка В. И. - М.: Юрид. лит., 2002, С. 63, Марченко А.Н. Государственный строй: политико-правовой аспект // Конституционное и муниципальное право 2011, выпуск 4, Арутюнян Г.Г., Баглай М.В. Նույն աշխատության մեջ, էջ 224 և ուրիշներ:

<sup>7</sup> Арутюнян Г.Г., Баглай М.В. Նույն աշխատության մեջ, էջ 307:

<sup>8</sup> Конституция Китайской Народной Республики / Конституции государств Азии. В 3 томах. Том 3. Дальний Восток / Под ред. Хабриевой Т.Я. М.: 2010, 1040 р., տես նաև՝ Համառոտ Չինաստանի մասին, Եր., 2009, էջ 8:

<sup>9</sup> Советский энциклопедический словарь / Гиляров М. С., Гусев А. А., Кнунянц И. Л. и др. / Гл. ред. Прохоров А. М. М., 1985. С. 1242-1243.

<sup>10</sup> Устав Коммунистической партии Китая. “Новый Китай” (Синьхуа), 2002.

<sup>11</sup> Առանձին հիմնադիր փաստաթղթերում օգտագործվում է նաև «Ժողովրդական ժողովրդավարական ղիկապետություն»: Տես՝ Законодательные акты Китайской Народной Республики. М., 1952, էջ 35:

<sup>12</sup> Законодательные акты Китайской Народной Республики. М., 1952. С. 50.

<sup>13</sup> Ленин В.И. К истории вопроса о диктатуре, Т. 41. С. 383-384.

<sup>14</sup> Марксистско-ленинская общая теория государства и права. Исторические типы государства и права. М., 1971. С. 593.

<sup>15</sup> Конституция и основные законодательные акты Китайской Народной Республики. М., 1985. С. 29.

<sup>16</sup> Материалы XII Всекитайского съезда Коммунистической партии Китая. М., 1986. С. 46.

<sup>17</sup> Дун Юньху. Важный шаг в развитии прав человека в Китае. // Материалы Агентства Синьхуа 09.01.2006.

<sup>18</sup> Մասնագիտական գրականության մեջ օգտագործվում է նաև «Մաո Յզդունյան գաղափարներ» ձևակերպմամբ,

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդ որում, դա ընկալվում է որպես Մաո Ցզեդունու հայացքների ու գաղափարների ոչ միայն ամբողջություն, այլ նաև՝ համակարգ: Տես նաև՝ Шкиттина Д.А. Особенности конституционно-правового регулирования экономической системы Китайской Народной Республики. Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 2011, Игнатенко Г.В., Система представительных учреждений Китайской Народной Республики. Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 1956, Чупанов А.С. Государственный строй Китайской Народной Республики (конституционно-правовой аспект), дисс. канд. юрид. наук. М.: 2006, Куманин Е.В. Юридическая политика и правовая система Китайской Народной Республики. Автореф. дис. ... д-ра юрид. Наук, М., 2001, Степанова Т.В. Идентификация правовой системы Китайской Народной Республики: вопросы теории. Автореф. дис. ... канд. юрид. Наук, М., 2002:

<sup>19</sup> Устав Коммунистической партии Китая. 14.11.2002. С. 16.

<sup>20</sup> Չինաստանում Մաո Ցզեդունու գաղափարների և Դեն Սյաոպինի տեսության դիտարկումը դրանց ամբողջականության մեջ կոչվում է այսպես կոչված՝ «չինականացված մարքսիզմ»: Տես նաև՝ Ганшин В.Г. Китай и его соседи: на пути к гражданскому обществу, М.: Институт Дальнего Востока РАН, 2004, С. 122-139:

<sup>21</sup> Այս գաղափարախոսությունն առաջին անգամ առաջ է քաշվել ՉԿԿ գլխավոր քարտուղար Յյան Ցզենինի կողմից 2000 թվականի մայիսի 18-ին հրատարակված «XXI դարի «երեք ներկայացուցչությունների» գաղափարը» հոդվածում:

### РЕЗЮМЕ

#### *Основы и особенности конституционного порядка Китайской Народной Республики*

В представленной работе исследованы основы и особенности конституционного порядка в контексте Конституции Китайской Народной Республики 1982 года. В итоге автор пришел к выводу, что в современном Китае определены основные принципы конституционного порядка, в которых, несмотря на то, что элементы демократического режима сочетаются с элементами авторитарного режима, тем не менее они имеют всеобщий характер и направлены на достойному уважению суверенитета народов и государства.

Ключевые слова: Конституция Китайской Народной Республики, конституционный порядок, основы конституционного порядка, принципы конституционного порядка.

### SUMMARY

#### *Principles and features of the constitutional order of the People's Republic of China*

In the present paper the principles and features of the constitutional order in the context of the Constitution of the People's Republic of China in 1982. As a result, the author came to the conclusion that in contemporary China, the main principles of the constitutional order, in which, despite the fact that the elements of a democratic regime combined with elements of the authoritarian regime, however, they are universal in nature and aimed at a decent respect for the sovereignty of nations and states.

Keywords: Constitution of the People's Republic of China, the constitutional order, the foundations of constitutional order, the principles of constitutional order.

### ՍԱՀԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի դասախոս,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ



## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

Հոդվածում քննարկման առարկա է հանդիսանում մրցույթի՝ թեստավորման և հարցազրույցի փուլերի ոչ թե ամբողջական, այլ հատվածային հիմնախնդիրները: Այսպես, մասնակիցը հաջորդ՝ հարցազրույցի փուլ է անցնում թեստավորման առաջադրանքների առնվազն 85 տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում:

Նշենք, որ մինչև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունումը (2011թ. փետրվարի 10)<sup>2</sup>, համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթի առաջին՝ թեստավորման փուլի հաղթող էր ճանաչվում առնվազն 75 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցը կամ մասնակիցները: Օրենքն ընդունելուց հետո նվազագույն շեմը բարձրացվեց 10 տոկոսով՝ կազմելով 85: Անկասկած, դրական փոփոխություն է, սակայն, կարծում ենք՝ ոչ լիարժեք:

Այսպես, հանրային ծառայության որոշ տեսակներում օրենքն ընդունելու պահից սահմանվել է, որ մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները<sup>3</sup>:

Հատկապես կարևորում ենք քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության նմանության հարցերը, քանի որ թույլատրվում է մի ծառայությունից անցումը մյուս ծառայության՝ օրենքով սահմանված կարգով:

Այսպես, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 14 հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները: Բայց չէ՞ որ երկու ծառայությունների թափուր պաշտոններ զբաղեցնողների համար սահմանված է կրթական հավասար ցեմ: Ուստի, այս պարագայում, անհարկի հեշտացնել համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելը, կարծում ենք, կհանգեցնի համակարգի որակական հատկանիշների թուլացմանը, որը հետագայում կծնի նորանոր խն-

դիրներ դեռևս լիովին չկայացած համայնքային ծառայության ինստիտուտի զարգացման և կատարելագործման համար: Կարծում ենք՝ օրենսդիրն այս հարցում ցուցաբերում է անհարկի խտրականություն: Մյուս կողմից օրենքի իջեցված դրույթը լրիվ նպատակահարմար է կիրառել համայնքային ծառայության կրտսեր խմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթում:

Չէ՞ որ կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար բարձրագույն կրթության պահանջ սահմանված չէ, թեև կան ծառայություններ, ուր կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողներին ևս ներկայացված է բարձրագույն կրթության պահանջ:

Այսպես, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության կրտսեր խմբի պաշտոնի հավակնող քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն (10-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետ): Մեր կարծիքով, կրտսեր խմբի ոչ բոլոր պաշտոնների համար պետք է պարտադիր լինի բարձրագույն կրթության պահանջը, քանի որ այդ պաշտոններում հաճախ պարտականությունները կրկնվող և տեխնիկական բնույթ են կրում, իսկ նոր մտեցումների կամ գաղափարների մշակման հնարավորությունները՝ սահմանափակ: Թեև տեսության մեջ այս հարցի վերաբերյալ պաշտպանվում է այլ տեսակետ: Այսպես, իրավագետներ Ա. Վ. Ռոզոժինը և Ա. Վ. Տիմոֆեևը կարծում են, որ պաշտպանության աշխատակազմի ծառայողներին պետք է առաջադրվեն ավելի բարձր մասնագիտական և որակական պահանջներ, քան նախարարությունների կամ այլ պետական մարմինների աշխատակիցներին: Դա պարզաբանվում է նրանով, որ օրինագծի ստեղծման աշխատանքներն ավելի բարդ և դժվար<sup>4</sup> են, քան արդեն ընդունված օրենքները կիրառելը: Համաձայն լինելով հեղինակների հետ՝ կարծում ենք՝ արդարացված է համայնքային ծառայության կրտսեր խմբին ներկայացվող պահանջների մեջ բարձրագույն կրթության պահանջի բացակայությունը՝ բավարարվելով միայն միջնակարգ կրթության առկայությամբ (օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության «գ» կետ):

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

Եթե քաղաքացիական և համայնքային ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար սահմանված չէ կրթական նման բարձր ցենզ, ապա համաչափ է արդյոք, որ կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողներն էլ ճիշտ պատասխանեն 85-90 տոկոս հարցերին, բարձրագույն խմբի թափուր պաշտոնների համար հավականող թեկնածուներն էլ: Դիշտ է, օրենքում տրված է ժամանակային և հարցերի (խնդիրների) քանակի տարբերություններ, սակայն բովանդակային առումով, տարբերություններ չկան, քանի որ բոլոր խմբերի համար հարցաշարերն կազմվում են նույն համամասնությամբ:

Երկրորդ, չնոռանանք, որ ՀՀ վարչատարածքային բաժանումը խիստ անհավասար է. համայնքները միմյանցից տարբերվում են իրենց մարդկային, ֆինանսական կարողություններով, որը հանգեցրել է մի իրավիճակի, որ կան բազմաթիվ համայնքներ, ուր կան համայնքային ծառայության թափուր պաշտոններ, որոնք, հիմնականում, չեն համարվում՝ օրենքով նշված պահանջներին համապատասխանող կադրեր չլինելու պատճառով: Այսինքն, լրացուցիչ դժվարիտարածություն չենք տեսնում:

Երրորդ, սահմանելով ավելի ցածր տոկոս, քան քաղաքացիական ծառայությունում է՝ կհանգեցնի մի իրավիճակի, որ համայնքային ծառայողներն իրենց պատրաստվածության մակարդակով կզիջեն քաղաքացիական ծառայողներին, որն էլ իր հերթին կհանգեցնի նրան, որ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթին, որին կարող են մասնակցել մասնավորապես համայնքային ծառայողները, վերջիններիս հաղթելու հավանականությունն ավելի ցածր կլինի, և հակառակը՝ համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթին հաղթելու ավելի մեծ հնարավորություն կունենան քաղաքացիական ծառայողները:

Այս ամենի հետևանքով ստեղծվել է մի իրավիճակ, որ քաղաքացիական ծառայությունը «ուրախ» չէ իր շարքերում ընդունել համայնքային ծառայողներին՝ ստեղծելով օրենսդրական խոչընդոտներ: Բանը նրանում է, որ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնի անձնագրում «վետո» է դրված համայնքային ծառայողների համար՝ շատ քիչ տեղ թողնելով գլխավոր խմբի համար: Օրենքի 10-րդ հոդվածի «բ» կետում հստակ սահմանված է, որ գլխավոր պաշտոն զբաղեցնելու համար պետք է ունենալ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական պաշտոններում աշխատանքային ստաժ՝ բացառելով ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռաֆերենտների հայեցողական պաշտոնները: Փաստորեն, ըստ քաղաքացիական ծառայության մասին օրենքի, համայնքի ղեկավար

րի աշխատակազմում հայեցողական պաշտոնը հավասարաբեռ չէ հայեցողական այլ պաշտոններին:

Մյուս օրենսդրական խոչընդոտը կապված է անձնական գործերի վարման կարգի հետ: Այսպես, համաձայն ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի «Քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշման<sup>5</sup> 5-րդ կետի՝ այլ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելիս կամ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելիս անձնական գործը փոխանցվում է նոր աշխատավայր՝ համաձայն ընդունման-հանձնման ակտի: Իսկ արդեն 14-րդ կետում սահմանված է, որ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողի անձնական գործը (բացառությամբ աշխատանքային գրքույկի) առնվազն հինգ տարի պահպանվում է համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումում, որից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է արխիվ, իսկ քաղաքացիական ծառայողի քաղաքացիական ծառայության նոր պաշտոնում նշանակվելու դեպքում՝ տվյալ համապատասխան մարմին (ընդգծումներն իմն են՝ Ս.Մ.):

Քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թ. ընդունված այս որոշմանը «հակահարված» տվեց համայնքային ծառայության կառավարության լիազորած մամինը՝ 2006թ. ընդունված «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգը սահմանելու մասին» N 20-Ն հրամանի՝ 14-րդ կետում սահմանելով նույն նորմը, այն է՝ համայնքային ծառայության պաշտոնից ազատված անձի անձնական գործը (բացառությամբ աշխատանքային գրքույկի) առնվազն հինգ տարի պահպանվում է համապատասխան աշխատակազմում, որից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվում է արխիվ, իսկ այլ աշխատակազմում համայնքային ծառայության նոր պաշտոնում նշանակվելու դեպքում՝ տվյալ համապատասխան մարմին:

Այսպիսով, Քաղաքացիական ծառայության խորհուրդը հրաժարվում է քաղաքացիական ծառայողի անձնական գործը ուղարկել նրա հետ՝ քաղաքացիական ծառայության համակարգից այլ համակարգ ծառայության անցնելու դեպքում: Փաստորեն, նախկին քաղաքացիական ծառայողները կանգնում են երկրնտրանքի առջև. կա՛ն ամեն ինչ սկսել նորից, կա՛ն չօգտվել օրենսդրության ընդձեռնած հնարավորությունից. ասել կուզի տեղափոխվել այլ համակարգ ծառայության:

Սա էլ իր հերթին կհանգեցնի նրան, որ օրենքով երաշխավորված շարժունությունը կդանդաղի, կամ էլ իսպառ կվերանա, որը, կարծում ենք, չի բխում հանրային ծառայության շահերից:

www.lawinstitute.am

Վերջապես, համայնքային ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնողները, կարծում ենք, պետք է կարողանան քննություն բռնել և հաղթահարել 90 տոկոսի արգելապատնեշը, քանի որ վերջիններս ավելի փորձառու են, բանիմաց, ունեն ավելի երկար աշխատանքային և մասնագիտական ստաժ և ծառայում են ՀՀ երեք խոշոր քաղաքների՝ Երևանի, Գյումրիի և Վանաձորի քաղաքապետարանների աշխատակազմերում :

Այսպիսով, առաջարկում ենք «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք ունեն բարձրագույն պաշտոնների խմբի համար թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին, գլխավոր և առաջատար պաշտոնների խմբի համար՝ 85, իսկ կրտսեր խմբի համար՝ 75 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները»:

Նրանք, ովքեր հաղթահարում են թեստավորման փուլի արգելքը, շարունակում են մնալ համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասնակից և համապատասխան թափուր պաշտոնի հավակնորդ՝ ձեռք բերելով հարցազրույցին մասնակցելու իրավունք:

Հարցազրույցի նպատակն է ստուգել մասնակիցների համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում գործնական կարողությունները:

Մասնակցի հետ հարցազրույցն զնահատվում է 5 բալային համակարգով: Նվազագույն դրական գնահատականը 3 բալն է:

Մրցույթի հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի՝ գնահատմանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմից դրական բալերով գնահատված այն մասնակիցը, որի ստացած դրական բալերի հանրագումարը առավելագույնն է:

Եթե երկու կամ ավելի մասնակիցներ հավաքել են դրական բալերի առավելագույն հավասար հանրագումար, ապա նրանցից հաղթող է ճանաչվում թեստային փուլում առավել բարձր միավորներ հավաքած մասնակիցը (առավել բարձր հավասար միավորներ հավաքած մասնակիցները): Այս դեպքում, չնայած չի բացառվում երկու և ավելի թվով հաղթողներ լինելու հավանականությունը, այնուամենայնիվ, հնարավորություն է ստեղծվում չկրկնելու չարդարացված իրողությունը:

Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, ինչպես նաև գրավոր բողոքի բացակայության դեպքում, մրցութային հանձնաժողովից ստացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) վերաբերյալ հանձնաժողովի նախագահի և լիազոր անձի կողմից ստորագրած եզրակացությունը աշխատակազմն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու

իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, համայնքային ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է համապատասխան պաշտոնում:

Չնայած «Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով բավականին բարդացել է մրցույթում մեկից ավելի մասնակիցների հաղթանակ տանելու հնարավորությունը, այնուամենայնիվ, պրակտիկայում հանդիպում են նման դեպքեր: Կարծում ենք՝ օրենքի բացթողում կարելի է համարել այն դրույթը, որ համայնքային ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է համապատասխան պաշտոնում՝ առանց նշելու՝ ինչ սկզբունքի կամ սկզբունքների հիման վրա: Սա կարող է սուբյեկտիվ դրսևորումների տեղիք տալ՝ հաշվի առնելով մեր հասարակության մեջ բավականին ամուր բարեկամական, խնամիական, ընկերական հարաբերությունները:

Մինչ այդ, կցանկանայինք պարզել՝ արդյո՞ք օրինաչափ է վերջնական որոշում կայացնելու իրավունքը վերապահել մեկ անձի, թե՛ ոչ:

Եթե այո, ուրեմն մի՞թե նա, ով կայացնում է վերջնական որոշում, ծանոթ է մասնակիցների գործնական կարողություններին: Եթե ոչ, ուրեմն առանց դրանք իմանալու ինչպես է պարզում՝ հաղթող մասնակիցներից ո՞վ է ամենաարժանավորը:

Ինչ վերաբերում է առաջին հարցադրմանը, ապա արդարացի՞ է արդյոք մրցութային հանձնաժողովի՝ որպես կոլեգիալ մարմնի, կատարած ընտրությունը վերահաստատել և/կամ նրա ընդունած որոշումն ղիտարկել իբրև խորհրդատվական բնույթ ունեցող: Այսինքն, եթե մրցույթում հաղթող են ճանաչվում մեկից ավելի մասնակիցներ, ապա մրցութային հանձնաժողովը զրկված է վերջնական որոշում կայացնելու իրավունքից, այլ միայն երաշխավորում է հաղթող ճանաչված մասնակիցներին, որ նրանք կարող են զբաղեցնել համապատասխան թափուր պաշտոնը: Այսպիսով, մրցութային հանձնաժողովի որոշումը կրում է զուտ խորհրդատվական բնույթ: Եթե մրցույթի հաղթող է ճանաչվում միայն մեկ մասնակից, ապա նրան պաշտոնի կարելի է նշանակել տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից մրցութային հանձնաժողովի կայացրած որոշումը վավերացնելուց հետո:

Այսպիսով, ստացվում է մի իրավիճակ, որ մասնակիցների գիտելիքներին, տրամաբանելու, արագ կողմնորոշվելու ունակություններին քաջածանոթ մրցութային հանձնաժողովը զրկված է, իսկ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մասնակիցների վերոնշյալ հատկանիշներին ան-  
ծանոթ պաշտոնատար անձն իրավասու է նշանակ-  
կում կատարել՝ բոլորովին անհայտ սկզբունքնե-  
րով:

Երկրորդ, հաշվի առնելով այն հանգաման-  
քը, որ գլխավոր խմբի և առաջատար խմբի առա-  
ջին ենթախմբի պաշտոններում նշանակելու իրա-  
վասություն ունեցող պաշտոնատար անձ է համար-  
վում համայնքի ղեկավարը, մեր կարծիքով, սա կա-  
րող է ունենալ բացասական ազդեցություն, քանի  
որ վերջինս համարվում է քաղաքական պաշտոն  
զբաղեցնող անձ, որն էլ մասնագիտական գրակա-  
նության մեջ համարվում է համայնքային ծառայու-  
թյան՝ որպես քաղաքական ուժերի հարաբերակցու-  
թյան փոփոխությունից կամ տեղական ինքնակա-  
ռավարման մարմինների ընտրությունների արդ-  
յունքներից անկախ մասնագիտական գործունեու-  
թյան հիմնարար սկզբունքի խաթարում:

Նույնի տրամաբանական շարունակությու-  
նը քաղաքացիական ծառայությունում պաշտոննե-  
րի նշանակական գործընթացն է: Այսպես, համե-  
մատության համար նշենք, որ քաղաքացիական  
ծառայության պաշտոնների նշանակման լիազո-  
րությունների համադրումը պաշտոնների դասա-  
կարգման հիերարխիային ցույց է տալիս, որ քա-  
ղաքացիական ծառայության համակարգի ղեկա-  
վար կամ վարչական բոլոր պաշտոնները նշանակ-  
վում են համապատասխան մարմնի ղեկավարների  
կողմից, որոնք, բնականաբար, քաղաքական պաշ-  
տոններ են և քաղաքական իրավիճակի փոփոխու-  
թյամբ կարող են փոխվել: Դրա հետ մեկտեղ, եթե  
հաշվի առնենք մրցույթի արդյունքներով թեստա-  
վորման և հարցազրույցի փուլերն անցած թեկնա-  
ծուներից նշված պաշտոններում քաղաքական ղե-  
կավարների կողմից թեկնածուների թվից նշանա-  
կումների կատարման հայեցողականության հան-  
գամանքը, ապա կարելի է եզրահանգել, որ քաղա-  
քացիական ծառայության վարչական մակարդակը  
որոշ չափով ենթակա է քաղաքական ցնցումների և  
կուսակցականացման: Եթե այս ընթացակարգն  
աշխատակազմի ղեկավարների կամ բարձրագույն  
խմբի քաղաքացիական ծառայողների համար ըն-  
կալելի ու բացատրելի է, ապա կառուցվածքային  
ստորաբաժանումների՝ վարչության, քարտուղա-  
րության, բաժնի պետերի նշանակման գործում քա-  
ղաքական ղեկավարի միջնորդությունը հիմնավոր-  
ված չէ:

Այսպիսով, ստացվում է, որ տվյալ պաշտո-  
նում նշանակելու իրավասություն ունեցող պաշտո-  
նատար անձն օրենքով սահմանված կարգով նշա-  
նակումներ է կատարում համայնքային ծառայու-  
թյան համապատասխան թափուր պաշտոնում՝ ոչ  
միայն չհենվելով մրցութային հանձնաժողովի եզ-  
րակացության, այլ չնշելով, թե հատկապես ո՞ր ար-  
ժանիքի կամ ի՞նչ սկզբունքի հիման վրա է մասնա-  
կիցներից մեկին նշանակում համապատասխան  
պաշտոնին: Սա, իմ կարծիքով, կարող է հանգեցնել

համայնքային ծառայության թափուր պաշտոններ  
զբաղեցնելու հավասարության սկզբունքի խախտ-  
ման, ուստի նկարագրված ռիսկերից խուսափելու  
համար, առաջարկում ենք, համայնքային ծառա-  
յության թափուր պաշտոնի նշանակման իրավա-  
սությունը վերապահել միայն մրցութային հանձնա-  
ժողովներին, ինչպես նաև անհրաժեշտ է սահմանել  
այնպիսի չափորոշիչներ, որոնք թույլ կտան օբյեկ-  
տիվորեն մասնակիցներից միայն մեկին հաղթող  
ճանաչել՝ հաշվի առնելով բացառապես նրա ար-  
ժանիքները:

Այս տեսակետը պաշտպանվում է հայրե-  
նական մասնագիտական գրականությունում: Այս-  
պես, Ա. Խուդավերդյանը, հիմք ընդունելով քաղա-  
քացիական ծառայության անցած տարիների փոր-  
ձը, անհրաժեշտ է համարում առավելագույն միաս-  
նականացնել և ապակենտրոնացնել պետական և  
համայնքային ծառայության մրցույթային հիմունք-  
ներով աշխատանքի ընդունման գործընթացները՝  
նվազագույնի հասցնելով մեկ անձի կողմից պաշ-  
տոնի նշանակման որոշումների կայացման հնա-  
րավորությունները, ինչպես նաև ներդնել հանձնա-  
ժողովների գնահատման բալային և հանձնաժողո-  
վի կողմից մեկ թեկնածուի ընտրության համակար-  
գը՝ նվազեցնելով քաղաքական պաշտոնյաների  
դերը մասնագիտական անձնակազմի ձևավորման  
գործում<sup>10</sup>:

Այս առնչությամբ արտասահմանյան երկր-  
ների փորձի, ինչպես նաև այլ երկրների և ՀՀ  
օրենսդրության ուսումնասիրությունները ցույց են  
տալիս, թե դրանցից որն է ամենահաջողվածը, օբ-  
յեկտիվը, որը կարելի է կիրառել վերոնշյալ կոնկ-  
րետ դեպքում: Օրինակ՝ Եգիպտոսում միավորների  
հավասարության դեպքում նախապատվությունը  
տրվում է այն թեկնածուին, որն ունի ավելի բարձր  
կրթություն, կամ այդ կրթությունը ստացել է ավելի  
շուտ, քան համարժեք կրթությունն ստացած մեկ  
այլ մասնակից, իսկ եթե այս ցուցանիշներն էլ են  
հավասար, ապա մրցույթի հաղթող է ճանաչվում  
տարիքով ավագ թեկնածուն<sup>11</sup>:

Ավագության սկզբունքը կիրառվում է նաև  
Եվրոպական խորհրդարանի նախագահի ընտրու-  
թյան ժամանակ: Այսպես, Եվրոպական խորհրդա-  
րանի նախագահ ընտրվելու համար անհրաժեշտ է  
հավաքել Եվրոպական խորհրդարանի անդամների  
ձայների բացարձակ մեծամասնությունը: Եթե երեք  
անգամ անընդմեջ քվեարկություն անցկացնելուց  
հետո առաջադրված թեկնածուներից որևէ մեկը չի  
հավաքում անհրաժեշտ քանակությամբ ձայներ,  
ապա անց է կացվում ևս մեկ քվեարկություն, որտեղ  
մասնակցում են երկրորդ քվեարկության ժամանակ  
առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածու-  
ները: Չորրորդ քվեարկության ժամանակ ընտր-  
ված է համարվում առավելագույն ձայներ ստացած  
թեկնածուն: Չայների հավասարության դեպքում  
նախապատվությունը տրվում է տարիքով ավագ  
թեկնածուին<sup>12</sup>:

www.lawinstitute.am

Օրենսդրական նմանատիպ լուծում է առաջարկում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ Երևանի քաղաքապետի ընտրության կարգը սահմանելիս<sup>1</sup> : Այսպես, 44-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ երկրորդ փուլում քաղաքապետ է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ քվեաթերթիկում ընդգրկելով միայն հավասար ձայներ ստացած անձանց: Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է տարիքով ավագին:

Արտասահմանյան որոշ երկրներում միավորների հավասարության դեպքում որոշակի խումբ անձանց տրամադրվում են հատուկ արտոնություններ: Այսպես, ԱՄՆ-ում պատերազմի վետերաններին, բալերի հավասարության դեպքում, տրվում են հավելյալ միավորներ, որոնք էլ թույլ են տալիս նրանց գրավել առաջին տեղը<sup>2</sup> : Կարծում ենք՝ նմանատիպ նորմ կարելի է կիրառել համայնքային ծառայության համակարգում՝ արտոնություններ տալով արցախյան հերոսամարտի մասնակիցներին կամ զոհվածների ընտանիքի անդամներին: Ընդ որում, նմանատիպ նորմ կարելի է սահմանել ոչ միայն համայնքային ծառայության, այլև հանարային ծառայության բոլոր տարատեսակների համար:

Հետաքրքիր լուծումներ է առաջարկում ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ թեկնածուների ընտրության արդյունքում ձայների հավասարության դեպքում մանդատները բաշխելիս, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ ընտրելիս: Նման դեպքում օրենքով սահմանված կարգով անցկացվում է վիճակահանություն<sup>3</sup> :

Երկրորդ դեպքում՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր կազմից՝ հանձնաժողովի անդամների առաջադրմամբ, բաց քվեարկությամբ ընտրում է հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար: Եթե նշված պաշտոնի համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա համարվում է ընտրված՝ քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին ստանալու դեպքում, իսկ մեկից ավելի թեկնածուի պարագայում՝ առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուներ

ի միջև անցկացվում է վիճակահանություն:

Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ազգային ժողովի աշխատակազմը պետական ծառայողներով համալրելու դրույթը: Մինչև «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը (2009թ. հունիսի 11) գործում էր 2002թ. դեկտեմբերի 4-ի համանուն օրենքը, որի 13-րդ հոդվածի համաձայն՝ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթում մեկից ավելի հաղթող ճանաչվելու դեպքում թափուր պաշտոնում նշանակվում է այն թեկնածուն, որն ըստ հերթականության ունի՝

1. պետական ծառայության առավել բարձր դասային աստիճան,
2. Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության առավել երկար ստաժ,
3. քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ,
4. առավել բարձր գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում:

Նոր օրենքն ընդունելուց հետո պաշտոնների զբաղեցման նշված կարգը փոփոխության ենթարկվեց՝ կիրառելով մեզ հայտնի մեթոդը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթում հաղթող ճանաչելու իրավունքը վերապահել մրցույթային հանձնաժողովին, որն էլ մասնակիցներից կրնորի միայն մեկին՝ նախապատվության իրավունքը տալով արցախյան հերոսամարտի մասնակիցներին կամ զոհվածների ընտանիքի անդամներին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ այն մասնակցին, որը ունի համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ որն ունի համայնքային ծառայության ավելի երկար ստաժ, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ այն մասնակցին, ով տարիքով ավագ է, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ կանցկացվի վիճակահանություն:

Կարծում ենք, առաջարկված մեթոդի կիրառումը հնարավորինս կբացառի սուբյեկտիվիզմը և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթում կհաղթեն և պաշտոնի կնշանակվեն միայն արժանավորները:

www.lawinstitute.am

<sup>1</sup> Տե՛ս Տվյալ աշխատանքը շարադրելիս հիմնականում օգտագործել ենք հետևյալ իրավական ակտերը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք ՀՀՊՏ 2005.01.26/7(379), «Համայնքային ծառայության մրցույթային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգ» հաստատված ՀՀ ՏԿՆ 29.08.06 N12-Ն հրամանի առաջին հավելվածով ՀՀ ԳՏ 24/2006, 02.10.2006, «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ՏԿՆ 29.08.06 N11-Ն հրաման ՀՀ ԳՏ 24/2006, 02.10.2006, «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ՏԿՆ 29.08.06 N13-Ն հրամանի հավելված ՀՀ ԳՏ 24/2006, 02.10.2006:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2011/16 (819):

<sup>3</sup> Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (14-րդ հոդվածի 8-րդ կետ), «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքը (15-րդ հոդվածի 8-րդ կետ), «Գատական ծառայության մասին» ՀՀ օրենքը (18-րդ հոդված 3-րդ կետ), «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքը (13-րդ հոդվածի 4-րդ կետ), «Գատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքը (2004թ. փետրվարի 18) (12.1-րդ հոդվածի 7-րդ կետ) ՀՀՊՏ 2004.03.31/18(317):

<sup>4</sup> Տե՛ս Охотский Е. В., Государственная служба в парламенте: Отечественный и зарубежный опыт. М., РОССПЭН, 2002. С. 14.

<sup>5</sup> Տե՛ս ՀՀԳՏ 2002/18(104), 01.08.2002:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ ԳՏ 25/2006, 16.10.2006:

<sup>7</sup> Տե՛ս Ավելի մանրամասն տե՛ս **Մանուկյան Ս.** «Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Պետություն և իրավունք, Երևան, 2012, N1-2 (55-56), էջ 71-81:

<sup>8</sup> Տե՛ս Ревенко Л. А. Полномочия федеральных органов субъектов федерации по законодательному регулированию организации местного самоуправления// Местное самоуправление: современный российский опыт законодательного регулирования, М., 1998. С. 56. Այս դիրքորոշումը որդեգրվել է նաև Մեծ Բրիտանիայում, նշելով, որ քաղաքացիական ծառայությունը կազմակերպություն է, որը իր մեջ ընդգրկում է տղամարդկանց և կանանց, որոնք ուղղակիորեն աշխատում են Գահի նախարարություններում, ինչպես նաև հաշվետու են պառլամենտին: Փաստորեն, ուղղակիորեն ընգծվում է քաղաքացիական ծառայողների քաղաքական չեզոքությունը: Ավելի մանրամասն տե՛ս **Fry G. K.** The Changing Civil Service. London: Allen and Unwin. 1985:

<sup>9</sup> Տե՛ս **Խուդավերդյան Ս. Վ.** Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.- Եր.: Սարվարդ հրատ., 2008, էջ 198-199:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 203:

<sup>11</sup> Տե՛ս Административное право зарубежных стран. Учебное пособие / Андреева Г.Н., Васильева Т.А., Гудошников Л.М., Жданов А.А. и др.; Отв. ред.: Козырин А.Н. - М.: Спарк, 1996. С. 219-222.

<sup>12</sup> Տե՛ս rules 12 and 13 of the Rules of Procedure of European Parliament, [2005] OJ L 44/1:

<sup>13</sup> Տե՛ս ՀՀՊՏ N3 (669), 16.01.2009:

<sup>14</sup> Տե՛ս Исаенко А. Н. Реформа гражданской службы// США: Экономика, политика, идеология. 1980. N3, С. 108-113:

<sup>15</sup> Տե՛ս Ընտրված անձին որոշելու համար վիճակահանության սկզբունքի կիրառումն առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվել է «Որոգայթ փառացում» և նախատեսված էր ընտրությունների երկրորդ և հետագա փուլերի համար: Ավելի մանրամասն տե՛ս **Որոգայթ փառաց (Հակոբ և Շահամիր Շահամիրյաններ) /Խմբ. Գ. Սաֆարյան.-Երևան, Հայաստան, 2002:** Ներկայումս ՀՀ ընտրական օրենսգրքով վիճակահանության սկզբունքը կիրառվում է ԱԺ պատգամավորի մեծամասնական և համայնքի ղեկավարի ու ավագանու անդամ առաջադրված թեկնածուների ընտրության արդյունքում ձայների հավասարության դեպքում մանդատները բաշխելիս (126-րդ հոդվածի 4-րդ մաս, 143-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերություն, 144-րդ հոդվածի 2-րդ մաս):

## РЕЗЮМЕ

### *О некоторых проблемах этапов тестирования и собеседования конкурса проводимого на вакантную должность муниципальной службы*

В статье обсуждаются некоторые проблемы этапов тестирования и собеседования конкурса проводимого на вакантную должность муниципальной службы. Изучая нормативно-правовые акты, которые регулируют вышеизложенные этапы, было заключено, что существуют проблемы, которые препятствуют имплементации равных прав граждан на занятие вакантной должности муниципальной службы, в частности в составе конкурсной комиссии. В статье предпринята попытка найти их правовые решения.


## SUMMARY

### *On several problems of testing and interview stages of the competition for a vacant position of community service*

In the article it is discussed several problems on the testing and interview stages of the competition for the vacant position of community service. Studying normative legislative acts controlling above-mentioned stages it was concluded that there are problems which impede the implementation of the equal rights of citizens to occupy the vacant position of community service. The article attempts to find their legal solutions.

**ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՐԱՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Իրավունքի գերակայությունն իրավունքի սկզբունք դիտարկելիս հարկ է այդ տեսական հիմնախնդրի լուծման համար առանձնացնել անհրաժեշտ արդիական ուղղությունները և նախապատվությունը տալ նոր մեթոդաբանական մոտեցումների, որոնք իրավունքի գերակայության հիմնահարցերը թույլ կտան հետազոտելու առավել ամբողջական ու համակարգված՝ արդի իրավական համակարգերի զարգացումներին և իրողություններին համապատասխան: Այդպիսի մեթոդաբանական ուղեցույցներից մեկն իրավունքի սկզբունքների հասկացության և համակարգի վերլուծությունն է, մասնավորապես հետևյալ հարցադրումներով՝

ա) ի՞նչ բնույթ ունեն իրավունքի սկզբունքները, ինչից հետևելու է, թե ի՞նչ նշանակություն ունի իրավունքի գերակայությունը, որպես իրավունքի սկզբունք իրավական կարգավորման համակարգում,

բ) որո՞նք են իրավունքի սկզբունքները, և ի՞նչ տեղ է գրավում իրավունքի գերակայությունն այդ համակարգում,

գ) իրավունքի տեսությունն իրավունքի գերակայության հետ նույն հարթության վրա իրավունքի սկզբունքների ի՞նչ համակարգ է կազմում, և արդյո՞ք միանշանակ է իրավունքի գերակայությունն սկզբունք համարելը:

Այս հարցադրումներին պատասխանելու համար անհրաժեշտ է տեսական գրականությունից նախ առանձնացնել իրավունքի սկզբունքների ընդհանուր տեսական բնորոշումները, ինչպես նաև սկզբունքների շրջանակի ու համակարգի վերաբերյալ տեսական մոտեցումները: Իրավունքի տեսության մեջ «իրավունքի սկզբունք» եզրույթի բնորոշմանը և դրանց շրջանակին նվիրված է ծավալուն գրականություն (ինչպես ընդհանուր տեսական, այնպես էլ ճյուղային):

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ հեղինակների մեծ մասը իրավունքի սկզբունք եզրույթը բնորոշում է որպես իրավունքի բովանդակությունը, դրա էությունը և նշանակությունը հասարակության մեջ բնութագրող ելակետային գաղափար: Իրավունքի սկզբունքների այս բնորոշումը, լինելով ամենատարածվածներից մեկը, ներթափանցել է իրավունքի տեսության ուսումնական գրականություն՝ որպես հանրաճանաչ սահմանում:

Սակայն, կան նաև իրավունքի սկզբունքների այլ՝ ավելի լայն, բովանդակալից ու խորը բնորոշումներ: Այսպես, Վ.Ն. Կարտաշովն իրավունքի սկզբունքները դիտարկում է լայն իմաստով՝ որպես իրավունքի համակարգի հարաբերականորեն ինքնուրույն բաղադրատարր, իսկ դրա հասկացությանը տալիս է հետևյալ բնորոշումը. «Իրավունքի սկզբունքները համարվում են ելակետային նորմատիվ ղեկավար դրույթներ (իմպերատիվ պահանջներ), որոնք որոշում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընդհանուր ուղղությունը»: Մեկ այլ հեղինակի կարծիքով իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, հիմնադրույթներ, որոնք արտահայտում են իրավունքի էությունը և բխում են արդարության և ազատության գերագույն գաղափարներից:

Քննարկվող նյութի նկատմամբ համալիր մոտեցում ապահովելու նկատառումով անդրադառնանք նաև այլ մասնավոր բնորոշումների: Մ.Ի.Բայտինը իրավունքի սկզբունքների բովանդակությունը սահմանում է, որպես որոշիչ գաղափարներ, դրույթներ, դիրքորոշումներ, որոնք կազմում են իրավունքի ծագման, զարգացման և իրականացման բարոյական և կազմակերպական հիմքերը: Իրավունքի սկզբունքների վրա հիմնված է իրավունքի ձևավորումը, շարժը և գործընթացը, ինչը թույլ է տալիս որոշել այդ իրավունքի բնույթը, որպես ժողովրդավարական կամ ընդհակառակը: Այս բնորոշման տեսանկյունից իրավունքի գերակայությունը, որպես իրավական սկզբունք ելակետային դրույթ է, որը գործում է իրավունքի ձևավորման, զարգացման և կիրառման ոլորտներում: Սկզբունքն իր բովանդակությունից բխող պահանջներով հանդերձ. «Ներթափանցում է հասարակության իրավական ողջ համակարգը: Դրանք բնութագրում են ոչ միայն իրավունքի էությունը, բովանդակությունը, արտացոլում են ոչ միայն դրա ներքին կառուցվածքը, այլև նրա կիրառման ողջ գործընթացը, շարժը»: Այսպիսի լայն մոտեցումը իրավունքի գերակայությանը, այսինքն՝ այն որպես ընդհանրապես իրավունքի հիմնարար սկզբունք դիտարկելը, շատ ավելի համակարգված է արտահայտում դրա պահանջների էությունը, քան իրավունքի գերակայությունը սոսկ որպես պետական իշխանության սահմանափակման տեսություն կամ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

զաղափար դիտարկելը:

Իրավունքի գերակայությունը իրավական սկզբունք համարելը ենթադրում է, որ այն, միաժամանակ, նաև պետական իշխանության համակարգի ձևավորման, զարգացման և կիրառական ելակետային դրույթ է: Մյուս կողմից, իրավունքի գերակայության, որպես իրավունքի սկզբունք դիտարկելը հաղթահարում է այն թերությունը, որը բնորոշ էր «իրավունքի գերակայությանը», որպես սահմանափակ պետության տեսությանը: Այսինքն՝ եթե իրավունքի գերակայությունը համարում ենք պետական իշխանության սահմանափակման տեսություն, ապա այն գործում է միայն ազգային պետաիրավական համակարգերի շրջանակում, իսկ միջազգային իրավունքի ոլորտին առնչվում է այնքանով, որքանով միջազգային հանրությունը կարող է այն ճանաչել որպես ազգային պետաիրավական համակարգերին ներկայացվող պահանջ: Մինչդեռ, իրավունքի գերակայությունը իրավունքի սկզբունք դիտարկելու դեպքում այդ հիմնադրույթը ելակետային է դառնում նաև բուն միջպետական իրավունքի բոլոր ինստիտուտների ձևավորման, զարգացման և կիրառման համար:

Այժմ փորձենք համակողմանի անդրադառնալ իրավունքի տեսության այնպիսի հիմնահարցերից մեկին, ինչպիսին է իրավունքի սկզբունքների համակարգը: Այս հիմնահարցն էական և սերտ կապ ունի մեզ հետաքրքրող սկզբունքի իմաստավորման հիմնախնդրի հետ և հնարավորություն կտա որոշելու իրավունքի գերակայության տեղը և դերը իրավունքի սկզբունքների համակարգում: Իրավունքի ընդհանուր տեսության և ճյուղային իրավական գրականության մեջ առկա են իրավունքի սկզբունքների բազմաթիվ դասակարգումներ: Օրինակ՝ ըստ Մ.Ի.Բայտինի, իրավունքի սկզբունքները լինում են բարոյական և կազմակերպական: Բարոյական իրավական սկզբունքները կազմում են իրավունքի բարոյական, հոգևոր հիմքը և անմիջականորեն ներազդում են իրավունքի նորմատիվ բովանդակության վրա: Դրանց համակցությունը, ըստ Բայտինի, կազմում են բնական օրենքներ և խորհրդանշում են մարդու հիմնական և հիմնարար իրավունքները: Այդպիսի բարոյական սկզբունքներ են՝ ազատությունը, հավասարությունը, կյանքի իրավունքը, մասնավոր և այլ ձևերի սեփականության իրավունքը, անվտանգությունը, մարդը, որպես բարձրագույն արժեք, մարդու իրավունքների պաշտպանությունը՝ որպես պետություն նպատակ և պարտականություն: Կազմակերպական իրավական սկզբունքներն են, մասնավորապես՝ դաշնային կառուցվածքը, օրինականությունը, իրավունքում համոզվածների և հարկադրանքի, խթանման և սահմանափակման համակցումը: Իրավունքի կազմակերպական սկզբունքները սերտորեն կապված են բարոյական սկզբունքների հետ և «կազմում են իրավունքի կազմակերպական-ընթացակարգային հիմքը, կողմնորոշված են իրավունքի՝

քի՝ որպես հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորիչ դերի, իրավունքի կողմից իր յուրահատուկ իրավաբանական գործառույթների կատարման ապահովմանը»:

Այսպիսով, Մ.Ի.Բայտինի առաջարկված համակարգում բացակայում է իրավունքի գերակայությունը, որպես իրավունքի ինքնուրույն սկզբունք: Դա պայմանավորված է նրանով, որ Մ.Ի.Բայտինի իրավահասկացողությունը նորմատիվիստական է, որում տեղ չկա իրավունքի բովանդակային էության համար: Ինչ որ տեղ ոչ բավարար հիմքով նշված դասակարգման մեջ իրավունքի սկզբունքների մի մասը վերածվում է սուկ բարոյական կատեգորիաների, և երբ դիտարկում ենք դրանք իրավաբանական լայն դիրքորոշումների տեսանկյունից, ստացվում է, որ այդ իրավունքի սկզբունքները ոչ այլ ինչ են, եթե ոչ բնական հիմնական իրավունքները (հենց ինքը՝ Մ.Ի.Բայտինը այդպիսիք է համարում ազատությունը, հավասարությունը, կյանքի և սեփականության իրավունքը, անվտանգությունը, մարդը որպես բարձրագույն արժեք ճանաչելը, մարդու իրավունքների պաշտպանությունը, որպես պետության նպատակ սահմանելը և այլն):

Լինելով նորմատիվիստական դիրքորոշման տեսաբան՝ Մ.Ի.Բայտինը ելակետ է ընդունում այն, որ իրավունքի հասկացողության կառուցումը գուտ և միայն ձևակազմական հատկանիշների վրա, այնուամենայնիվ, ունի մեծ թերություն, որի հաղթահարման միջոց նա առաջարկում է իր կողմից «բարոյական» կոչված իրավական ընդհանուր սկզբունքների խումբը, որն էլ հենց իրավունք կոչված եզրույթի բուն էությունն է: Ընդ որում, նշված հեղինակը ընդունում է այն հանգամանքը, որ իր կողմից բարոյական անվանված իրավունքի սկզբունքները կազմում են իրավունքի հոգևոր հիմքը, անմիջականորեն ներգործում են իրավունքի նորմատիվ բովանդակության վրա: Այդպիսի մոտեցումը հենց հիմնավորում է իրավունքի սկզբունքների մեջ իրավունքի գերակայության սկզբունքի գոյության հանգամանքը: Այդ հաստատվում է նաև տեսության մեջ ընդունված այն դրույթով, որ իրավունքը և մարդու իրավունքները ըստ էության նույնն են»:

Այժմ անդրադառնանք իրավունքի ընդհանուր սկզբունքների շրջանակին: Այս հարցը իրավունքի տեսության մեջ ուղեկցվել է իրարամերժ տեսակետներով: Եթե փորձենք դասակարգել իրավունքի սկզբունքների շրջանակի հարցում տեսական մոտեցումները՝ կապված իրավունքի գերակայության նկատմամբ վերաբերմունքից, ապա կարող ենք փաստել տեսաբանների երկու խմբի առկայությունը: Հեղինակների մի փոքր մասը իրավունքի ընդհանուր սկզբունքների շարքում ներառում է «իրավունքի գերակայությունը», որպես իրավունքի ընդհանուր և հիմնարար դրույթ: Օրինակ՝ Օ.Ֆ.Սկակունն իրավունքի ընդհանուր սկզբունքներ է համարում իրավունքի գերակայությունը, օրի-

նականությունը, օրենքի առջև հավասարությունը, իրավունքների և պարտականությունների փոխկապվածությունը, պետության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը, մեղքի համար պատասխանատվությունը<sup>11</sup>: Այս մոտեցումը յուրահատուկ է այնքանով, որ նա ուղղակիորեն, առանց վարանելու ազգային իրավական համակարգում իրավունքի ընդհանուր սկզբունք է համարում իրավունքի գերակայությունը<sup>12</sup>: Վերջինիս կարծիքով, իրավունքի գերակայությունն առաջնային տեղ է զբաղում իրավունքի սկզբունքների համակարգում և դրա գործողության հետևանքով իրավական կարգավորման համակարգում առաջնայնությունը միշտ պատկանում է մարդու իրավունքներին, իսկ պոզիտիվ իրավական կարգավորման աղբյուրների շարքում գործում է իրավական օրենքի գերակայության սկզբունքը: Այս մոտեցումը, ընդունելով որպես մեթոդաբանական կողմնորոշիչ, կարող ենք անել հետևություն այն մասին, որ իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակությունից բխող երկու հիմնարար պահանջներն են «մարդու իրավունքների առաջնայնությունը» և «իրավական օրենքի գերակայությունը»:

Իրավունքի գերակայության սկզբունքի գոյության կողմնակիցներից է Վ.Ն. Կարտաշովը, ըստ որի, իրավունքի հանրաճանաչ (համընդհանուր) սկզբունքներից են օրինականությունը, հումանիզմը, իրավահավասարությունը, ժողովրդավարությունը, ազատությունը, հրապարակայնությունը, անձի անձեռնմխելիությունը և սուբյեկտի պատասխանատվությունը մեղավոր արարքի համար: Վ.Ն. Կարտաշովի մոտ թվարկված սկզբունքների շարքում առաջին տեղը հատկացված է օրինականությանը, որը նշանակում է օրենքների և դրանց վրա հիմնված իրավական ակտերի խստագույն պահպանման (կիրառման) պահանջ, ինչպես նաև այնպիսի կարևոր հրամայականը, ինչպիսին է օրենքների գերակայությունը այլ ակտերի նկատմամբ<sup>13</sup>:

Վ.Ն. Կարտաշովի և Օ.Ֆ. Սկակունի հայացքների տարբերությունը իրավունքի գերակայության՝ որպես սկզբունքի նկատմամբ կայանում է նրանում, որ առաջինը իրավունքի գերակայությունը համարում է միջազգային իրավունքի և եվրոպական իրավական համակարգերի սկզբունք: Դրանով իսկ նա ուզում է հաստատել, որ ռուսական իրավական համակարգին առավել բնորոշ են օրինականության և օրենքի գերակայության սկզբունքները, որոնք չի կարելի շփոթել «իրավունքի գերակայության» սկզբունքի հետ: Բացի օրինականության սկզբունքի պահանջից, «իրավունքի գերակայության» սկզբունքը ենթադրում է նաև օրենքի որակական բնութագրերը, նրա մատչելիությունը, որոշակի կանխատեսելիությունը (կենսագործման հետևանքների կանխագուշակումը), իրավունքի սուբյեկտների շահերի իրականացման ու պաշտպանության իրավաբանական եղանակների արդ-

յունավետությունը և այլն<sup>14</sup>: Այսպիսով, Վ.Ն. Կարտաշովը միանշանակ ընդունում է արևմտեվրոպական իրավական համակարգերին բնորոշ սկզբունքը՝ իրավունքի գերակայությունը:

Հեղինակների երկրորդ խումբը իրավունքի ընդհանուր կոչված սկզբունքների համակարգում չի ներառում «իրավունքի գերակայություն» հստակ ձևակերպմամբ սկզբունքը: Օրինակ, Ա.Ն. Գոլովիստիկովը համարնդհանուր իրավական սկզբունքներ է համարում իրավական կարգավորման հիմնարար սոցիալական, բարոյական հիմունքները, մասնավորապես՝ ժողովրդավարությունը, սոցիալական ազատությունը, արդարությունը, մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումը, ապահովումն ու պաշտպանությունը, մարդասիրությունը, օրինականությունը, իրավահավասարությունը, օրենքի գերակայությունը իրավունքի այլ աղբյուրների նկատմամբ, իրավունքների և պարտականությունների միասնությունը, համոզման և հարկադրանքի համակցումը և այլն<sup>15</sup>: Իրավունքի ընդհանուր սկզբունքների շրջանակի նկատմամբ գրեթե նմանատիպ մոտեցման կողմնակիցներ են Օ.Ի.Ցիբուլսկայան<sup>16</sup>, Վ.Ի. Գոյմանը<sup>17</sup>, Վ.Ի. Լեուշինը<sup>18</sup>, Ռ.Ա. Ռոմաշովը և Ե.Գ. Շուկչինան<sup>19</sup>:

Այսպիսով, իրավունքի ընդհանուր սկզբունքների շրջանակի վերաբերյալ մոտեցումների դիտարկումը (ըստ իրավունքի գերակայության սկզբունքի նկատմամբ վերաբերմունքի) ցույց է տալիս, որ իրավունքի տեսաբաններն իրենց մոտեցումներում բաժանվում են իրավունքի գերակայության սկզբունքի գոյության և կիրառման ուղղակի, անմիջական կողմնակիցների և նրանց, որոնց կառուցած իրավունքի ընդհանուր սկզբունքների համակարգում իրավունքի գերակայության սկզբունքը ուղղակիորեն նախատեսված չէ: Միևնույն ժամանակ, միանշանակ պնդել, որ այս տեսաբանները գուտ նորմատիվիստներ են և չեն ընդունում իրավունքի գերակայությունը, չի կարելի, որովհետև նրանցից համարյա բոլորն, ինչպես տեսանք վերևում, իրավունքի ընդհանուր սկզբունք են ճանաչում մարդու իրավունքների առաջնայնությունը, հումանիզմը՝ բավականին լայն կերպով, արդարությունը և այլն: Այսինքն, իրավունքի գերակայության տարբեր վերջիններիս կողմից ընդունվում են անվերապահորեն:

Մարդու իրավունքների գերակայությունը կամ լայն իմաստով ընկալված հումանիզմը, որպես իրավունքի սկզբունք ճանաչելը, ըստ էության, նշանակում է իրավունքի գերակայության սկզբունքի գոյության ու գործողության անուղղակի ճանաչում: Այդ է հաստատում նաև այն, որ իրավունքի գերակայությունն ուղղակիորեն ձևակերպող և սկզբունքների համակարգում դրան տեղ հատկացնող հեղինակները դրա բովանդակային բաղադրիչներ են ճանաչում «մարդու իրավունքների առաջնայնությունը» և «իրավական օրենքների գերակայու-

թյունը»:

Իրավունքի գերակայության սկզբունքից խոսանալովելու պատճառներից է նաև իրավահասկացողության իրավաբանական վարկածի և դրանից բխող նոր իրավական սկզբունքի՝ «իրավունքի գերակայության» նորամուծությունը հետխորհրդային և հետսոցիալիստական իրականության մեջ: Այդ նորույթի ճանաչումը պահանջում է հեղափոխական համարձակ մոտեցում ողջ իրավունքի տեսության հայեցակարգային մոտեցման կառուցման նկատմամբ, ինչին ուղղակիորեն դեռ պատրաստ չէ իրավունքի տեսաբանների հիմնական մասը: Մակայն, վաղ թե ուշ, իրավունքի գերակայության՝ որպես հիմնարար իրավական սկզբունքի տեսական հայեցակարգը հաղթահարելու է այդ անվճռակա նությունը և սկզբունքն իր կայուն և հիմնական տեղն է գրավելու իրավունքի սկզբունքների համակարգում<sup>20</sup>:

Իրավունքի գերակայության սկզբունքն ունի օբյեկտիվ հիմքեր, սակայն, միաժամանակ իրավունքի սկզբունքներում կենսագործվում են նաև սուբյեկտիվ ընկալումները՝ պայմանավորված հասարակության անդամների բարոյական, իրավական հայացքներով, զգացմունքներով, պահանջներով, արտահայտված տարբեր ուսմունքներում և տեսություններում: Լինելով իրավունքի էության արտահայտություն՝ պոզիտիվ իրավունքը սերտորեն կապված է իրավունքի և որպես դրա անմիջական դրսևորում՝ մարդու բնական իրավունքների հետ:

Իրավունքը չի կորցնում իր գերակայությունը իրավական կարգավորման հետագա գործընթացներում: Իրավական կարգավորման այդպիսի կարգը և դրանից բխող իրավունքի գերակայության սկզբունքի հասկացությունն ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն օրենսդրության անընդհատ կատարելագործման և կենսագործման տեսանկյունից: Այդ սկզբունքը ուղղակի ներգործում է իրական իրավունքի զարգացման վրա: Իրավունքի գերակայության սկզբունքի ճանաչումը թույլ է տալիս որոշելու իրավունքի առանձին նորմերի համապատասխանությունը իրավունքին, սահմանադրությանը՝ որպես իրավունքի առաջին պոզիտիվ աղբյուրի, որն ամենաընդհանուր և, ըստ էության, բարձրագույն չափանիշն է իրավունքի և օրենսդրության համապատասխանության հարցում: Միաժամանակ, իրավունքի գերակայության սկզբունքի ճանաչումը հնարավորություն է տալիս դատարաններին ունենալու հստակ չափանիշ իրավական արժեքաբանություն իրականացնելու համար:

Այսպիսով, իրավունքի տեսության մեջ իրավունքի գերակայությունը հանդիսանում է իրավունքի և օրենքի տարբերակմամբ կառուցված և ստեղծված իրավունքի հիմնարար սկզբունք, ինչն ուղղակիորեն ընդունում՝ իրավունքի տեսաբանների (ճիշտ է փոքրաթիվ) մի մասը: Մյուս մասի դիր-

քորոշումն իրավունքի տեսության այս հիմնահարցում իրենից ներկայացնում է իրավունքի գերակայության սկզբունքի ճանաչման անուղղակի, ոչ անմիջական տարբերակը: Լինելով հիմնարար սկզբունք՝ իրավունքի գերակայությունը գործում է իրավական կարգավորման բոլոր փուլերում և իր ներգործությունն է թողնում ինչպես իրավական ընդհանուր սկզբունքների համակարգի, այնպես էլ յուրաքանչյուր սկզբունքի տեսական ու նոմատիվ ձևակերպումների վրա, վերածնելով դրանք, փոխելով դրանց բովանդակային պահանջները: Որպես օրինակ, իրավունքի գերակայության սկզբունքի գործողության հետևանքով օրինականության համընդհանուր սկզբունքը վերածվում է իրավական օրինականության սկզբունքի:

Իրավունքի սկզբունքները կարելի է ենթարկել դասակարգման տարբեր չափանիշներով: Այդպիսին է, օրինակ, հասարակական կյանքի կոնկրետ ոլորտը<sup>21</sup>: Ըստ իրավունքի համակարգի բաղադրատարրերի իրավունքի սկզբունքները դասակարգվում են իրավական ինստիտուտների սկզբունքների, միջինստիտուտային սկզբունքների, իրավունքի ենթաճյուղերի սկզբունքների, իրավունքի ճյուղերի սկզբունքների, իրավունքի միջճյուղային սկզբունքների, ազգային իրավական համակարգերի սկզբունքների, առանձին իրավական ընտանիքների առանձնահատկություններն արտացոլող սկզբունքների և, վերջապես՝ միջազգային իրավունքի սկզբունքների<sup>22</sup>:

Գոյություն ունեն նաև իրավունքի սկզբունքների այլ դասակարգումներ, օրինակ՝ իրավաբանական պրակտիկայի սկզբունքներ, անհատի իրավական կարգավիճակի սկզբունքներ, իրավաբանական պատասխանատվության սկզբունքներ և այլն<sup>23</sup>: Իրավունքի սկզբունքները դասակարգում են նաև ըստ իրավունքի աղբյուրում ամրագրման եղանակի՝ միջազգային իրավական ակտեր, սահմանադրություններ, սահմանադրական օրենքներ, սովորական օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և այլն:

Իրավունքի սկզբունքների մեկ այլ դասակարգման չափանիշ է համարվում հասարակական հարաբերությունների մակարդակը, որոնք ներգրավված են իրավունքի սկզբունքների կարգավորման տիրույթում: Համաձայն այդ մոտեցման՝ իրավունքի սկզբունքները լինում են համամարդկային (միջազգային, համաքաղաքակրթական), տարածաշրջանային, ազգային-ներպետական: Վերջիններս, որպես կոնկրետ ներպետական իրավունքի սկզբունքներ, բաժանվում են համաիրավական, միջճյուղային, ճյուղային, ենթաճյուղային և առանձին իրավական ինստիտուտների սկզբունքների<sup>24</sup>: Այս դասակարգման հեղինակների մոտեցման մեջ մեզ հետաքրքրում է իրավունքի գերակայության սկզբունքի նկատմամբ վերաբերմունքը: Իրավունքի գերակայությունը, ըստ նրանց, համարվում է ազգային իրավական համակարգերի սկզբունք<sup>25</sup>:

Իրավունքի համաքաղաքակրթական (միջազգային, համամարդկային) սկզբունքներն են՝ հումանիզմը, իրավաբանական հավասարությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, արդարությունը, օրինականությունը: Ուշադիր դիտարկման դեպքում նկատում ենք, որ այս դասակարգման մեջ, ըստ էության, նկատվում է իրավունքի գերակայության սկզբունքի ոգին, որովհետև թվարկված սկզբունքները հենց այդ գերակայության երաշխիքներն են և այդ սկզբունք երաշխիքներից կարելի է դուրս բերել, ձևակերպել իրավունքի գերակայությունը՝ որպես իրավունքի համաքաղաքակրթական սկզբունք, որը գոյություն ունի և գործում է ինչպես միջազգային իրավունքում և համաշխարհային մասշտաբով, այնպես էլ ազգային-ներպետական իրավական համակարգերում, որպես դրանց ընդհանուր (կամ համընդհանուր) հանրաճանաչ իրավական սկզբունք:

Իրավունքի սկզբունքների հետաքրքիր դասակարգում է տալիս ֆրանսիացի տեսաբան Ժ.Լ. Բերժեյը, ըստ որի՝ իրավունքի սկզբունքները լինում են հիմնարար, որոնք պարտադիր են օրենսդրի և գործադիրի համար, և հասարակ ընդհանուր իրավական սկզբունքներ, որոնք պարտադիր են միայն գործադիր իշխանության մակարդակի համար ու չեն տարածվում օրենսդիր իշխանության վրա<sup>26</sup>:

Հետևելով այս տրամաբանությանը՝ կարելի է ասել, որ իրավունքի գերակայությունը հիմնարար իրավական սկզբունք է՝ պարտադիր և իրավաստեղծի ու իրավունքը կիրառողի համար:

Այսպիսով, իրավունքի գերակայությունը, որպես իրավունքի սկզբունք ընդհանուր ժողովրդավարական ու համընդհանուր իրավական սկզբունք է, գործում է միջազգային իրավակարգի շրջանակներում, ապահովում է մարդկության բնականոն զարգացման երաշխիքները, ունի հիմնարար և համընդհանուր նշանակություն: Իրավունքի գերակայության համընդհանուր բնութագրիչը նշանակում է, որ այն գործում է իրավունքի բոլոր ոլորտներում, որոշում է իրավունքի ձևավորումը, զարգացումը և կիրառումը: Այն իրավակազմավորման, իրավաստեղծագործության, իրավակազմակերպման, իրավակիրառ գործունեության սկզբունք է, որը միավորում է իրավական կարգավորման բոլոր փուլերը և միաժամանակ արտահայտում է դրանց միասնությունը՝ ապահովելով հասարակական հարաբերությունների իրավաչափությունն ու անհրաժեշտ կայունությունը:

<sup>1</sup> St' u Romashov P.A., Шукшина Е. Г. Право как социальный регулятор.- В кн. Теория государства и права. Под ред. Ромашова Р.А. СПб., Из-во Р. Асланова «Юридический центр пресс» 2005. С. 189. Теория государства и права, Под ред. Корельского В.М. и Перевалова В.Д. М., Издательская группа ИНФРА. М., 1997. С. 237.

<sup>2</sup> St' u Общая теория государства и права. Академический курс в трех томах /отв. ред. Марченко М.Н. 3-ое изд., перераб. и доп.- М., Норма, 2007. С. 97.

<sup>3</sup> St' u Ковачев Д.А. Конституционный принцип: его понятие, реальность и фиктивность / Журнал российского права. 1997. N 9. С. 71.

<sup>4</sup> St' u Байтин М.И. О принципах и функциях права: новые моменты правоведения. 2000. N 1. С. 4.

<sup>5</sup> St' u Общая теория государства и права. Академический курс в 2-х томах, под ред. Марченко М.Н. Т. 2. Теория права, М., издательство «Зерцало», 1998. С. 22.

<sup>6</sup> St' u Гойман В.И. Право в системе нормативного регулирования.- В кн. Общая теория права и государства. Под ред. Лазарева В.В. М., Юристь, 2005. С. 134-135.

<sup>7</sup> St' u Байтин М.И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков), М., изд. 2-ое, 2005. С. 151.

<sup>8</sup> St' u Байтин М.И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков), М., изд. 2-ое, 2005. С. 150.

<sup>9</sup> St' u Իրավունքը ըստ Մ.Ի. Բայտինի համապարտադիր, ձևական-որոշակի նորմերի համակարգ է, որը արտահայտում է հասարակության պետական կամքը, նրա ընդհանուր-մարդկային և դասակարգային բնույթը, հրապարակվում կամ սանկցիավորվում է պետության կողմից և պահպանվում է խախտումներից պետական հարկադրանքի կիրառման հնարավորությամբ, հանդիսանում է հասարակական հարաբերությունների իշխանապաշտոնական կարգավորիչ /տե՛ս Բայտին Մ.Ի. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков), М., изд. 2-ое, 2005. С. 80/.

<sup>10</sup> St' u Четвернин В.А. Современная либертарная теория права и государства о типах правопонимания // Труды МГЮА. 2003, N10. С. 88.

<sup>11</sup> St' u Скакун О.Ф. Теория государства и права (энциклопедический курс): Харьков: Эспада, 2005. С. 284.

<sup>12</sup> St' u Իրավունքի գերակայությունը, դիտարկելով որպես իրավունքի ընդհանուր սկզբունք, այս հեղինակը այդ սկզբունքի բաղադրատարրեր է ճանաչում՝ մարդու իրավունքների առաջնայնությունը, օրենքի համապատասխանությունը իրավունքին (իրավական օրենքի գերակայություն), իրավական որոշակիությունը, պետական իշխանության սահմանափակում իրավունքով /տե՛ս Բայտին Մ.Ի. Теория государства и права (энциклопедический курс): Харьков: Эспада, 2005. С. 191-192/.

<sup>13</sup> St' u Карташов В.Н. Принципы права.- в кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах, отв. ред. Марченко М. Н., 3-ое изд., М., Норма, 2007. С. 104-107.

<sup>14</sup> St' u նույն տեղը էջ 105:

<sup>15</sup> St' u Головистков А.Н., Дмитриев Д.А. Проблемы теории государства и права. М., изд-во ЭКСМО, 2005. С. 374-378.

<sup>16</sup> Այս տեսաբանը իրավունքի ընդհանուր սկզբունքներ է համարում ազատությունը, իրավահավասարությունը, մարդասիրությունը, ժողովրդավարությունը, իրավունքների և պարտականությունների միասնությունը, համոզման և հարկադրանքի զուգակցումը (տե՛ս Теория государства и права. Курс лекций / под ред. Матузова Н.И. и Малько А.В. М., Юристь, 1999. С. 149-152): Օ.Ի. Ֆիրովսկայան

հումանիզմի սկզբունքը դիտարկում է լայն դիրքերից՝ գտնելով, որ այդ գաղափարը ներթափանցում է ամբողջ իրավական համակարգը, օրենսդիր, գործադիր և իրավասահայան գործունեությունը: Դրա սահմանադրական արտահայտությունը նա դիտարկում է ՌԴ Սահմանադրության 2-րդ հոդվածի դրույթը, ըստ որի «Մարդը, նրա իրավունքները և ազատությունները համարվում են բարձրագույն արժեք»:

<sup>17</sup> Այս իրավագետը իրավունքի ընդհանուր սկզբունքները համարելով իրավունքի որակական յուրահատկությունն ամբողջապես արտացոլող համապարտադիր ելակետային նորմատիվ դրույթներ, որպես այդպիսին է համարում հումանիզմը, քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև, ժողովրդավարությունը, օրինականությունը (իրավաօրինականությունը), արդարությունը: Վ.Ի. Գոյմանը իրավունքի սկզբունքները դիտարկում է իրավունքի աղբյուր (Տե՛ս Гойман И.В. Принципы права / в кн. Общая теория права и государства. / под ред. Лазарева В.В. 4-ое изд., М., Юристь, 2005. С. 134-137):

<sup>18</sup> Վ.Ի. Լեուշինի տեսակետի համաձայն իրավունքի ընդհանուր սկզբունքներ են համարվում ժողովրդավարությունը, ֆեդերալիզմը, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների և նորմերի անմիջական գործողությունը, օրինականությունը, իրավահավասարությունը, սեփականության բոլոր ձևերի հավասարությունը, արդարադատությունը (տե՛ս Леушин В. И., Понятие, сущность и основные признаки права.- в кн. Теория государства и права / отв. ред. Перевалов В.Д. М., Норма, 2006. С. 120-122):

<sup>19</sup> Տե՛ս Ромашов Р.А., Шукшина Е.Г. Принципы права. - в кн. Теория государства и права / под ред. докт. юрид. наук, проф. Ромашова Р.А., СПб., изд-во Р. Асланова «Юридический центр прессы», 2005. С. 189-190.

<sup>20</sup> Այսպիսի տեսական կանխագուշակումը հաստատվում է այն փաստով, որ տեսաբանների մեծ մասը կարծում են, որ «իրավունքի ոչ բոլոր սկզբունքներն են բացահայտվել, արտացոլվել և ճանաչվել իրավունքի տեսության կողմից (տե՛ս Тузов Н.А. Правовое регулирование.- в кн. Проблемы теории государства и права. / под ред. Сырых В.М. М., ЭКСМО, 2008. С. 205):

<sup>21</sup> Տե՛ս Карташов В.Н. Принципы права. - в кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах / отв. ред. Марченко М.Н. 3-ое изд., М., Норма, 2007. С. 99. Ըստ այս դասակարգման այդ սկզբունքները միաժամանակ կրում են իրավունքի սկզբունքների ազդեցությունը: Համաձայն այդ մոտեցման իրավունքի սկզբունքներն են՝ տնտեսական համակարգի, սոցիալական համակարգի, քաղաքական համակարգի, հոգևոր կյանքի համակարգի և իրավական համակարգի սկզբունքները:

<sup>22</sup> Տե՛ս Карташов В.Н. Принципы права. - в кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах / отв. ред. Марченко М.Н. 3-ое изд., М., Норма, 2007. С. 102.

<sup>23</sup> Տե՛ս Карташов В.Н. Введение в общую теорию правовой системы общества, Ярославль, 1995-1998. Части 2-4:

<sup>24</sup> Տե՛ս Скакун О.Ф. Теория государства и права. /энциклопедический курс/. Харьков, Эспада, 2005. С. 283-285.

<sup>25</sup> Տե՛ս Ըստ իրավունքի ազգային համակարգի այլ սկզբունքներն են համարվում օրինականությունը, հավասարությունը օրենքի առջև, իրավունքների և պարտականությունների փոխկապվածությունը, պետության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը, պատասխանատվությունը միայն մեղքի համար (տե՛ս Скакун О.Ф. Теория государства и права. /энциклопедический курс/. Харьков, Эспада, 2005. С. 284):

<sup>26</sup> Տե՛ս Бержель Ж.Л., Общая теория права / под общ. ред. В.И. Даниленко. пер. с фр., М., Издательский дом НОТА –BENE. 2000. С. 174.

## РЕЗЮМЕ

### *Принципиальная важность верховенства права в правовой системе*

В этой статье сделана попытка выявить и проанализировать гипотезу, рассматривать верховенство права как принцип права, которое требует найти необходимые современные способы для решения этой теоретической проблемы.

Для решения вышеупомянутого, мы считаем, что необходимо продемонстрировать новые методологические подходы, которые позволят перенести проблемы понимания верховенства закона на новый уровень, делая его наиболее завершенным, соответствующим современному понятию правовых систем и реальности. Один из таких методологических ориентиров является анализ концепции и системы принципа права частности:

а) какого характера правовые принципы, из чего следует, какое значение имеет верховенство права, как принцип законности в системе правового регулирования,

б) каковы принципы права, какое место занимает верховенство закона в этой системе.

в) какую систему принципов права на той же плоскости составляет теория права с верховенством закона .

Исследование сделанное в статье дает полную картину изучения концепции принципа верховенства закона.

## SUMMARY

### *The fundamental importance of rule of law in the legal system*

In this article an attempt was made to identify and analyze the right to observe the rule of law principle of hypothesis, which requires to find modern ways for the theoretical solution of the problem. To solve the above mentioned, we believe that it is necessary to demonstrate new methodological approaches that will allow to put on the new level the problems of understanding the priority, making it more complete, corresponding to the development of modern legal systems and realities. One of such methodological guidelines is the analysis of the concept of law principles and of the system, especially:

a) of what character are law principles, from which it will follow what meaning does the rule of law have, as a principle of law in the system of legal regulation,

b) which are the right principles and what place does the rule of law take place in the system.

c) what system do the theory of rule with the rule of law form on the same level and whether it is definitely to consider to be a principle of rule of law.

The research done in the article gives an opportunity to form a complete picture of the concept of the principle of the rule of law.

## ՄԻՋԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական  
և քաղաքացիական դատավարության իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ



### ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

XVIII դարի լուսավորիչների հայեցակետում սեփականության հիմնախնդիրը շողկապվում է իրավական պետության նրանց իդեալի հետ: Ըստ այդմ՝ իրավունքից հետո սեփականությունը քաղաքակրթության երկրորդ հրամայականն է: Ավելին, սեփականությունը ինքնին իրավունք է, քանզի մարդու բնական պահանջմունքն է և նրա աշխատանքի՝ մարդու համար բնական օրենքի և գոյության անհրաժեշտ պայմանի արդյունքը: Սեփականությունը որպես իրավունք նույնքան կարևոր է մարդու գոյատևման համար, որքան ազատությունը որպես իրավունք<sup>1</sup>: Սեփականության իրավունքը մարդու գոյության, կատարելագործման և երջանկության հիմնական պայմանն է:

Նախակապիտալիստական արևելյան հասարակարգերում և Բերրի կիսալուսնի (Fertile Crescent) աշխարհագրական տարածքում սեփականության անձեռնխելիությունը ի հայտ եկավ տաճարային սեփականության նկատմամբ: Սեփականության այս ձևը համարվում էր աստվածային: Դարերի հողվոյթում սեփականության ձևերի հավասարության սկզբունքի հաստատմամբ այդ անձեռնխելիությունը սկզբնապես տարածվեց միապետական, այնուհետև սեփականության այլ ձևերի նկատմամբ, որի արդյունքում սեփականության իրավունքը վերածվեց բացարձակ, անօտարելի իրավունքի և գոյատևեց որպես այդպիսին մինչև պոզիտիվիստների՝ սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգի ծնունդն ու այդ հայեցակարգի առաջին ամրագրումը իրավական ակտերում:

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգի ծնունդն ազդարարվեց փիլիսոփայության ընկալման նոր դարաշրջանում՝ պոզիտիվիստների սոցիալական տեսությունում: Պոզիտիվիստների սոցիալական տեսությունը բանաձևում էր ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ, պոզիտիվիզմի նախահայր Օգյուստ Կոնտի

կողմից ստեղծված «պոզիտիվ կրոնի» նշանաբանը, այն է՝ «Ապրում են ուրիշի համար» կամ «Քեզ սիրում են ավելին, քան ինձ և ինձ սիրում են հանուն քեզ»<sup>2</sup>: Իրենց կողմից իրականացվող սոցիալական գործառույթների տեսակետից իրավական հարաբերությունները ներկայանում են որպես սոցիալական խաղաղ աշխարհի մի բնագավառ, ուր հավասարակշռված են մարդկանց, սոցիալական խմբերի ու դասակարգերի թշնամական և հակադիր շահերը: Իսկական խաղաղությունը միշտ հանդիսանում է իրավունքի վրա հիմնված խաղաղություն: Իրավունքը հավասարակշռում է անձի և հասարակության միջև եղած հակադրությունը: Ամեն իրավական համակարգ բաշխում է բոլոր իրավունքները անձի և հասարակության միջև և ստեղծում է մի կողմից՝ հասարակության՝ օբյեկտիվ իրավունք: Պոզիտիվիստական սոցիալական փիլիսոփայության տեսանկյունից սեփականության իրավունքը ևս վերափոխատվորվեց: Պոզիտիվիստական գիտական դպրոցը հիմնված էր իրավունքի սոցիալական գործառույթի առանձնացման վրա, որով պայմանավորվեց սեփականության իրավունքի բացարձակ բնույթի անցումը սահմանափակին: Այս տեսության հեղինակները (Օ. Կոնտ, Լ. Դյուգի, Վոլֆ, Գեդեման և այլոք) կարծում էին, թե սուբյեկտների մոտ բացակայում են իրավունքները, և նրանք պարտավոր են ենթարկվել սոցիալական նորմերին, կատարել իրենց վրա դրված սոցիալական գործառույթները<sup>3</sup>: Սոցիալական տեսության սոցիոլոգիական բովանդակությունը հասարակության մեջ իրավունքի որպես հավասարակշռող ուժ հանդես գալու մեջ է: Հետևելով պոզիտիվիզմի նախահայր Օ. Կոնտին՝ Դյուգին փորձում էր վերացնել իրավաբանական գիտության մեջ որոշ մետաֆիզիկական հասկացություններ, ինչպիսին էր «անձի սուբյեկտիվ իրավունք» հասկացությունը: Թեև Դյուգին ամբողջապես չհրաժարվեց «սուբյեկ-

տիվ իրավունք» և «օբյեկտիվ իրավունք» հասկացություններից, սակայն, այնուամենայնիվ, գտնում էր, որ այժմ մետաֆիզիկական հայեցակետերն արդեն անտեղի են, այն դուրս է գալիս գործածությունից և պետք է զիջի իր տեղը օբյեկտիվ իրավունքի հասկացությանը, այսինքն՝ «պարտադրում է նրան որոշակի առաքելություն կատարել» և միաժամանակ «իրավունքն է տալիս կատարել այս առաքելությանը պատեհ ակտեր»<sup>4</sup>։

Այսպես, Դյուգին, ներկայանալով որպես իրավունքի հասկացման սոցիալական-իրավաբանական պաշտպան, իրավունքը համարում էր «սոցիալական գործոնների անմիջական արդյունք»։ 20-րդ դարի սկզբում նա ամեն ջանք գործադրեց Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքի սոցիալականացման համար։ Հենց Դյուգին սեփականության սոցիալական տեսության առաջին տեսիլքները գտավ Օգյուստ Կոնտի աշխատություններում։ Մասնավորապես ուշադրություն էր դարձվում Կոնտի այն հայտարարությանը, որի համաձայն՝ «սեփականությունը, ուր պոզիտիվիզմը տեսնում է մեկ անհրաժեշտ սկզբունք՝ ուղղված ձևավորելու և կառավարելու կապիտալները, որտեղ յուրաքանչյուր սերունդ պատրաստում է հաջորդի աշխատանքները»<sup>5</sup>։ Դյուգին գրեց. «Սեփականությունն իրավունք չէ, սեփականությունը սոցիալական գործառույթ է»<sup>6</sup>։

Իրավունքի սոցիալական գործառույթի առանձնացման վրա էր հիմնված նաև մեկ այլ դպրոցի կողմնորոշում։ Մարքս-լենինյան գաղափարախոսության դարաշրջանում, երբ սեփականության իրավունքի անհատական գործառույթը հերքվեց ու մերժվեց, սեփականությունը սկսեց կրել բացառապես հանրային բնույթ՝ դրսևորվելով երկու՝ պետական և կոոպերատիվ ձևերով։ Վերջինս (կոոպերատիվ սեփականությունը) շուկայական տնտեսությունում կերպարանավորվում էր որպես մասնավոր սեփականության ձև։ Սոցիալիստական իրավական համակարգը, չկարողանալով հաղթահարել գլխավորապես սուբյեկտիվ իրավունքի և առանձնապես սուբյեկտիվ սեփականության իրավունքի անհատական գործառույթների խնդիրները, մասնավոր սեփականության հիմնական երեք ձևերից կոլեկտիվն ու ընդհանուրը վերաորակեց իբրև հանրային սեփականության դրսևորումներ, իսկ անհատական ձևի դեմ ռազմավարական պայքարում գործի դրվեց վեհ բարոյախրատական գաղափարների քարոզումը։ Այդ գաղափարախոսությունը բովանդակում էր. մասնավոր սեփականու-

թյունը հասարակությունը բաժանում է թշնամական դասակարգերի, որոնց միջև գործում է տիրապետման և ենթարկման սկզբունքը<sup>7</sup>։ Սեփականության իրավունքի սոցիալիստական նման գիտափիլիսոփայական հայեցակարգի սնանկությունը և այդ հայեցակարգի կիրարկման վախճանը ամենից առաջ նրանում էր, որ այն անտեսեց մարդկային հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ասպարեզների իրական բնույթը և առհասարակ առհամարեց նրա հոգևոր ոլորտը։ Յուրաքանչյուրի հոգեբանության հիմքում հենասյան նման վեր է խոյանում սեփականության կամ սեփականատիրական զգացումը, տենչանքն ու քաղցր դեպի մասնավոր՝ անհատական սեփականությունը<sup>8</sup>։ Իրականում ոչ թե մասնավոր սեփականության վերացումն ու սոցիալիստական հանրային սեփականության հիման վրա հասարակության կազմակերպումը կհանգեցնի հակամարտությունների վերացմանը (ինչպես քարոզվում էր սոցիալական կարգերի ժամանակ), այլ հանրային սեփականության արդար, իրավական իմաստով հավասար մասնավորեցումը, ապապետականացումը կամ ապահանրայնացումը։ Ինչպես իրավագիտորեն նկատել է Գարեգին Նժդեհը՝ ընդհանուր բարիքը դառնում է չարիք, երբ չի արտացոլում մասնավոր բարիքը<sup>9</sup>։

Պոզիտիվիստների սոցիալական սեփականության տեսությունը հակադրվեց 19-րդ դարի ռոմանիստների սեփականության սուբյեկտիվ իրավունքի հայեցակարգին։ Եվ եթե սկզբնական շրջանում սեփականության սոցիալական գործառույթի տեսությունը թշնամորեն հակադրեց իրեն սեփականության սուբյեկտիվ իրավունքի ռոմանիստների տեսությանը, ապա արդի իրավագիտությունում սեփականության իրավունքը ներկայանում է այդ երկու տեսությունների միաձուլվածքի համատեքստում, ըստ որի՝ սեփականության իրավունքը՝ որպես սուբյեկտիվ իրավունք, ունի ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական գործառույթներ<sup>10</sup>։ Այլ կերպ ասած՝ սեփականությունը սուբյեկտիվ իրավունք է՝ ծանրաբեռնված կամ սահմանազատված սոցիալական գործառույթներով՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի սոցիալական գործառույթներ։

Սոցիալական գործառույթի հիմքերը կարելի է գտնել հռոմեական ինստիտուցիաներում, ուր նշվում է թե *expedit reipublicae ne sua re quis male utatur*, ասել է թե՛ ի շահ պետության այն, որպեսզի ոչ մեկ չչարաշահի իր սեփականությունը<sup>11</sup>։ Մա-

կայն Եվրոպայում Վեյմարյան սահմանադրությունը առաջինն էր, որ նախատեսեց սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի վերաբերյալ դրույթ սոցիալապես պայմանավորելով մասնավոր սեփականությունը<sup>12</sup>: Եվրոպայում սեփականության սոցիալական գործառույթի հայեցակարգը պատմականորեն պայմանավորված էր: Նման պայմանավորվածություն ուներ և այդ տեսության հետագա օրենսդրական մարմնացումը: Հետագայում այսօրինակ նորմեր ներառվեցին աշխարհի բազմաթիվ երկրների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԳՖՀ, Նիդերլանդներ, Բրազիլիա, Իտալիա, Իսպանիա, Հունգարիա և այլն) սահմանադրություններում, որոնք ևս բովանդակում են սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգը ամրագրող իրավական նորմեր: Վեյմերյան սահմանադրությունից ևեթ սեփականության սոցիալական գործառույթի սահմանադրական դրույթը իրացվեց Գերմանիայի իրավական համակարգի տարբեր իրավունքի ճյուղերում, հատկապես՝ հողային իրավունքում: Հունգարիայի նոր սահմանադրությունը, որն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ին, ընդգծում է՝ գույքի սեփականատերը կրում է սոցիալական պարտականություն<sup>13</sup>: Իսկ Իսպանիայի Սահմանադրությունը /մ. 2, հոդ. 33/ սահմանում է, թե, համաձայն օրենքի սեփականության, իրավունքի սոցիալական գործառույթը սահմանափակում է նրա բովանդակությունը: Հունաստանի սահմանադրությունը ընդգծում է, որ «սեփականության իրավունքը չի կարող իրականացվել ի վնաս հասարակական շահին»<sup>14</sup>, իսկ Թուրքիայի սահմանադրությունը նշում, որ այդ իրավունքի իրականացումը չպետք է հակասի հասարակական շահին<sup>15</sup>: Ֆրանսիայում այս հայեցակարգը ևս օրենսդրական լայնածավալ ամրագրում ստացավ: Ավելին, 1948 թվականին սեփականության սոցիալական գործառույթի տեսությունը ճանաչվեց որպես ֆրանսիական չորրորդ հանրապետության կվազի պաշտոնական դոկտրինա<sup>16</sup>: Սոցիալական գործառույթի դրսևորումները առկա են նաև անգլոսաքսոնական իրավական ընտանիքի անդամ երկրների համակարգերում: Այսպես, դելիկտային իրավունքում «duty of care» հասկացությունն անհատին, այդ թվում՝ սեփականատիրոջը, վերապահում է հասարակության այլ անդամների և հասարակության հանդեպ իրավական պարտականություններ:

Սեփականության հասարակական էությունը տեսանելի է դառնում հենց սոցիալական, քաղա-

քական և հոգևոր ոլորտներում: Սեփականության իրավունքը սերտորեն կապված է պետությունների սոցիալական և տնտեսական քաղաքականությանը: Սահմանադրաիրավական ինստիտուտների սոցիալական բնույթն ածանցյալ է սահմանադրության սոցիալական գործառույթից և պետության սոցիալ-իրավական պետություն սկզբունքից: Ըստ սեփականության սոցիոլոգիական գործառույթի փիլիսոփայության՝ սոցիալական ուղղվածություն ունեցող պարտավորությունները միավորում է նրանց միավորող և ընդհանրացնող մեկ կոնկրետ բնույթ: Սոցիալական պարտավորությունը յուրաքանչյուրի կարողությունը հասարակությանը փոխանցելու մեջ է: Դա սոցիալական և քաղաքական պարտավորության արմատն է<sup>17</sup> (Սպինոզա): Սեփականությունն էլ իր հերթին պահանջում է համագործակցություն և փոխադարձ օգնություն:

Գործառույթ-ֆունկցիան հասկանում են որպես պարտականություն: Գործառույթի մասն պատկերացումներ սահմանվում է մի շարք սահմանադրություններում: Բայց եթե գործառույթ ու պարտականություն հասկացությունները նույնացվում են, ապա իմաստագրվում է դրանց տարանջատման անհրաժեշտությունը: Գործառույթը յուրահատուկ, բարդ և վեկտորավորված պարտականություն է: Այն, որ գործառույթը ըստ նպատակի վեկտորավորված պարտականություն է, վկայում նաև 1940 թվականին գերմանական օրենսդրության մեջ գերմաներեն function (գործառույթ) օտարածին տերմինի «գտարյուն» գերմանական aufgabe բառով փոխարինման փորձը, որը բառացի նշանակում է առաջադրանք<sup>18</sup>: Այսպես, Խորվաթիայի Սահմանադրության 48-րդ հոդվածը մատնանշում է, որ սեփականությունը հարուցում է պարտականություններ<sup>19</sup>: Հետևաբար, մասն պարտականությունները սոցիալական գործառույթների հետևանք են, իսկ սոցիալական գործառույթը՝ պարտականությունների հիմք և պատճառ:

Սոցիալական տերմինի հայերեն քարգմանությունը ևս դժվարություններ է ներկայացնում: Այն չի փոխարինում ո՛չ հանրային, ո՛չ հասարակական և ո՛չ պետական հասկացությունները, այլ ամբողջացնում է այս բոլորը հասկացությունները միավորելու դեպքում: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանրային շահը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքն է: Ըստ այդմ,

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

գործող օրենսդրությամբ հանրային հասկացությունն ավելի լայն է և իր մեջ է ներառում հասարակական և պետական հասկացությունները: Սակայն սոցիալական գործառույթի տիրույթը ավելի լայն է: Այսպես, օրինակ, սոցիալական գործառույթը պարտավորեցնում է բնակարանի սեփականատիրոջը իրացնել իր իրավունքը՝ կատարելով բազմաբնակարան շենքի պահպանման ուղղված գործողություններ և ձեռնպահ մնալ այն գործողություններից, որոնք կարող են վնասել ընդհանուր բաժնային սեփականությունը:

Պետությունը, լինելով սոցիալական երևույթ, ունի նաև այլ գործառույթներ, ինչպիսիք են՝ տնտեսական, քաղաքական, բնապահպանական և այլն: Սակայն, «սեփականության սոցիալական գործառույթը» հասկացությունում սոցիալականը դիտվում է որպես զգալիորեն լայն հասկացություն՝ իր մեջ ներառելով մնացած բոլոր հասկացությունները: «Սեփականության սոցիալական գործառույթը» հասկացության մեջ սոցիալականը նշանակում է ինչ-որ կոնկրետ /պետական, համայնքային, կամ այլ մասշտաբի/ հասարակության շահը կամ իրավունքները հարգող պարտականություններ:

Իրավունքի տեսության մեջ ընդունված է պարտավորությունները դասակարգել պոզիտիվի և նեգատիվի: Սակայն, պարտավորությունների մասն դասակարգումը կարծես թե թերի է: Սոցիալական գործառույթին վերաբերող բազմաթիվ երկրներում առկա համապատասխան դրույթերի վերլուծությունը թույլ է տալիս սոցիալական պարտավորությունների փնջի մեջ ներառվող պարտավորությունները ենթարկել նաև այլ գիտական պայմանական դասակարգումների: Պարտավորական իրավունքի տեսությանը հայտնի է ժամանակի ընթացքում և տարածության մեջ պարտավորությունների անցումայնության կամ փոխակերպման հատկությունը: Սոցիալական գործառույթի հենց այս ընկալումով է պայմանավորված պարտավորությունների այլ դասակարգման անհրաժեշտությունը: Պարտավորության մեկ վիճակից անցումը մեկ այլ վիճակի կախված է ապագայում հնարավոր, տեղի ունենալիք, որոշակի փաստից կամ փաստերից: Սեփականության անձեռնմխելիության դեպքում սոցիալական գործառույթի սովերի ներքո համախմբված պարտավորությունները կրում են նեգատիվ պարտականությունների հատկություն, իսկ, ասենք, հանրային շահի գերակայության դեպքում մույն այդ պարտականությունները սերտա-

ճում են պոզիտիվ պարտականությունների: Այլ կերպ ասած, սոցիալական գործառույթը ներկայանում է որպես պարտականությունների փաթեթ: Ուստի, պարտավորությունների մասն բնույթը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. այն պարտավորությունը, որի իրականացումը կախվածության մեջ է դրված ապագայից և անհայտ ժամանակում վրա հասնող որոշակի իրադարձությունից, պետք է անվանել պայմանական պարտավորություն՝ ներառելով պարտավորության առանձին դասակարգման մեջ: Պարտավորության հենց այս մոդելը առաջարկում ենք հիմք ընդունել հայրենական օրենսդրությունում սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի քաղաքացիաիրավական կարգավորման հիմքում:

Հանրային սեփականության գործառույթներից էլ ածանցյալ է հանրային սեփականության իրավունքի սուբյեկտների գործառույթները հանրային սեփականության կառավարման ոլորտում և այս գործառույթների ծավալը, բնույթն ու իրականացման կարգը:

Պետական սեփականության իրավունքի սուբյեկտը, այսինքն՝ պետական գույքի սեփականատերը, ժողովուրդն է՝ տվյալ պետության ինքնիշխանության (սուվերենության) սուբյեկտը: Պետական սեփականությունը՝ որպես հանրային սեփականություն, անհատական գործառույթներ չի իրականացնում, իսկ ավելի ճիշտ՝ պետական սեփականության պարագայում անհատական և սոցիալական գործառնութական հարթությունները համընկնում են: Համայնքային սեփականության պարագայում անհատական գործառույթի բովանդակությունը այլ է. համայնքային սեփականության իրավունքի անհատական գործառույթը իր բնույթով և սոցիալական է, սակայն այլ հզորության ու հարթության: Համայնքային սեփականության իրավունքի անհատական գործառույթի անհատականացումը պայմանավորված է պետական՝ հանրային սեփականության սոցիալական գործառույթի առկայությամբ և դրա համեմատ: Այսինքն՝ պետության մեջ համայնքը՝ որպես մեկ սուբյեկտային միավոր, սեփականության իրավունքի՝ օգտագործման և տնօրինման լիազորությունների իրացումն պարտավոր է իրականացնել սոցիալական գործառույթների կանոններին ներդաշնակ: Եվ այս տեսանկյունից համայնքի՝ որպես պետությունից առանձնացված միավորի սեփականությունը ունի իր ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական գործառույթներ: Իսկ մասնավոր սեփականության

www.lawinstitute.am

տեսանկյունից համայնքի անհատական գործառույթը մասնավոր սեփականության նկատմամբ կրում է սոցիալական բնույթ: Հետևաբար, հանրային իշխանության սուբյեկտների պարտականությունն է հանրային սեփականության իրավունքի օբյեկտների կառավարման դեպքում հավատարիմ մնալ հանրային սեփականություն համարվող գույքի առաջին և հիմնական գործառույթի բնությանը: Սոցիալական գործառույթի էությունը թաղված է հենց հանրային սեփականության իրավունքի հիմքում և բնորոշում է նրա գործառնական էությունը:

Սակայն պետական սեփականությունը՝ որպես հանրային սեփականություն, կարող է իրականացնել անհատական գործառույթներ, եթե այն դիտարկել միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտ: Միջազգային իրավունքի դիտանկյունից պետական սեփականության անհատական գործառույթի բովանդակությունը ընդունում է պետության մեջ համայնքային սեփականության իրավունքի անհատական գործառույթների տեսքը, որոնք իր բնույթով ընկալվում են որպես սոցիալական: Պետական սեփականության իրավունքի անհատական գործառույթի անհատականացումը պայմանավորված է միջազգային հասարակության ընդհանուր գույքի առկայությամբ: Ուստի, յուրաքանչյուր պետության պարտականությունն է հանրային սեփականության իրավունքի օբյեկտների կառավարման գործընթացում միջազգային հասարակության համար արժեք, նրա ժառանգություններ կայացնող գույքը: Ենթադրելով, որ մեզ համար գործառույթապարտականությունների չպահպանման համար միջազգային հանրությունը համապատասխան սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ իրավական լծակներ չունի (օրինակ, Աֆղանստանում ծայրահեղ իսլամիստականների կողմից Բուդդայի հայտնի արձանների ոչնչացման կանխման հարցում միջազգային հանրությունն գտնվեց անգործ):

Պետության գույքի անհատական գործառույթը առերևույթվում է միջազգային հասարակության ընդհանուր սեփականության գույքի նկատմամբ, որպիսին են՝ Անտարկտիկան, Արկտիկան և այլն: Այսօր ամերիկյան և եվրոպական իրավական ու տնտեսագիտական դոկտրինաներում առաջարկվում է նման իրավական կարգավիճակ տալ բնական օգտակար այն հանածոներին, որոնք ունեն միջազգային հանրության կենսագործունեության համար ծայրահեղ անհրաժեշտ բնույթ: Այդպիսիք են համարվում նավթը, գազը և այլն: Բացի

այդ, պետությունները ծանրաբեռնված են միջազգային հասարակության, հարևան պետությունների բնակչության, գոյություն ունեցող կամ պատմության գիրկն անցած ազգերի թողած մշակութային արժեքների և ժառանգության պահպանման միջազգային սոցիալական գործառույթներով: 1990-ականներից սկսած տարբեր հեղինակներ և հաստատություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ը, առաջ բերեցին «համաշխարհային հանրային գույք» եզրույթը, որի պահպանման և շահագործման հոգսը դրված էր համաշխարհային հասարակության՝ որպես մեկ միասնական միավորի ուսերին: Ավելին, այս հասկացության առաջ գալու պատճառներից մեկն էլ միջազգային հանրությանը մեկնված մարտահրավերներն են (ինչպես օրինակ, կլիմայական փոփոխությունը, համաշխարհային ֆինանսական և մշակութային ճգնաժամը), որոնք ժամանակակից հանրության առջև են դրել «մարդկության ընդհանուր հոգսերը»<sup>20</sup>: Ի տարբերություն ՄԱԿ-ի կոմից պաշտպանվող հայեցակետի՝ տնտեսագիտական մոտեցումը չի պարտադրում համապատասխան գույքի «համաշխարհայինացում» և հնարավոր է համարում գույքի պետությանը կամ մասնավոր անձին ի սեփականություն պատկանալը, միայն թե սեփականությունը պետք է ծանրաբեռնված լինի համաշխարհային հանրության նկատմամբ պարտականություններով:

Պետական կամ համայնքային սեփականությունը ձևավորվում է և գործում է պետական կամ համայնքային՝ հանրային խնդիրների լուծման և պահանջների բավարարման համար: Սակայն հանրային պահանջները ևս ունեն որոշակի մակարդակներ: Նման դեպքում պետական հասարակության շահը համայնքային հասարակության շահի նկատմամբ գերակա է: Նման մոտեցումն իր ամրագումը ստացել է և ՀՀ օրենսդրությունում: Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պետության կարիքների համար համայնքին իր սեփականություն համարվող գույքից զրկելը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Այսպես, սույն օրենքը սահմանում է հանրային դիտարկվող համայնքային սեփականության օտարելիությունը նույն մասնավոր սեփականության օտարելիության հիմքով, պայմաններում ու կարգով՝ չսահմանելով համայնքային գույքի այն շրջանակը, որը օտարվել չի կարող: Համայնքային սեփականության օտարման հիմքը և կարգը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օտարման սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը սահմանվում է «Հասարակության և պետության կարիքների սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով<sup>21</sup>: Նման հղում կատարում է նշված օրենքի 2-րդ հոդվածը՝ նշելով, որ սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքով և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետություն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած բոլոր օբյեկտների վրա: Հետևաբար, մասնավոր գույքի գործառույթները հանրային սեփականության իրավունքի գիտությանը հետաքրքրական են հետևյալ պատճառներով.

- հանրային՝ պետական և համայնքային սեփականության ձեռք բերման միջոցների մասնավոր և համայնքային գույքի սոցիալական գործառույթի գաղափարն է,

- ՀՀ օրենսդրությանը հայտնի հանրային սեփականության պետական և համայնքային ձևերի «ստորադասություն» համայնքային սեփականությանը պետական սեփականությանը օժտում է մասնավոր սեփականության գործառույթներով,

- պետական սեփականության գործառույթներն ակներևում են մասնավոր սեփականության գործառույթներում, քանզի նախ՝ պետությունը կարող է լինել նաև մասնավոր սեփականության սուբյեկտ, և երկրորդ՝ պետությունը կարող է մասնավոր և համայնքային սեփականության դադարման նույն հիմքով դադարացնել պետական գույքի նկատմամբ կնքված քաղաքացիաիրավական գործարքների գործողությունը (օրինակ, պետական գույքը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը) կամ փոխել պետական գույքի օգտագործման նպատակային նշանակությունը (օրինակ, պետական մարմինների /իսկ համայնքի կողմից նաև տեղական ինքնակառավարման մարմինների/ գործունեության համար նախատեսված գույքը, որը պետական սեփականություն է, ուղղել ի կատարումն գերակա հանրային շահի):

Մեզ հայտնի սեփականության սոցիալական գործառույթը սահմանող սահմանադրական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ սոցիալական գործառույթի սահմանադրական նորմերը լինում են երկու տիպի՝ առաջին մոդելը սահմանում է այդ իրավունքի սոցիալական պարտավորություններով ծանրաբեռնված լինելու մասին, մյուս մոդելը՝ դրա բովանդակության սոցիա-

լական գործառույթի սահմանափակվածության մասին: Այդ մոդելների ներքո սոցիալական գործառույթը կարելի է հասկանալ երեք իմաստով.

- գույքը կարող է օգտագործվել կամ հանրային շահի շրջանակներում՝ արդար փոխհատուցման դիմաց, այլ կերպ ասած՝ սեփականությունն անձեռմխելի է, քանի դեռ սոցիալական շահերի նժարը չի սկսել ծանրանալ, երբ հանրային շահը չի սկսել գերակայել,

- գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումն իրականացվում է առանց հանրային շահին վնասելու: Այս ձևակերպման մեջ առավելագույնս է առարկայանում սեփականության անձեռմխելիությունը,

- գույքը օգտագործվում է հանրային շահի մշտական հաշվառմամբ: Նման ձևակերպումն հատուկ է հատկապես մշակութային և պատմական արժեք ներկայացնող օբյեկտների նկատմամբ:

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթ-պարտավորությունների սոցիալականության բանաձևի հիմքում հանգչում է իրավունքի այն աբսոլուտն, ըստ որի՝ իրավունքը հանդես է գալիս որպես փոխզիջման միջոց. մարդու յուրաքանչյուր իրավունքի իրագործումը հանդիպում է միայն այն սահմաններին, որոնք ապահովում են հանրության այլ անդամների, այդ թվում՝ պետության, նույն այդ իրավունքներից օգտվելուն (իմ իրավունքը սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է քոնը): Այս աբսոլուտն ունի պատմական և կրոնական խորը արմատներ. բազմաթիվ հասարակությունների բարոյաընկալման մեջ ընդհանուր է և կազմում է հեթանոսական ակունք ունեցող ավետարանական հետևյալ կարգախոսը. «Ինչ չես ցանկանում քեզ, մի՛ արա և ուրիշներին» (Կոնֆուցիոս, Արիստոտել, Էպիքթետ և այլ)<sup>22</sup>: Հետևաբար՝ սոցիալական գործառույթի նման ըմբռնման դեպքում սոցիալական գործառույթի կողմից սահմանափակված սեփականատիրոջ սեփականատիրական ազատությունը սահմանազատվում է այլոց նույնաբնույթ իրավունքներով կամ ազատությամբ: Սեփականատերը սեփականատիրոջ իր լիազորություններն իրականացնում է՝ մշտապես ի նկատի ունենալով հանրային կամ սոցիալական պահանջները:

Մյուս կողմից սեփականության սոցիալական գործառույթը չպետք է միայն դիտել էքսպրոպրիացիայի դրսևորման ձևով, ինչպես օրինակ Ճապոնիայում, ուր, ըստ սոցիալական գործառույթի գաղափարի, հասկացվում է միայն գույքն ըստ պահանջի հասարակությանը զիջելը՝ արգելելով դրա-

www.lawinstitute.am

նից ավել ծանրաբեռնվածություն սեփականության իրավունքի սուբյեկտին վերապահելը: Սոցիալական գործառույթի նման ընկալումը թերի է և չի ամբողջացնում սեփականության իրավունքի արդի բնութագիրը, չի երաշխավորում պատմական, ազգային և մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների պաշտպանությունը դրանց մասնավորեցման դեպքում:

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգը լիազորում է օրենսդրին, սեփականատերերին ծանրաբեռնել սովորականից ավելի պարտավորություններով (օրինակ՝ հողը)՝ ըստ օբյեկտների հանրության համար նշանակություն ներկայացնելու աստիճանի, ասել է թե՛ պարտավորեցնել սեփականատիրոջը օգտագործել գույքը, օգտագործել ըստ նպատակային նշանակության, չոչնչացնել գույքը և այլն: Սոցիալական գործառույթի ծավալը ուղիղ համեմատական է օբյեկտի հանրային նշանակությանը: Պարտավորություններ ծավալի մեծացումը հաջորդաբար հանգեցնում է հնարավոր պատասխանատվության դաշտի մեծացմանը:

Սեփականության երաշխիքների գործողության ոլորտը որոշվում է սեփականության բովանդակությամբ և սահմաններով: Գույքի կազմի վերաբերյալ երաշխիքները, կարգավորման առնչվող հանձնարարությունը և սոցիալական պարտավորությունները անբակտեիորեն կապված են: Սա հաստատում է նաև Եվրոպական Միության հիմնական իրավունքների խարտիայի 17-րդ հոդվածը: Սակայն, թվարկված գործոններից և ոչ մեկը չի կարող փոխարինվել կամ փոքրացվել հարկերի կամ այլ պարտադիր վճարների գանձմամբ: Այդ բոլորը պետք է հարաբերականորեն հավասարակշռված լինեն<sup>23</sup>:

Գատելով գերմանացի իրավագետ Ռոլֆ Շտոբերի (Rolf Stober)<sup>24</sup> «Տնտեսավարչական իրավունք» աշխատությունից՝ գերմանական իրավաբանական գրականությունում սեփականության իրավունքի պարտավորությունները դասակարգվում են դասականի և ոչ դասականի:

Ըստ դասական գործառույթների՝ սեփականության գործածությունը պետք է բխի նրա բնույթից: Ցանկացած գույք օգտագործվում է առավել արդյունավետ, երբ օգտագործվում է այն նպատակի համար, ինչի համար այն կոչված է: Գույքը ձեռք է բերում որևէ լրացուցիչ գործածություն, երբ դադարում է նրա հիմնական գործառույթը: Անշարժ գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտա-

գործման սկզբունքը թելադրում է օգտագործել անշարժ գույքն առավել արդյունավետ, որը *ֆիզիկապես հնարավոր է, իրավաբանորեն թույլատրելի, ֆինանսապես իրագործելի և ապահովում է անշարժ գույքի առավելագույն արժեքը*: Գերմանական իրավագիտության մեջ այն կոչվում է դասական գործառույթ: Այսպես, հին սեղանը վերածվում է այլ բնույթի կահույքի, ասենք՝ պահարանի: Եվ միայն սոցիալական գործառույթի առկայությունը կարող է հանդես գալ դրա համար խոչընդոտ: Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի գրասեղանը, հանդիսանալով ազգային հանրային սեփականություն, մասնավորեցնելու դեպքում ծանրաբեռնում է մասնավոր սեփականատիրոջը պարտականություններով, ասենք՝ պահպանել և չոչնչացնել գույքը, չօգտագործել այլ նշանակությամբ, և այլն:

Գերմանական իրավագիտական գրականության մեջ բացի սեփականության սոցիալական պարտավորությունների դասական շաղկապվածությունից սեփականության օգտագործումը բնորոշվում է նաև բազմաթիվ այլ պահանջներով՝ ուղղված ընդհանուր բարիքի նվաճմանը: Հետևաբար, անհրաժեշտ է նշել բնապահպանությանը, ժողովրդավարությանը, մշակույթին և տեղեկատվությանը շաղկապված պարտավորությունները: Այս գործառույթները կոչվում են ոչ դասական: Մասնավոր սեփականության հավասարակշռվածությանը հասանելի է պարտավորությունների միջոցով, որի հետևանքով վերածվում է մասնավոր իրավունքի և առհասարակ գույքային իրավունքի կենտրոնական հարցերից մեկը: Այսպես, ժողովրդավարության սկզբունքին շաղկապված պարտավորությունները մարմնավորվում են վարձու աշխատողների ձեռնարկության կառավարմանը մասնակցությանն առնչվող կանոններում<sup>25</sup>: Սոցիալական գործառույթը անձնակազմին ընձեռում է նման իրավունքներով, ընդ որում, երբ վերջիններս ո՛չ համասեփականատերեր են, ո՛չ կազմակերպության անդամներ:

Սեփականատիրոջ լիազորությունների բովանդակությունը կախված քաղաքացիական իրավունքի սուբյեկտից, օբյեկտից, ձևից և այլ հանգամանքներից կարող է փոփոխվել<sup>26</sup>: Հետևաբար, սեփականության իրավունքի օբյեկտից է նաև կախված սեփականության իրավունքի լիազորությունների ծավալը և այդ իրավունքի պաշտպանության սահմանները որոշելու օրենսդրի լիազորությունների շրջանակը: Օրենսդրի լիազորությունների շրջանակը ընդլայնվում է, եթե սեփականության իրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վունքի օբյեկտը իրականացնում է սոցիալական, մշակութային և այլ հանրային-հասարակական նշանակության գործառույթներ: Եվ հակառակը՝ օրենսդրի լիազորությունների ծավալը փոքրանում է, եթե խոսքը վերաբերում է անհատի անձնական ազատության տարր հանդիսացող (մասնավոր) սեփականությանը: Այսպես, Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը կարգավորման հարցում օրենսդրին հանձնարարելը համարում է իր՝ որպես սոցիալական մոդելի իրականացմանն առնչվող խնդիրը, որի նորմատիվ տարրերը բխում են մասնավոր սեփականության ճանաչումից և սոցիալական պատվերից:

Սակայն, այսուամենայնիվ, այն չպետք է չարաշահել սեփականության հարկադիր օտարման ձևով, ինչն անում էին ֆաշիստական Իտալիայի և նացիստական Գերմանիայի իշխանությունները<sup>27</sup>: Նման չարաշահումները կանխելու նկատա-

ռումով սոցիալական գործառույթը, որը, ինչպես արդեն նշվեց, պարտականության յուրահատուկ տեսակ է, պետք է սահմանվի և մանրամասն կարգավորվի օրենքով՝ իրացնելով իրավական պետությունում գործող պարտավորությունների բացառապես օրենքով սահմանելու սկզբունքը<sup>28</sup>: Ընդ որում, իրավական որոշակիությունը ենթադրում-թելադրում է պարտականությունների հստակ սահմանում: Պարտականություն և պատասխանատվություն սահմանող օրենքը պետք է լինի կանխատեսելի, հասանելի, և մատչելի:

Ուստի, ի մի բերելով վերգրյալը՝ առաջարկում ենք սեփականության, այդ թվում՝ հանրային սեփականության՝ որպես սուբյեկտիվ իրավունքի, սոցիալական գործառույթին տալ քաղաքացիաիրավական կարգավորում՝ սույն հոդվածում բարձրացած հարցերի և նկատառումների հաշվառմամբ:

<sup>1</sup> Տե՛ս Սիրումյան Ռ.Ա. Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանական վերլուծություն, Եր., 2003, էջեր 210-218:  
<sup>2</sup> Տե՛ս Չաքարյան Ս. Փիլիսոփայության պատմություն, Եր., 2007, էջ 289:  
<sup>3</sup> Տե՛ս Кулагин М.И. Предпринимательство и право: опыт Запада. – М.: Дело, 1992. С. 109.  
<sup>4</sup> Տե՛ս Մխիթարյան Ռ. Սոցիոլոգիական իրավագիտության ֆրանսիական դպրոցի առանձնահատկությունները // Օրինականություն, 2010 N 58, էջեր 42-47:  
<sup>5</sup> Տե՛ս Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992, p. 148.  
<sup>6</sup> Տե՛ս Айкянц А. М. Актуальные проблемы совершенствования частного права в Армении. Дисс. на соискание ученой степени др. юр. н., М., 2006. С. 255.  
<sup>7</sup> Տե՛ս Սպիրկին Ա.Գ. Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Եր., 1970, էջ 478:  
<sup>8</sup> Տե՛ս Жажда собственности так же естественна, как и голод (Сперанский П.А) // Белокрылова О.С. Теория переходной экономики. Учебное пособие. Ростов-на-Дону, 2002. С. 42.  
<sup>9</sup> Տե՛ս Նժդեհ Գ. Մեծ գաղափար: Նորահայտ մասունքներ/. - Եր.: Ամարաս, 2003, էջ 134:  
<sup>10</sup> Տե՛ս Малиновский А.А. Назначение субъективного права (Лекции) // Правоведение, 2006, N 6. С. 228.  
<sup>11</sup> Տե՛ս Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992. С. 148, Латинские юридические изречения // составитель и автор предисловия проф. Е.И. Темнов. – М.: Изд. “Экзамен”. Право и Закон, 2003. С. 155.  
<sup>12</sup> Տե՛ս Якушев А.В. Конституционное право зарубежных стран. Общая часть. Особенная часть. Конспект лекций. – М.: Приор-издат, 2005. С. 107.  
<sup>13</sup> Տե՛ս հոդ. XII (Owning property carries a social responsibility), Հունգարիայի Սահմանադրություն, 25.04.2011 // [http://www.euractiv.com/sites/all/euractiv/files/CONSTITUTION\\_in\\_English\\_DRAFT.pdf](http://www.euractiv.com/sites/all/euractiv/files/CONSTITUTION_in_English_DRAFT.pdf)  
<sup>14</sup> Տե՛ս հոդ. 17, Հունաստանի Սահմանադրություն, 11.06.1975 թ. // <http://www.hri.org/docs/syntagma/artcl25.html#A17>  
<sup>15</sup> Տե՛ս հոդ. XII, Թուրքիայի Սահմանադրություն, 7.11.1982 թ. // <http://right777.ru/konst.html#id38>  
<sup>16</sup> Տե՛ս Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992, p. 149.  
<sup>17</sup> Տե՛ս Մեծ փիլիսոփայություններ / ֆրանս. թարգմ.՝ Ս. Խաչատրյան. - Եր.: Սարգիս Խաչենց, 2002, էջ 71:  
<sup>18</sup> Տե՛ս Անդրեասյան Գր. Մ. Գերմաներեն-հայերեն բառարան / խմբագիր Ե.Գ. Տեր-Սիմասյան, Եր.: ԵՊՀ հրատ., 1976, էջ 51:  
<sup>19</sup> Տե՛ս 48 հոդ., Խորվաթիայի Սահմանադրություն, 22.12.1990 թ. // <http://right777.ru/konst.html#id38>  
<sup>20</sup> Տե՛ս Auby Jean-Bernard, La globalisation, le droit et l’Etat, 2e nd., Paris, 2010, p.175-182.  
<sup>21</sup> Տե՛ս «Հասարակության և պետության կարիքների սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 27.11.2006թ.:  
<sup>22</sup> Տե՛ս Կոնֆուցիոս զրույցներ, Եր. 1991, էջ 88; Աստվածաշունչ, Մատթեոս 7:12, էջմիածին, 2001; Спиноза Б. Богословско-политический трактат, 1670, Г. XVI; Антология мировой философии, Т. 1, Ч. 1, М. 1969. С. 519.  
<sup>23</sup> Տե՛ս Штобер Р. Хозяйственно-административное право. Основы и проблемы. Мировая экономика и внутренний

рынок; пер. с нем. – М.: Волгерс Клувер, 2008. С. 199-200.

<sup>24</sup> Տե՛ս Ռոլֆ Շտոբեր – իրավ. գիտ. դ., պրոֆեսոր, Համբուրգի համալսարանի հանրային իրավունքի և պետության տեսության ամբիոնի պրոֆեսոր, Տնտեսական իրավունքի ինստիտուտի տնօրեն:

<sup>25</sup> Տե՛ս Штобер Р. նույն տեղում:

<sup>26</sup> Տե՛ս Хачатрян М.А. Проблема соотношения прав распоряжения и завещания в Конституции РА // Գատական իշխանություն, 2007, N 11-12 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 42; տե՛ս նաև Բազմաբնակարան շենքը՝ որպես գույք // Գատական իշխանություն, 2009, N 7/120 (հուլիս), էջ 48, Բազմաբնակարան շենքը՝ որպես սեփականության իրավունքի օբյեկտ // Երրորդ տարեկան գիտաժողով (5-10 դեկտեմբերի 2008 թ.). Գիտական հոդվածների ժողովածու, Մաս 1, Եր., ՀՌ-Հ հրատարակչություն, 2009, էջ 611:

<sup>27</sup> Տե՛ս Венедиктов А. В. Государственная социалистическая собственность // Избранные труды по гражданскому праву. В 2 т., Т. II., М.: «Статут», 2004. С. 274.

<sup>28</sup> Տե՛ս Այդ սկզբունքը ամրագրված է և ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետում:

## РЕЗЮМЕ

### *Социальная функция права публичной собственности*

Настоящая статья посвящается роли права собственности в современном обществе. В частности, автор представляет на уровне метафизики научную концепцию “обязующее право собственности”. В данной статье автор обратился к определению социальной функции права публичной собственности, содержания, которая относительна по национальным правовым системам, по национальным и международным измерениям, по объекту права собственности и т.п. Эти концепции права собственности рассматривают право собственности как социально обусловленное и обремененное социальными обязательствами. Однако, для того, чтобы это право через идею социальной функции не было злоупотреблено, как это имело место в фашистской Италии и националистической Германии, автор предлагает произвести новое законодательное урегулирование обремененного социальной функцией права собственности.

## SUMMARY

### *Social function of public property law*

The present article is dedicated to the role of property law in modern society. In particularly, the author tries to represent the scientific concept of “obligatory property law” on metaphysical level. The author touched upon the problem of definition of the social function of the public property law. The contents which are relative by national legal system, by national and international dimensions and the objects of property law, etc. Those concepts observe the rights of property law as overloaded by social functions. However, not to have the social function trespassed by authorities, as for example it took place in fascist Italy and nationalist Germany the author suggests that obligation issues derive from social function, to have it regulated and controlled by laws.

## ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ



### ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

Հայաստանի Հանրապետությունում գործող ցանկացած դատական ատյան հայցադիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներկայացվող փաստաթուղթը բավարարի որոշակի իրավական պահանջներին: Դատավարական օրենսգրքերով հստակորեն ամրագրված են անհրաժեշտ բոլոր պահանջներն ու նախապայմանները, որոնք չբավարարելու դեպքում հայցադիմումի ընդունումը մերժվում է: Սույն աշխատանքի շրջանակներում դատավարական օրենսգրքերի շարքում հարկ ենք համարում առանձնապես անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), որը նույնպես պարունակում է հայցադիմումի ընդունումը մերժելուն վերաբերող դրույթներ:

Այսպես, Օրենսգրքի 79-րդ հոդվածը, որը զետեղված է 12-րդ գլխում («Հայցադիմումի ընդունումը, հայցադիմումը վերադարձնելը, հայցադիմումի ընդունումը մերժելու ընթացակարգը, դրա հիմքերն ու պայմանները: Մասնավորապես, վարչական դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժվում է հետևյալ դեպքերում. եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին, և նույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այլ դատարանի վարությամբ առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, **հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը** (1-ին մաս, կետ 4), Օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար, մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն հետ վերցնելու մասին, բացառությամբ Օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի: Նույն հոդվածի 2-րդ մասի համա-

ձայն՝ անձը գործի հարուցումը մերժելուց հետո չի կարող նույն առարկայի և միևնույն հիմքերով կրկին դիմել դատարան, բացառությամբ այդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված դեպքերի, իսկ 3-րդ մասը նախատեսում է, որ վարչական դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կայացնում է որոշում՝ եռօրյա ժամկետում որոշումը ուղարկելով հայցվորին և պատասխանողին, իսկ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ հայցվորին:

Գործնականում հաճախ բախվում ենք այնպիսի մոտեցման հետ, համաձայն որի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով վերջինս հնարավորություն է տալիս դատարանին՝ ի խախտումն կողմերի իրավահավասարության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների, առանց գործի ըստ էության քննություն իրականացնելու և քննվող գործի վերաբերյալ կողմերին իրենց դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն ընձեռելու՝ գնահատել և ըստ էության լուծում տալ նյութական իրավունքի վերաբերյալ վեճին, որոշել կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակությունը, քննել դատավարական բնույթի այլ հարցեր գործը վարույթ ընդունելու փուլում, որում կողմերի մասնակցությամբ դատական նիստ չի անցկացվում: Ներկայացված հարցադրումներին անդրադառնում ենք ստորև.

Նախևառաջ նկատենք, որ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին» N-127 որոշմամբ այդ իրավադրույթի կիրառման վերաբերյալ տրվել է որոշակի պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում)<sup>1</sup>, որի վերլուծության և ընդհանրացման արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը,

www.lawinstitute.am

որ վիճարկվող իրավանորմը մեկնաբանելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնել, մասնավորապես, հետևյալ դրույթների վրա՝

- վարչական դատավարության օրենսգիրքն առաջին հերթին հայց ներկայացնելու հնարավորություն է ընձեռում միայն այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնց իրավունքները և շահերը խախտվել են, և նման հնարավորություն չի ընձեռում յուրաքանչյուր անձի՝ հանրության շահերը պաշտպանելու համար, այսինքն՝ չի թույլատրում իրականացնել իրավաչափության լոկ օբյեկտիվ վերահսկողություն:

- անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի խախտված «իրական (ռեալ)» իրավունքներ:

- հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դատարանը պետք է գնահատի հայցի թույլատրելիությունը, մասնավորապես, առկա չեն արդյո՞ք հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքեր:

- նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում բացառելու այն գործերի *անհարկի քննությունը*, որոնք ներկայացվել են *ակնհայտորեն հայց հարուցելու իրավունք չունեցող անձանց կողմից*, ինչը բխում է հենց դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից, քանզի անձը անտեղի ժամանակ չի վատնի գործի քննությանը մասնակցելու վրա, նախապես կտեղեկացվի խախտված իրավունքի սուբյեկտ չհանդիսանալու մասին:

- սույն իրավակարգավորումը հարկ է դիտարկել բողոքարկման իրավունքի առկայության համատեքստում, ինչի պարագայում ակնառու է, որ կողմը երբևէ չի գրկվում արդար դատաքննության իր իրավունքից և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկել օրենսգրքով սահմանված ընթացակարգերի համաձայն:

Այսպես, վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել *նրա՝* սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, *նրա վրա* ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, *նա* վարչական կարգով ոչ իրավաչափորեն են-

թարկվել է վարչական պատասխանատվության:

Այս առումով նշենք, որ հիմնագուրկ ենք համարում ներկայացվող այնպիսի փաստարկը, համաձայն որի՝ սահմանադրական կարևորագույն սկզբունքների վրա հիմնված 3-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական դատարան դիմելու իրավունքը 79-րդ հոդվածով սահմանափակվում է, քանզի ուսումնասիրվող իրավիճակում հնարավոր չէ արձանագրել վարչական դատարանի կողմից անձանց իրավահավասարության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների խախտում, մասնավորապես, այն պատճառաբանությամբ, որ Օրենսգրքի 3-րդ հոդվածի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի միջև թվացյալ հակասականությունն իրականում գոյություն չունի: Տվյալ դեպքում 3-րդ հոդվածը կարելի է համարել ընդհանուր նորմ (և ոչ միայն Օրենսգրքի 3-րդ հոդվածը, այլ նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը, ըստ որի՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ), իսկ 79-րդ հոդվածով նախատեսված դեպքերը կարող ենք ընկալել որպես հատուկ նորմ կամ ընդհանուր նորմից բացառություն, այդ կանոնի առանձնահատուկ արտացոլում:

Ինչպես հայտնի է, իրավաբանական գրականության մեջ հանդիպում են իրավական նորմերի տարբեր դասակարգումներ, որոնցից մեկն էլ ըստ իրենց կարգավորող գործողության ոլորտի (կամ ծավալի) նորմերի տարանջատումն է ընդհանուր (*jus generalis*) և հատուկ (*jus specialis*) նորմերի, երբեմն էլ հանդիպում է բացառիկ կամ յուրահատուկ նորմ (*jus singulare*) հասկացությունը: Ամեն դեպքում պարզ է, որ հատուկ կամ բացառիկ նորմը չի կարող հակասել ընդհանուր իրավադրույթին, քանզի ընդհանուր նորմերը սահմանում են ընդհանուր բնույթի իրավակարգավորումներ, իսկ հատուկ նորմերն ապահովում են միևնույն առարկայի առավել կոնկրետ, մանրամասն և առանձնահատուկ կարգավորումը: Բացի այդ, հանրահայտ է լատիներեն *“lex specialis derogat generalis”* արտահայտությունը, ինչը թարգմանվում է «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրը կամ դադարեցնում է ընդհանուրի գործողությունը»: Այդ սկզբունքից բխում է, որ ընդհանուր և հատուկ բնույթի իրավական նորմերի միջև ծագող հնարավոր հակասության դեպքում նախապատվությունը տրվում է *հատուկ նորմին*, այսինքն՝ քննարկվող հոդվածը, 3-րդ հոդվածի համեմատությամբ նախատեսելով այլ իրավակարգավորում և վերջինիս նկատմամբ սահմանելով բացառություն, ստանում է առաջնային բնույթ, ուս-

տիև գործնականում դրա գործողության իրավաչափության վերաբերյալ որևէ կասկած չի կարող առաջանալ:

Բացի այդ, Օրենսգրքի 3-րդ հոդվածը և սահմանում է ոչ թե բացարձակապես յուրաքանչյուրի վարչական դատարան դիմելու իրավունքը, այլ *միայն նրանց, ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են կամ էլ կարող են խախտվել*, այսինքն՝ ըստ երևույթին, խոսքը *միայն շահագրգիռ անձանց* մասին է:

Հարկ ենք համարում ՀՀ օրենսդրությունում առկա վերոնշյալ հոդվածը դիտարկել ինչպես մեր պետության ողջ օրենսդրական բազայի տրամաբանության համատեքստում, այնպես էլ անդրադարձ կատարելով վերջինիս սահմանադրականության խնդրի ուսումնասիրության շրջանակներում մեր երկրում սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմնի իրավական դիրքորոշումներին:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը, իր որոշումներից մեկում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությանը, արձանագրում է, որ այդ նորմով դատարան դիմելու իրավունքը վերապահվում է շահագրգիռ անձին, այն է՝ *անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են*: Միաժամանակ, գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը զնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու զնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի *իրավական շահագրգռվածություն*<sup>2</sup>:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը կանոնակարգող միջազգային իրավական կարևորագույն փաստաթղթերում առկա հետևյալ ձևակերպումները.

Այսպես, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, Սահմանադրությամբ կամ օրենքով *իրեն* վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական ատյանների (ազգային դատարանների) կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք», իսկ 10-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, *իր* իրավունքների և պարտականությունների սահմանման և *իրեն* ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի և

հրապարակային դատաքննության իրավունք»:

1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են *նրա* քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ *նրան* ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք, *նրան* ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ դատավարությունում *նրա* իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները նույնպես, համապատասխանաբար նախատեսելով յուրաքանչյուրի *իր* իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք և *իր* խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև *իրեն* ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար համապատասխան ընթացակարգով իր գործի քննության իրավունք ունենալու հնարավորությունները, մատնանշում են հենց «*իր իրավունքներ*» արտահայտությունը, ինչը հաստատում է, որ իրավունքների պաշտպանության ինստիտուտը ենթադրում է ոչ թե վերացականորեն պաշտպանություն հայցող, այլ կոնկրետ գործով իրավական շահագրգռվածություն ունեցող անձի դատարան դիմելու իրավունքի առկայությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ ևս արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ՝ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան

դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց **իրավունքները խախտվել են<sup>3</sup>**:

Օրենսդրական որոշակի դրույթների վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը փաստում է, որ այս կամ այն դատավարության շրջանակներում շահագրգիռ անձանց ներքո հանդես են գալիս նախևառաջ այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, և ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է միայն սահմանափակ դեպքերում և նախատեսված է այն իրավիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պատճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան (օրինակ՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելը), կամ օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի և հանրային շահերի համատեքստում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում): Այդուհանդերձ, բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ (նշված որոշման 6-րդ կետ):

Ավելացնենք նաև, որ նույն որոշման 8-րդ կետում սահմանադրական դատարանը նշում է, որ վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (“Actio popularis”) առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի, և մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»:

Սույն վարչադատավարական նորմը հարկ է դիտարկել նաև բողոքարկման իրավունքի կիրառելիության լույսի ներքո, ինչի կապակցությամբ նշենք, որ Օրենսգրքի 22-րդ գլխի 125-րդ հոդվածը սահմանում է բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակը, մասնավորապես ամրագրելով, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են հետևյալ միջանկյալ դատական ակտերը՝ **հայցադիմումի ընդունումը մերժելու մասին**, վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժելու մասին, հայցադիմումը վերադարձնելու մասին և

այլն: Բացի այդ, հիշատակված հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկություն կարգով: Հետևապես, անձը չի գրկվում արդար դատաքննության իրավունքից, քանզի նա իրավունք ունի բողոքարկելու համապատասխան դատական ակտը, եթե համարում է, որ ինքը սովյալ գործով, այնումենայնիվ, հանդիսանում է շահագրգիռ անձ և կարող է ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, բողոքը հիմնավորող առավել ծանրակշիռ փաստարկներ և այլն:

Օրենսգրքի ուսումնասիրվող հոդվածին ՀՀ սահմանադրական դատարանը անդրադարձել է ՄԳՈ-1022 որոշմամբ, որում, մասնավորապես, արձանագրում է, որ օրենսդիրը, նախատեսելով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, նրանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների, այն է՝ «իրավական շահի» առկայությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր դատավարական սուբյեկտի պարագայում այն կրում է իրեն ներհատուկ բնույթ: Նրանց «իրավական շահը», կախված գործի փաստական հանգամանքներից, ինչպես նաև կոնկրետ սուբյեկտի իրավական կարգավիճակից, կրում է անհատականացված, կոնկրետ հասցեավորված բնույթ, և դրա առկայությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է պարտադիր բացահայտման վարչական դատավարության՝ հայցադիմումի ընդունելիության փուլում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև *համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու նկատմամբ իրավական շահի առկայության համատեքստում*՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները:

Բացի այդ, դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը, սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, որոնց իրականացմամբ՝ դատարանը վարչական դատավարու-

թյան հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը**: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամբողջամամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը**, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը (հիշատակված որոշման 7-րդ կետ):

Անշուշտ, **«հայցադիմում ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունեցող անձ»** եզրույթի էությունն ու իրավական բովանդակությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է բացահայտել «ակնհայտ» հասկացության և **ակնհայտության չափանիշի** բովանդակությունը:

Այսպես, Հր. Աճառյանի բառարանում նշվում է. «Ակն - առաջին և հիմնական նշանակությունն է «աչք», ակն տալ «նայիլ, դիտել», ական դիպել «աչքին զարնել», «հայ (հայտ) «նայիլ», առանձին անգործածական, որից կազմված են՝ հայիլ «նայիլ, դիտել», հայարան «աչք»»: Մեկ այլ

բառարանում «ակնհայտ» բառի բացատրությունը տալու նպատակով հղում է կատարվում հոմանիշ բառի վրա՝ ակներև, (ակնյայտ, ակնյայտնի, ակնյայտնի ճշմարտություն), իսկ ակներև բառն իր հերթին նշանակում է. 1. աչքին պարզ երևացող, ակնյայտնի, անկասկածելի, Ակներև է, որ... Ակներև դարձավ, 2. Ակներև՝ ակնյայտնի կերպով: Ակներև ապացուցել:

Այս բառի (կամ դրա բաղադրիչների) վերոնշյալ բառարաններում տեղ գտած բացատրության վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ ակնհայտությունն իրենից ներկայացնում է **անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակներևություն**:

Այս առումով հարկ է նկատել, որ սահմանադրական դատարանի կարծիքով՝ միանգամայն տեղին է դատական դեպարտամենտի դիրքորոշման մեջ կատարված այն շեշտադրումը, համաձայն որի՝ **սույն նորմում տեղ գտած ձևակերպումը կարող է վերաբերել միայն չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, և, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման**:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1022 որոշման շրջանակներում միաժամանակ նշում է, որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլում **նյութական իրավունքի խախտման փաստի առկայության պարզումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կամ հերքումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների ու կողմերի իրավունքների պահպանմամբ, հակառակ դեպքում արդարացի դատաքննության իրավունքը կիմաստազրկվի: Հետևաբար, նշված փուլում ուսումնասիրվող նորմը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես **նյութական իրավունքի խախտման առկայությունն ստուգելու՝** վարչական դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ **ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից**, սահ-

մանափակելով վարչական դատարանի մատչելի-  
ությունը՝ դատական պաշտպանության սահմա-  
նադրահրավական միջոցը դարձնելով անարդյու-  
նավետ: Այս փուլում, ինչպես նշվեց, դատարանի  
խնդիրն է ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի  
խախտման առկայությունը, այլ ենթադրյալ  
խախտված իրավունքը՝ տվյալ անձին ակնհայտորեն  
պատկանելու կամ չպատկանելու հանգաման-  
քը:**

Եվ, առհասարակ, ուշադրության է արժանի  
այն հանգամանքը, որ հայցադիմում ներկայացնե-  
լու իրավունքի ակնհայտ բացակայության պարա-  
զայում դատարանի **ոչ թե իրավունքը, այլ պարտա-  
կանությունն է** մերժել դրա ընդունումը և իրավացի-  
որեն խուսափել ոչ տեղին ու քննության ոչ ենթակա  
գործերի հետազոտությունից, ինչն էլ հանգեցնում է  
դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածու-  
թյան և դատարանի վարույթում գտնվող մյուս գոր-  
ծերի քննության անհարկի ձգձգումների:

Միանշանակորեն ընդունելի ենք համարում  
այնպիսի իրավակարգավորումը, համաձայն որի՝  
հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դատա-  
րանը պետք է զննհատի հայցի թույլատրելիությու-  
նը և անդրադառնա այն հարցադրումներին, թե  
արդյո՞ք առկա չէ հայցադիմումը վերադարձնելու  
կամ դրա ընդունումը մերժելու որևէ հիմք: Օրենսգր-  
քի 76-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումն  
ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում դա-  
տարանը կայացնում է հետևյալ որոշումներից մե-  
կը՝ կամ հայցադիմումը վարույթ ընդունելու, կամ  
այն վերադարձնելու, կամ էլ դրա ընդունումը մեր-  
ժելու մասին: Դատավորը պարտավոր է վարույթ  
ընդունել Օրենսգրքով նախատեսված պահանջնե-  
րի պահպանմամբ ներկայացված հայցադիմումը,  
եթե, իհարկե, առկա չեն 78-րդ և 79-րդ հոդվածնե-  
րով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժե-  
լու կամ այն վերադարձնելու հիմքերը: Բացի այդ,  
Օրենսգրքի 77-րդ հոդվածի 7-րդ մասն ամրագրում  
է, որ վարչական դատարանը սուսկ ձևական թերու-  
թյունների հիմքով հայցադիմումը վարույթ չընդու-  
նելու իրավունք չունի:

Անկասկած, կարող ենք փաստել, որ հայ-  
ցադիմում ներկայացնելու իրավունք *ակնհայտորեն  
չունենալը* երբևէ չի կարող համարվել ձևական,  
առավել ևս ոչ էական թերություն կամ խախտում:  
Տվյալ իրավիճակում հայցադիմումը վարույթ չի ըն-  
դունվում, քանզի ինչպես բուն հայցադիմումի, այն-  
պես էլ դրան կից փաստաթղթերի «մակերեսային»  
և ընդհանրական ուսումնասիրությունն իսկ բավա-  
րար հիմք է հանդիսանում, որպեսզի դատարանի  
համար պարզ լինի կոնկրետ անձի այդ գործով շա-  
հագրվող անձ չլինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է այնպիսի պնդումներին,  
թե համապատասխան դրույթի կիրառման դատա-  
կան պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է  
դատարանների կողմից տվյալ հարցի վերաբերյալ  
ցուցաբերվող հակասական մոտեցումների մասին,  
և թե հենց վիճարկվող նորմի բովանդակությամբ  
պայմանավորված իրավական անորոշությունն է  
իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում վերջի-  
նիս այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը,  
որը խախտում է կամ կարող է խախտել անձի  
կոնկրետ սահմանադրական իրավունքներ, նշենք,  
որ նմանաբնույթ պնդումներն ըստ էության, հիմնա-  
գուրկ են, մասնավորապես, հետևյալ պատճառա-  
բանությամբ.

Այսպես, սույն գիտական աշխատանքի  
շրջանակներում ուսումնասիրության առարկա  
իրավանորմի հետազոտության տեսնակյունից  
կարևոր է պատասխանել այն հարցադրմանը, թե  
վերոհիշյալ դրույթի նմանօրինակ ձևակերպումը  
կարող է արդյո՞ք առաջացնել իրավական անորոշ-  
ություն և հանգեցնել իրավակիրառական այնպիսի  
պրակտիկայի ձևավորմանը, որի պայմաններում  
խախտվեն անձի սահմանադրական հիմնարար  
իրավունքները:

Կարծում ենք, որ վերոգրյալ իրավանորմը  
«*չի տառապում իրավական անորոշության ախ-  
տանիշով*», քանի որ իրավական որոշակիության  
հիմնարար սկզբունք ասելով հասկանում ենք, որ  
վարքագծի համապատասխան կանոնը ոչ միայն  
պետք է ամրագրված լինի կոնկրետ իրավական  
ակտում, այլև այն, որ օրենքով նախատեսված լի-  
նելու պահանջը չի կարող նշանակել զուտ ձևական  
ամրագրում օրենքում, իրավական նորմերը ոչ մի-  
այն պետք է ուղղակի սահմանված լինեն օրենքում,  
այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնեն կար-  
գավորող օրենքի որակին, ինչպես նաև այդ օրենքը  
պետք է համապատասխանի իրավական որոշակի-  
ության սկզբունքին: Այս առումով ՀՀ սահմանադ-  
րական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԳՈ-630  
որոշման 11-րդ կետում՝ նշել է. «*որևէ իրավական  
նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի հա-  
մապատասխանում իրավական որոշակիության  
(res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված  
չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ  
տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վար-  
քագիծը:*»:

Այդուհանդերձ, խնդրո առարկա իրավա-  
նորմի և դրա իրավակիրառ պրակտիկայի հա-  
մադրված վերլուծության արդյունքում պարզ է  
դառնում, որ օրենսդրական մասն կարգավորումը  
չի առաջացնում իրավական անորոշություն, որով-  
հետև օրենսդրի կողմից դրա բովանդակությունը

ձևակերպված է բավարար ու անհրաժեշտ հստակությամբ, ինչն ընկալելի և ըմբռնելի է դարձնում սույն նորմը թե՛ ֆիզիկական/իրավաբանական անձանց, և թե՛ դատարանների համար: Ուստի, նման պայմաններում բացառվում է դատարանի կողմից հնարավոր հայեցողության դրսևորման չարաշահման հավանականությունը:

Այսօրինակ իրավակարգավորում նախատեսելիս՝ իրավաստեղծ մարմինը հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա նույնպիսի իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն ու կայացումը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը, և մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ևս մեկ

անգամ փաստում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այս նորմը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն:

<sup>1</sup> Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 17.09.2011թ. որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 4-ի ՍԳՈ-747 որոշումը, կետ 7:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. սեպտեմբերի 7-ի որոշումը, ՍԳՈ-906, կետ 5-8:

<sup>4</sup> Տե՛ս «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. ապրիլի 17-ի որոշումը, ՍԳՈ-1022, կետ 4:

<sup>5</sup> Տե՛ս Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե.-1971, Ա հատոր, Ա-Գ, էջ 106-108 և Ե.-1977, Գ հատոր, Հ-Չ, էջ 29-30:

<sup>6</sup> Տե՛ս Հայերեն Բացատրական Բառարան, Ստ.Մալխասեանց: Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, Եր.-1944, էջ 54:

## РЕЗЮМЕ

### *Некоторые проблемы, связанные с отказом в принятии иска административным судом, в свете правовых позиций конституционного суда РА*

Данная статья посвящена изучению конституционности п. 4 ч. 1 статьи 79 Административно-процессуального кодекса Республики Армения. Автор проанализировал актуальные проблемы, связанные с правом Административного Суда отказать в принятии некоторых исков по той причине, что они представлены людьми, очевидно не обладающими таким правом. В этой работе были изучены различные подходы решения проблем, возникающих в теории и на практике, и в частности, были представлены правовые позиции онституционного Суда РА о конституционности данной нормы.

## SUMMARY

### *Some problems connected with refusal to accept application by the administrative court in the light of legal positions of the constitutional court of RA*

This article is devoted to the study of constitutionality of paragraph 4, part 1, article 79 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia. The author has analyzed current problems associated with the the right of Administrative Court to refuse to accept some applications because they are represented by people who obviously don't have such right. In this work were studied different approaches of solving the problems, arising in the theory and practice, and particularly were presented legal positions of the Constitutional Court of RA on the constitutionality of this norm.

### ԷԴՈՒԱՐԴ ԱՎԱԳՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և  
մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

## **ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ. ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒ ԵՎ ԶԱՂԱԶԱՅՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում, սահմանադրական բարեփոխումներով պայմանավորված, վերջին տարիներին նկատվում է միջազգային և ներպետական իրավունքի նորմերի մերձեցման միտում: Այդ մերձեցման ճանապարհին զգալի քայլ հանդիսացավ 2005 թվականին Հայաստանի Հանրապետության նոր խմբագրությամբ Սահմանադրության ընդունումը: Արդեն իսկ նախաբանում խոսվում է այն մասին, որ հայ ժողովուրդն ընդունում է Սահմանադրությունը «... հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածում սահմանում է, որ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», իսկ 6-րդ հոդվածով հռչակվում է, որ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, ինչպես նաև ճանաչվում է ՀՀ միջազգային պայմանագրերի առաջնայնությունը ներպետական օրենսդրության նկատմամբ: Կարևոր է ընդգծել, որ նշված նորմերն ամրագրված են որպես սահմանադրական ընդհանուր իրավական սկզբունքներ, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքներից:

Ի տարբերություն նախկին ՀԽՍՀ Սահմանադրության, այս նորմերը մեր երկրի համար նոր են: Նախկինում խորհրդային օրենսդրությունը տարբեր ակտերում պարունակում էր միայն միջազգային պայմանագրերի հղումային նորմեր և դրանց կիրառման կանոնների մասին հիշեցումներ՝ ներպետական իրավունքի հետ դրանց կոլիզիայի դեպքում: ԽՍՀՄ Սահմանադրության մեջ միջազգային պարտավորությունների կամավոր կերպով

կատարման սկզբունքի առկայությունը կրում էր խիստ ընդհանուր բնույթ, հաշվի չէր առնում միջազգային իրավունքի հետ ՀԽՍՀ իրավունքի հարաբերակցության ընդհանուր հայեցակարգերը: Վերը բերված սահմանադրական նորմերը նոր խթան հաղորդեցին միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության ոլորտում կատարվող հետազոտություններին: Առաջվա պես բաց է մնում այն հարցը, թե միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հայեցակարգերից որն է Հայաստանի Հանրապետության համար հանդիսանում օպտիմալ: Տվյալ հիմնահարցի առումով գիտնականների և հետազոտողների կարծիքները միանշանակ չեն:

Միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության և փոխգործակցության բնույթի ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է դիմել այս հարցի պատմությանը:

Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության մասին հարցը ծագել է վերջինիս առաջացման հետ մեկտեղ: Բայց երկարատև ժամանակի ընթացքում այն գիտության պահանջ ներկայացնող հարցերից չէր, ինչը բացատրվում է, նախևառաջ, ներպետական իրավունքի և մինչկապիտալիստական հասարակարգեր ունեցող պետությունների միջազգային հարաբերությունների բնույթով. այդ ժամանակ ի դեմս միապետի՝ կենտրոնացված էր և՛ օրենսդիր իշխանությունը, և՛ միջազգային պայմանագրեր կնքելու իրավունքը: Դա զգալիորեն վերացրել էր օրենքի և պայմանագրի միջև կոլիզիաների առաջացման հնարավորությունը: Սակայն, հիմնախնդիրներ ծագում էին արդեն այն ժամանակ: Այսպես, օրինակ՝ XIV դարում բախում ծագեց Լիտվական իշխանության ներպետական իրավունքի և լիտվական մեծ իշխանի կողմից Իվան III-ի հետ կնքված պայմանագրի մեջ<sup>2</sup>:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցությունը XIX դարի կեսից սկսել է դիտվել դոկտրինա: Արդեն այդ ժամանակ մշակվել են այդ հարաբերակցության հիմնական սկզբունքները: Դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ հաստատվում է պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը և տեղի է ունենում էլ ավելի ակտիվ միջպետական գործունեություն:

Իրավագիտությունը միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցի առումով մշակել է երեք հիմնական հայեցակարգեր, որոնց արդիականությունը պահպանվել է ցայսօր: Դրանք են՝ դուալիստական ու մոնիստական տարատեսակները, որոնցում ներպետական իրավունքին վերապահվում է գերակայություն միջազգայինի նկատմամբ, ինչպես նաև երրորդ հայեցակարգը, ըստ որի՝ միջազգային իրավունքը գերակա է ներպետականի նկատմամբ:

**Դուալիստական հայեցակարգ:** Այս հայեցակարգը ի հայտ է եկել XIX դարի վերջին: Դրա ներկայացուցիչները (գերմանացի Գ.Տրիպելը, իտալացի Դ.Անցիլոտը, անգլիացի Լ.Օպենհեյմը) միջազգային և ներպետական իրավունքը դիտում էին որպես ինքնուրույն իրավական համակարգեր, որոնք վերաբերում են համաստորադասվածության մեջ չգտնվող տարբեր իրավակարգերի: Սկզբում դուալիստական տեսությունը ընդգծում էր ոչ այնքան այդ համակարգերի միջև կապը, որքան դրանց տարբերությունը և անկախությունը:

Համաձայն դուալիստական տեսության՝ միջազգային և ներպետական իրավունքը միմյանցից էապես տարբերվում են, նախևառաջ, դրանցով կարգավորվող հարաբերությունների առումով: Ներքին իրավունքը որոշվում է ինքն իրենով, այն սահմանափակվում է տարածքով և կարգավորում է ընդհանուր իրավահարաբերությունները, որոնք ծագում են պետության ներսում՝ քաղաքացիների միջև կամ պետության և քաղաքացիների միջև: Միջազգային իրավունքը կարգավորում է պետությունների՝ որպես «ժողուրդների ընտանիքի անդամների» միջև հարաբերությունները: Հարկ է նկատել, որ, ըստ այդ հայեցակարգի կողմնակիցների, միջազգային և ներպետական իրավունքները միմյանցից տարբերվում են նաև ըստ աղբյուրների, ընդ որում՝ միջազգային իրավունքի աղբյուրներին պետք է դասել միջազգային սովորույթները, պետությունների կողմից կնքված պայմանագրերը, իսկ ներպետական իրավունքի աղբյուրին՝ «սովյալ պետության սահմաններում զարգացած սովորույթն է և նրա օրենսդիր իշխանության ակտերը»:

Դուալիստական տեսությունը միջազգային

իրավական նորմերի առաջացումը բացատրում է, այսպես կոչված, պետությունների ընդհանուր կամքի առաջացմամբ: Այդ ընդհանուր կամքը դրսևորվում է միջպետական իրավակազմիչ համաձայնագրում: Ելնելով դրանից՝ դուալիստական տեսության ներկայացուցիչները եզրահանգում են, որ միջազգային իրավունքը ո՛չ ամբողջապես, ո՛չ մասնակիորեն չի կարող լինել ներքին իրավունքի մաս: Ներքին իրավունքն օժտված չէ ներպետական իրավունքի նորմեր փոփոխելու կամ ստեղծելու ուժով: Ռուս հայտնի իրավագետ Լ.Ա. Կամարովսկին ընդգծել է. «...պետք է խստիվ սահմանազատել փոխկապակցված բնագավառները՝ պետական և միջազգային. չի կարելի հավանության արժանացնել՝ առանց պետական սկզբունքները միջազգային հարթություն փոխադրելու, ինչպես դա փորձում էր անել լեգիստիկան, որևէ պետական կարգ առանց միջազգային միջոցներով պաշտպանելու»<sup>4</sup>:

Դուալիզմը հետագայում լայն ճանաչում ստացավ իրավագիտության մեջ: Դրա կողմնակիցները նաև մեր ժամանակներում ևս գտնում են, որ ձևականորեն միջազգային և ներպետական իրավունքները՝ որպես համակարգեր, երբեք չեն կարող հակամարտության (կոնֆլիկտի) մեջ գտնվել: Կարող է տեղի ունենալ որևէ այլ բան, և հենց պետության պարտավորությունների կամ ներքին առումով գործելու՝ ինչպես դա իրենից պահանջում է միջազգային իրավունքը, անկարողումակության բախում (կոնֆլիկտ)<sup>5</sup>:

Սկզբում դուալիզմի հայեցակարգն արտացոլում էր միջազգային և ներքին իրավունքի հարաբերակցությունը, ընդ որում՝ թերագնահատելով երկու համակարգերի փոխկապակցությունը: Պատահական չէ, որ այդ հայեցակարգի կողմնակիցները հաճախ որոնում են այդ թերությունը հաղթահարելու ուղիներ և կոլիզիաները հաղթահարելու միջոցներ: Բուլղարացի իրավաբան Պ. Ռադոյնովն առաջ քաշեց իրատեսական (ռեալիստական) դուալիզմի հայեցակարգը, որին համապատասխան՝ անհրաժեշտ է ելնել նրանից, որ կոլիզիաները, վերջին հաշվով, լուծվում են հօգուտ միջազգային իրավունքի, քանզի այլ մոտեցումը կնշանակի դրա ժխտում<sup>6</sup>:

Խորհրդային, հետևաբար նաև սոցիալիստական երկրների իրավաբանները գտնում էին, որ «դուալիստական տեսությունը բովանդակում է մի շարք դրական հանգամանքներ, քանզի ելնում է պետությունների ինքնիշխանությունն ընդունելուց և արտացոլում է միջազգային հարաբերությունների համաժողովրդավարական բնույթը»<sup>7</sup>:

Այն գիտնականները, ովքեր պաշտպանում

www.lawinstitute.am

են դուալիստական հայեցակարգը, նշում էին հետևյալը, որ թեև միջազգային և ներպետական իրավունքը իրենից ներկայացնում է երկու ինքնուրույն իրավական համակարգ, դրանք սերտորեն կապված են իրար հետ և անմիջական ազդեցություն են գործում միմյանց վրա: Այդ առումով ուշադրության է արժանի Ե.Տ. Ուսենկոյի տեսակետը, ով նշում է, որ երկու իրավական համակարգերի միջև էլ կապը չի կրում գերիշխման և ենթակայության բնույթ: Այդ կապը բնութագրվում է դրանց փոխգործակցության ոլորտում քննարկվող օբյեկտների համակարգվածությամբ, փոխհամաձայնեցվածությամբ, փոխլրացվածությամբ<sup>8</sup>:

Դուալիզմի ժամանակակից ներկայացուցիչներն ընդունում են այդ նորմերի միջև կոլիզիաների հնարավորությունը, բայց գտնում են, որ այդ հողի վրա պետությունների միջև ծագած հակասությունները և հակամարտությունները կարող են լուծվել վեճերի խաղաղ կարգավորման հիման վրա կամ միջազգային պատասխանատվության օգնությամբ: Այսպես, իրավաբան-միջազգայնագետ Կ. Ռայթը (ԱՄՆ) նկատում է. «Մենք պետք է ընդունենք դուալիստական տեսակետը: Միջազգային դատարանները կիրառում են միջազգային իրավունքը, ազգային դատարանները՝ ազգային իրավունքը»<sup>9</sup>:

Ներկայում սակավաթիվ չեն նաև միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության **մոնիստական հայեցակարգի** կողմնակիցները: «Մոնիստական» հայեցակարգը չի առանձնանում հայացքների միասնականությամբ և ներառում է ներպետական իրավունքի գերակայության տեսության կողմնակիցներին և միջազգային իրավունքի գերակայության կողմնակիցներին: Ավելի մանրամասն քննարկենք դրանցից յուրաքանչյուրը:

Մոնիզմի հայեցակարգի ուղղություններից մեկի համաձայն՝ երկու իրավական համակարգերի հարաբերակցությունը որոշվում է դրանցով կարգավորվող հարաբերությունների փոխգործակցությամբ: Սկզբում միջազգային իրավունքն ազդեցություն չէր գործում ներպետականի վրա: Վճռորոշ էր ազգայինի ազդեցությունը որպես առավել զարգացածի:

Այս հիմնախնդիրն իր վրա ուշադրություն հրավիրեց XIX դարի վերջին և արտահայտվեց «ներպետական իրավունքի գերակայության տեսության» ձևով, ինչը, փաստորեն, միջազգային իրավունքը սահմանում է որպես նորպետական իրավունքի ճյուղ:

Այս տեսության որոշ կողմնակիցներ միջազ-

գային իրավունքը դիտում էին սուկ «արտապետական» իրավունք, որի նորմերն իրավաբանական են հանդիսանում միայն այնքանով, որքանով դրանք ներառված են ազգային իրավունքում: Իրավաբան-միջազգայնագետները (Մարբերգ, Էյխելման, Սիմսոն, Ցորն և այլք), պնդելով միջազգային իրավունքի նկատմամբ ներպետական իրավունքի գերակայության տեսությունը, հաստատում էին, որ միջազգային իրավունքի իրավական ուժը կախված է հենց միջազգային հարաբերությանը մասնակից պետությունից: Նրանց կարծիքով, միջազգային իրավունքը դառնում է պետական իրավակարգի մի մասը, որը կարգավորում է այլ պետությունների հետ տվյալ պետության հարաբերությունները<sup>10</sup>:

Վերջին ժամանակների ընթացքում հայրենական և արտասահմանյան իրավական գրականության մեջ չի կարելի նշել որևէ ակնառու իրավաբանի հստակ դիրքորոշում, ով հանդես է գալիս ներպետական իրավունքի գերակայության հայեցակարգի կողմնակից: Ընդհակառակը, ներկայում մոնիստական հայեցակարգի կողմնակիցների մեծ մասը պաշտպանում է ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության վերաբերյալ կարծիքները:

XIX դարի կեսին ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության հիմնահարցն իրավաբանական գրականության մեջ առանձնացվում էր որպես ինքնուրույն ուղղություն: Այս տեսությունը սուր կերպով բանավիճվում էր XX դարասկզբի իրավաբանական գրականության մեջ: Այդ տեսության առավել հայտնի հետևորդներ են հանդիսանում Կորկունովը, Կազանսկին, Յաշչենկոն, Լե Ֆյուրը, Գուգենհեյմը (Գերմանիա): Տեսությունն առավել լայն տարածում գտավ Անգլիայում և ԱՄՆ-ում:

Բազմաթիվ իրավաբան-միջազգայնագետներ հանդես են գալիս որպես միջազգային իրավունքի գերակայության տեսության կողմնակիցներ, ինչը հաստատում է, որ միջազգային և ներպետական իրավունքում, վերջին հաշվով, կարգավորվում է անհատների վարքագիծը, միայն այն տարբերությամբ, որ միջազգային ոլորտում այդ վարքագծի հետևանքները վերագրվում են պետությանը: Այդ տեսության կողմնակիցները գտնում են, որ միջազգային և ներպետական իրավունքում սուբյեկտների համար՝ անկախ նրանց կամքից, էական են հանդիսանում պարտադիր կարգադրագրերը: Նրանք գտնում են, որ իրավունքի՝ կարծես թե էական տարբերություններ չունեցող երկու համակարգերն էլ պետք է դիտվեն որպես իրավունքի միասնական հայեցակարգի դրսևորումներ:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

Ազգայինն ակտիվոր միջազգային իրավունքի գերակայության հայեցակարգը ներառում է երկու ուղղություն:

Առաջին՝ **արմատական մոնիզմի** կողմակիցները, հետևելով Քելզենի հայեցակարգին<sup>11</sup>, ելնում են «բարձրագույն իրավակարգով» (միջազգային իրավունք) և «ենթակա» ազգային իրավակարգերով իրավունքի մեկ համակարգի գոյության սկզբունքից: Քելզենը գտնում էր, որ իրավունքի այդ միասնական համակարգի նորմերը գտնվում են հիերարխիկ (աստիճանակարգային) կախվածության մեջ: «Այդ աստիճանակարգային սանդուղքի ստորին աստիճանները՝ դատարանների և վարչական մարմինների որոշումները, կախված են իրավունքի բոլոր վերադաս նորմերից, վերին աստիճանները՝ միջազգային իրավական նորմերը, կախված չեն ոչ մի իրավաբանական նորմից: Միջազգային իրավունքին հակասող ազգային իրավունքի ցանկացած նորմ հանդիսանում է առաջին միջազգային իրավական առումով, ընդհանրապես գոյություն չունեցող»<sup>12</sup>: Քելզենը ժխտում էր պետական ինքնիշխանության հասկացությունը, քանզի գտնում էր, որ պետությունը կարող է լինել ինքնիշխան միայն այդ բառի բացարձակ իմաստով, այսինքն՝ այն դեպքում, եթե մենք ընդունում ենք ներպետական իրավունքի գերակայության հայեցակարգը:

Երկրորդ՝ **չափավոր մոնիստական** հայեցակարգի կողմակիցները, հետևելով Մսելի տեսակետին, նույնպես առաջնայնությունը տալիս են միջազգային իրավունքի նորմերին: Բայց նրանք չեն գտնում, որ միջազգային իրավունքին հակասող՝ ազգային իրավունքի նորմը հանդիսանում է առաջին: Պետության դերը նրանք տեսնում են նրանում, որպեսզի նպաստի միջազգային իրավունքի նորմերի փոխակերպմանը (իմպլիմենտացիա) երկրի ազգային իրավունքում:

Միջազգային իրավունքը, նրանց կարծիքով, հանդիսանում էր ձևավորված կոլեկտիվի (միջազգային հանրության) իրավունք, անշուշտ, պետական իրավաբանական կարգից վեր: Ընդհանուր առմամբ այն ծառայում է հասարակական շահերին, պետությունների կոլեկտիվին և հանդիսանում որպես միջնորդ տարբեր հասարակարգեր ունեցող պետությունների միջև: Դա նշանակում է, որ պետական իրավաբանական համակարգերը չեն կարող լինել բարձրագույն և ավարտուն, քանի որ պետությունն իր հերթին ևս չի կարող լինել ինքնիշխան<sup>13</sup>:

Չափավոր մոնիստներն ավելի մոտ էին պրակտիկային: Նրանց կարծիքով, միջազգային իրավունքի գերակայության ընդունումը պետու-

թյան համար նշանակում է ինչպես միջազգային իրավունքին և դրա սկզբունքներին ենթարկվել, այնպես էլ ազգային իրավունքի համապատասխանեցում միջազգային իրավունքին:

Ինչպես միջազգային իրավունքի ակտիվոր ներպետական իրավունքի գերակայության կողմակիցները, այնպես էլ ազգային իրավունքի ակտիվոր միջազգային իրավունքի գերակայության հավատացյալները (արմատական մոնիստներ) միջազգային իրավունքը հակադրում են այնպիսի օբյեկտիվ իրականության, ինչպիսին է պետական ինքնիշխանությունը:

Եթե ներպետական իրավունքի գերակայության կողմակիցների մոտ այդ հակադրումը հանգեցնում է միջազգային իրավունքի ժխտման, ապա արմատական մոնիստների մոտ այն հանգեցնում է ինքնիշխանության մերժման: Բայց պետական ինքնիշխանությունը և միջազգային իրավունքը ենթադրում և լրացնում են միմյանց: Միջազգային իրավունքի՝ ազգայինն ակտիվոր գերակայության կողմակիցները ժխտելով ինքնիշխանությունը՝ իրականում փորձում են միջազգային իրավունքը փոխարինել համաշխարհային պետության իրավունքով, այսինքն՝ ըստ էության, ժխտում են իրականում գոյություն ունեցող միջազգային իրավունքը:

Զննարկվող երկու մոնիստական հայեցակարգերի կողմակիցներն ընդունում են պետական ինքնիշխանության գոյությունը որպես պետությունների անկախություն ոչ միայն միմյանցից, այլև՝ միջազգային իրավունքի նորմերից:

Իրականում ինքնիշխանությունը չի ժխտում պետությունների փոխկախվածությունը, բայց դա չի նշանակում մի պետության ենթարկում մյուսին: Այդ կապակցությամբ հարկ է չհամաձայնել այն կարծիքին, որ միջազգային իրավունքի նորմերի գերակայության ընդունումը և դրանց ներառումն իրավական համակարգում հանգեցնում է պետության ինքնիշխանության սահմանափակման: Պրոֆեսոր Գ.Ի.Տունկինը գրել է. «Երբ մենք խոսում ենք պետությունների ինքնիշխանության մասին, մենք նկատի ունենք ոչ բացարձակ ինքնիշխանությունը (բացարձակ ինքնիշխանություն գոյություն ունենալ չի կարող), այլ ավելի շուտ ինքնիշխանություն՝ միջազգային իրավունքի շրջանակներում»<sup>14</sup>:

Պետության և իրավունքի տեսության աղբյուրները հիմնականում մեկնաբանում են ինքնիշխանությունը որպես «երկրի ներսում պետական իշխանության գերակայություն, անկախություն միջազգային ասպարեզում»<sup>15</sup>, որպես «բացառիկ, ազգային իրավունք ազատորեն որոշել իր բոլոր գոր-

www.lawinstitute.am

ծերը» և այլն: Վ.Ն. Խրոպանյուկի դասագրքում միջազգային իրավունքը հիշատակվում է ինքնիշխանությունը բնութագրելիս. «Երկրի ներսում և երկրից դուրս ցանկացած այլ իշխանությունների նկատմամբ պետությունների գերակայությունը և անկախությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի խստիվ պահպանմամբ»: Բայց այս պարագայում էլ նա ընդգծում է, որ «միայն պետական իշխանության որոշումներն են տարածվում տվյալ երկրի ողջ բնակչության և հասարակական կազմակերպությունների վրա»<sup>16</sup> :

Ժամանակակից միջազգային հարաբերություններում (սկսած Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից) մի շարք գիտնականների կողմից պետական ինքնիշխանության նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության ընդունումը կապված է նրանց կողմից պետական ինքնիշխանությունից լիովին հրաժարվելու և համաշխարհային պետության ու համաշխարհային իրավունքի ստեղծման գաղափարների առաջադրման հետ:

Այսպես, ամերիկյան գիտնականներ Մ. Մակդուգալը և Մ. Ռայզմանը գրում են, որ գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում մարդկությունը շարժվում է դեպի ավելի սերտ կապերը<sup>17</sup> : Պետությունները դեռևս մնում են համաշխարհային ասպարեզում, բայց աճում է կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների դերը: Ընդ որում, միջազգային ասպարեզում գլխավոր գործող անձինք են դառնում ֆիզիկական անձինք: Այդ պայմաններում, ամերիկյան գիտնականների կարծիքով, անհրաժեշտ է ստեղծել համաշխարհային պետություն, որը կհետապնդի երկակի նպատակ. հանրնդիանուր իրավակարգի կազմավորում՝ մարդու իրավունքների ապահովման և համաշխարհային ամբողջատիրական պետության ստեղծման փորձերը խափանելու համար: Պետք է ասել, որ այդ գիտնականներն ընդհանուր առմամբ, ճիշտ են նախանշել համաշխարհային հանրության զարգացման որոշ միտումներ: Սակայն, համաշխարհային իրավունքի և համապատասխան պետության ստեղծման տեսլականը ուտոպիական բնույթ է կրում՝ պայմանավորված այն հիմնավորմամբ, որ ժամանակակից միջազգային հարաբերություններում այդպիսի ամբողջատիրական պետության մասին վաղ է խոսել՝ կապված տարբեր քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային արժեքներ կրելու հանգամանքների հետ:

Չի կարելի ուշադրության չարժանացնել նաև այսօրվա դրությամբ արդիական մնացող ռուս իրավաբան Պ.Ե. Կազանսկու արտահայտությունը. «Ներպետական իրավունքը չի կարող հակասել մի-

ջազգայինին: Պետությունը պարտավոր է ոչ միայն բարոյապես, այլ նաև իրավաբանորեն իր ներքին կարգերը համաձայնեցնել իր ստանձնած պարտավորություններին: Միջազգային իրավունքը պետք է կատարելի լինի: Երկրի ներքին իրավունքը դրա հետ համաձայնության մեջ է գտնվում, թե չի գտնվում, դա միջազգային իրավական տեսակետից նշանակություն չունի»<sup>18</sup> :

Այսօրվա դրությամբ միջազգային իրավունքի առաջնայնության օգտին արտահայտվող հիմնական գործոններն են. առաջին՝ քաղաքական բնույթի գործոնը. երկրորդ՝ տնտեսական բնույթի գործոնը՝ արտադրության միջազգայնացումը, աշխատանքի միջազգային բաժանումը, համաշխարհային շուկայի գոյացումը. երրորդ՝ աշխարհաքաղաքական (գլոբալ) հիմնախնդիրները՝ տնտեսական ճգնաժամերը, ժողովրդագրական ճգնաժամերը, զարգացող երկրներում պարենային ռեսուրսների պակասը, բնակարանային ճգնաժամը, համաճարակները, բնածին և տեխնածին աղետները, միջազգային հանցավորությունը՝ այս ամենն սպառնում է համաշխարհային իրավակարգի կայունությանը:

Չի կարելի չհամաձայնել այն կարծիքին, որ միջազգային իրավունքին է պատկանում առաջնայնությունն այնպիսի գործոնների թվում, որոնք ներգործում են միջազգային հարաբերությունների վրա, որ «քաղաքակրթության և իրավագիտակցության այսօրվա մակարդակին ամենից ավելի է համապատասխանում միջազգային հարաբերությունների վրա ազդող բազմաթիվ գործոնների թվում միջազգային իրավունքի գերակայության մասին դրույթը»<sup>19</sup> :

Երկար ժամանակ խորհրդային իրավաբանները ժխտում էին ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայությունը և պաշտպանում էին դուալիստական հայեցակարգը: Դա կապված էր այն բանի հետ, որ խորհրդային ժամանակաշրջանում, «սառը պատերազմի» պայմաններում, պետական ինքնիշխանության դոկտրինան վահան էր արտաքին ճնշման դեմ և դուալիզմի տեսությունը պաշտպանելու գործոններից մեկը: Այնուամենայնիվ, ավելի ուշ ընդունվեց ներքին իրավունքում միջազգային կանոնների մասնակի իմպլեմենտացիայի անխուսափելիությունը: Այդ նպատակով օգտագործվում էին հղում կատարող նորմերը՝ որոշ օրենքներ հղումներ էին կատարում միջազգային պայմանագրերին: Մեծ նշանակություն ուներ խորհրդային օրենսդրության մեջ այն նորմերի տարածումը, որոնք սահմանում էին, որ, եթե միջազգային պայմանագիրը բո-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

վանդակում է այլ կանոն, քան օրենքը, ապա կիրառվում է միջազգային պայմանագրի կանոնը:

Ինքնիշխանության հիմնախնդրի քննարկումը չի կարող կատարվել առանց պետությունների միջև ձևավորվող հարաբերությունների վերլուծության: Ցանկացած պետություն համագործակցում է այլ պետությունների հետ և, ընդ որում, չի կարող չղեկավարվել փոխադարձ ընդունելի պայմաններով, ավելի հաճախ՝ ամրագրված միջազգային իրավունքի նորմերում: Ինքնիշխան պետությունների շահերի փոխառնչակցության պայմաններում, միջազգային իրավական կարգավորման ոլորտը մշտապես ընդարձակվում է: Պետությունն «անազատ» է իր գործողություններում, եթե միայն այն չի որոշում ինքնամեկուսանալ և դրանով իսկ իր քաղաքացիներին մեկուսացնել շրջապատող աշխարհից<sup>20</sup>: Բայց այժմ դա անհնարին է առանց ավելի վաղ հիշատակված՝ մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերով սահմանված՝ մարդու իրավունքների ու ազատությունների էական խախտման, որոնք երաշխավորում են, անկախ պետական սահմաններից, մի ամբողջ շարք իրավունքներ:

Ներկայում արտասահմանյան և հայ իրավական գրականության մեջ առավել տարածված է մոնիստական հայեցակարգի այնպիսի տարատեսակ, ինչպես հանրաճանաչ նորմերի և միջազգային իրավունքի սկզբունքների ու միջազգային պայմանագրերի ճանաչումը որպես երկրի իրավական համակարգի, ազգային իրավունքի կամ երկրի օրենսդրության մաս:

Որոշ պետություններ այդ հայեցակարգին վերաբերվում են խիստ զուսպ և նույնիսկ առարկում են այն: Ուստի միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի նախագիծը պատրաստելիս ՄԱԿ-ի հատուկ կոմիտեն մերժեց դրա տեքստում այն դրույթի տեքստը ներառելու առաջարկությունը, ըստ որի՝ պետության ինքնիշխանությունն ստորադաս է միջազգային իրավունքի գերակայությանը<sup>21</sup>: Այդուհանդերձ, ակնհայտ է ներքին իրավունքում միջազգային իրավունքի կարգադրագրերի առավել լիարժեք արտացոլման միտումը:

ՀՀ Սահմանադրության մեջ (6-րդ հոդվածի 4-րդ մաս) իր արտացոլումն է գտել այն գաղափարը, որը բնորոշ է Եվրոպայի պետությունների ժամանակակից սահմանադրությունների համար: Օրինակ՝ ԳԳՀ Սահմանադրությունում (Հիմնական օրենքում) ամրագրված է. «Միջազգային իրավունքի ընդհանուր նորմերը հանդիսանում են դաշնության իրավունքի բաղկացուցիչ մասը: Դրանք առաջնայնություն ունեն օրենքների նկատմամբ և

անմիջականորեն ստեղծում են իրավունքներ ու պարտականություններ դաշնային տարածքի բնակչության համար» (հոդվ.25)<sup>22</sup>:

Համաձայն Հունաստանի Սահմանադրության 28-րդ հոդվածի 1-ին կետի՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը, ինչպես նաև միջազգային պայմանագրերը՝ դրանց վավերացումից և ուժի մեջ մտնելուց հետո, «հանդիսանում են հունական ներքին իրավունքի բաղկացուցիչ մասը»<sup>23</sup>:

Բուլղարիայի Սահմանադրության 5-րդ հոդվածի 4-րդ մասը հայտարարում է սահմանադրական կարգով վավերացված, հրապարակված և ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը «երկրի ներքին իրավունքի մասը»:

Իսպանիայի Սահմանադրությունը հռչակել է, որ օրինականորեն կնքված և Իսպանիայում պաշտոնապես հրապարակված միջազգային պայմանագրերը կազմում են նրա ներքին օրենսդրության մասը: Դրանց դրույթները կարող են չեղյալ հայտարարվել, փոփոխվել կամ կասեցվել միայն ինքնին պայմանագրերում նշված կարգով կամ միջազգային իրավունքի ընդհանուր նորմերին համապատասխան (հոդվ. 96/1)<sup>24</sup>: Նման դրույթներ պարունակվում են մի շարք այլ երկրների սահմանադրություններում:

Միջազգային իրավունքի գերակայության հարաճուն դերի ընդունումը, ինչն իր արտահայտումն է գտել բազմաթիվ պետությունների սահմանադրություններում և օրենսդրությունում, չի նշանակում, որ ներպետական իրավական համակարգը փոխարինվում է համաշխարհային եզակի իրավական համակարգով: Միջազգային իրավունքի մեկնաբանությունն էլ պետք է կայանա ազգային իրավական նորմերը մեր պետության համար պարտադիր միջազգային համաձայնագրերին համապատասխանեցնելու, և ներպետական իրավունքը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի հետ համաձայնեցնելու անհրաժեշտության հարցում: Գերակայությունը չի նշանակում մի համակարգի ստորադասումը մյուսին, այլ կանխորոշում է երկու իրավական համակարգերի փոխհարաբերության բնույթը:

Անառարկելի է մնում այն սկզբունքը, համաձայն որի՝ պետությունն իր ինքնիշխանության ուժով ազատորեն ընտրում է իր քաղաքական, սոցիալական և մշակութային համակարգը, ինչպես նաև սահմանում օրենքներ: Պետության ինքնիշխանությունն իր արտահայտությունն է գտնում նաև այն հատուկ կարգավիճակում, որով օժտված է Սահմանադրությունը:

www.lawinstitute.am

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունվող օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին: Այդ հոդվածի ուժով՝ ոչ մի իրավական նորմ, այդ թվում՝ նաև միջազգային պարտավորություններից բխող, չպետք է հակասի Սահմանադրությանը: Այդ կանոնը բնորոշ է ինչպես հին սահմանադրություններին, այնպիսին, ինչպիսին ԱՄՆ Սահմանադրությունն է, այնպես էլ նորերին, այնպիսին, օրինակ, ինչպիսին է 1958 թվականի Ֆրանսիայի Սահմանադրությունը:

Ամբազրելով պետության իրավունքը՝ որոշել իր իրավական համակարգը, միջազգային իրավունքը, դրա հետ մեկտեղ, պետության այդ իրավունքն իրականացնելիս անհրաժեշտ է, որ օրենքներ սահմանելու իրավունքը համապատասխանեցվի իրենց իսկ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին: Իրավական համակարգը որոշելու իրավունքը ներառում է նաև պետական մակարդակում միջազգային նորմերի իրացման ապահովման մեթոդներն ընտրելու իրավունքը:

Միջազգային պարտավորությանը հակասող օրենքի կամ ներքին իրավունքի նորմատիվ ակտի հրապարակումը կարող է այլ պետությունների կողմից բողոքի, հակազդող միջոցների ձեռնարկման հիմք հանդիսանալ: Որպես օրինակ կարող է ծառայել Ռուսաստանի Դաշնության Պետական դոմայնի դաշնային ժողովի 1994 թվականի հուլիսի 6-ի հայտարարությունը՝ կապված Լատվիայում «Զադաքսիության մասին» օրենքի ընդունման հետ<sup>25</sup>:

«Պետություն և իրավունք» եզրույթը բովանդակում է արտաքին աշխարհի հետ երկրի փոխգործակցության կարգավորման գլխավոր բաղկացուցիչ կառուցակարգերը: Ներպետական հասարակական կյանքում միջազգային հարաբերությունների և դրանց ազդեցության դերի մեծացումը հանգեցնում է նրան, որ ազգային իրավական համակարգերն առավելապես կառուցվում են միջազգային իրավունքի պահանջները հաշվի առնելով<sup>26</sup>:

Քննարկելով միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցը՝ պետք է նշել նաև միջազգային և ներպետական իրավունքի փոխգործակցության առանձնահատուկ դեպքերի մասին: Այդ առումով առավել հատկանշական է Եվրոպական Միությունը: Այս պարագայում հարկ

է նշել, որ միջազգային իրավունքի հետ Եվրոպական համայնքի իրավունքի հարաբերակցությունը շատ առումներով կառուցվում է այն նույն հիմքերի վրա, ինչը որ միջազգային իրավունքի հետ ներպետական իրավունքի հարաբերակցությունը: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է Եվրոպական Միության իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայությանը:

Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ միջազգային իրավունքի մասն Եվրոպական Միության իրավունքի ձևավորումը հիմնականում հիմնվում է պետությունների շահերի հաշվեկշռման վրա: Ուստի, այդ իրավունքն ավելի մոտ է գտնվում միջազգային իրավունքին, քան ներպետական իրավունքը, որը ելնում է, նախևառաջ, ազգային շահերից:

Տարածված է այն տեսակետը, որ Եվրոպական Միության իրավունքը մի կողմից, առաջվա պես, մնում է ընդհանուր միջազգային իրավունքի մի մասը (հիմնականում այն ուժով, որ դրա առաջացումը խարսխվում է մի շարք միջպետական համաձայնագրերի վրա): Դրա հետ մեկտեղ, այն դիտվում է նաև որպես Եվրոպական Միության մասնակից պետություններից յուրաքանչյուրի ներքին իրավունքի անքակտելի մաս<sup>27</sup>:

Եվրոպական Միության իրավունքը գոյություն ունի մասնակից պետությունների ներքին ազգային իրավունքի հետ մեկտեղ: Հետագա դատական պրակտիկայի վրա հսկայական ազդեցություն ունեցած իր վճիռներից մեկում Եվրոպական համայնքների դատարանն ընդգծել է, որ. «... ի տարբերություն սովորական միջազգային պայմանագրերի, Եվրոպական համայնքի հիմնման մասին պայմանագիրն ստեղծեց իր սեփական իրավական համակարգը, որը դարձավ մասնակից պետությունների իրավական համակարգերի անքակտելի մասը, և որն այդ պետությունների ազգային դատարանների կողմից կիրառման համար պարտադիր է»<sup>28</sup>:

Ի տարբերություն ավանդական միջազգային կազմակերպությունների իրավունքի, որի հիմնական նշանակությունն է ինքնին այդ կազմակերպության ներկազմակերպական գործունեության կարգավորումը և իրականացումը, Եվրոպական Միության իրավունքը կոչված է ապահովելու Եվրոպական Միության մեջ մտնող առանձին պետությունների միջև ինտեգրման գործընթացների զարգացումը: Դրա ուժով այն օժտված է մի շարք յուրահատուկ հատկանիշներով, որոնցից հիմնականն են հետևյալները.

ա) Եվրոպական Միության իրավունքն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առաջնայնություն ունի անդամ պետությունների ազգային իրավունքի նկատմամբ,

բ) դրա որոշ դրույթներ օժտված են կարծես թե «միջանցիկ» գործողությամբ և պարտադիր են ոչ միայն անդամակցող պետությունների համար, այլ նաև նրանց ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար:

Եվրոպական ինտեգրման ավելի քան չորս տասնամյակների ընթացքում այդ հատկանիշները վերաճել են Եվրոպական Միության իրավունքի հիմնարար սկզբունքների, որոնց թվում են.

1) անդամ պետությունների ներքին ազգային իրավունքի նկատմամբ Եվրոպական Միության իրավունքի գերակայության սկզբունքը,

2) անդամ պետությունների տարածքում Եվրոպական Միության իրավունքի նորմերի անմիջական գործողության սկզբունքը:

Եվրոպական Միության անդամ պետությունների կողմից այս սկզբունքների պահպանումն ապահովվում է բավականին գործուն մեխանիզմով: Դրանք իրենց արտացոլումն են գտել ԵՀ-ի հիմնադիր փաստաթղթերում: Բացի այդ, գոյություն ունի Եվրոպական Միության արդարադատության դատարանը, որի գործողությունը հիմնված է Եվրոպական Միության անդամ պետությունների, ինստիտուտների, մասնակից երկրների տարածքում ապրող և տնտեսավարող քաղաքացիների ու իրավաբանական անձանց կողմից իրավունքների աաշտպանության հայցային ձևի ընդունման վրա:

Այն կարգը, որի պարագայում Եվրոպական Միության իրավունքը գերակայություն ունի ազգային իրավունքի նկատմամբ, իր արտացոլումն է գտել մասնակից երկրների սահմանադրական իրավունքում: Օրինակ՝ Գ-Ղ-Ն Սահմանադրությունը 24-րդ հոդվածում սահմանում է, որ դաշնությունը կարող է օրենսդրական ճանապարհով իր ինքնիշխան իրավունքները փոխանցել միջպետական հաստատություններին:

Հարկ է նշել, որ Եվրոպական Միության իրավունքի գերակայության սկզբունքի նկատմամբ վերաբերմունքը տարբեր մասնակից պետություններում ոչ այնքան միանշանակ էր: Որոշ երկրներում, օրինակ՝ Պորտուգալիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում, Լյուքսեմբուրգում, Հունաստանում, այս սկզբունքն ազգային իրավական համակարգերի կողմից ընդունվեց բավական արագ: Սակայն, մի շարք այլ երկրներում (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Դանիա, Իռլանդիա, Իտալիա) այդ գործընթացն անցավ զգալի դժվարություններով: Այսպես օրինակ՝ Գերմանիայի և Իտալիայի սահմանադ-

րական դատարաններն ընդհանրապես սկզբում հրաժարվեցին այն ընդունել: Տարիներ պահանջվեցին, նույնիսկ տասնամյակներ, որպեսզի Եվրոպական Միության իրավունքի գերակայության դոկտրինան վերջնականապես ընդունվեր, առանց բացառության, Եվրոպական համայնքի բոլոր մասնակից պետությունների կողմից:

Հաշվի առնելով ասվածը՝ անհրաժեշտ է նշել, որ այսօր պետությունները հազիվ թե զուտ նախապատվությունը տալիս են աշխատանքում քննարկվող որևէ տեսական հայեցակետի: Սակայն, անտարակույս է, որ պետությունների պաշտոնական դիրքորոշման վրա այս կամ այն հայեցակարգի ընտրությունը լուրջ ազդեցություն է գործում: Դա ազդում է ներպետական իրավունքում միջազգային իրավունքի նորմերի իրացման, միջոցների և ձևերի վրա, պետության ներքին իրավական համակարգում միջազգային իրավունքի նորմերի իրացման մեխանիզմների ձևավորման վրա: Բացի այդ, հայեցակարգի ընտրության հարցում պետության դիրքորոշումը ազդում է ներպետական իրավունքում միջազգային պայմանագրի իրավաբանական ուժի վրա:

Պետք է համաձայնել այն կարծիքին, որ միջազգային հարաբերությունների զարգացման ժամանակակից փուլում «տեղի է ունենում երկու իրավական համակարգերի փոխգործակցության խորացում» (միջազգային և ներպետական), «այլ ոչ թե դրանց միջև սահմանների վերացում»<sup>29</sup>: Անհրաժեշտ է նշել, որ միջազգային իրավական համակարգն ավելի չեզոքություն ապահովող երևույթ է, քան մշտապես փոփոխվող ներքին իրավունքը, միջազգային իրավական նորմերի ներառումը ներպետական իրավական համակարգ՝ վերջինիս կհարողի մեծ կայունություն:

Ժամանակակից միջազգային իրավունքի զարգացման գործընթացում նկատվում է ներպետական և միջազգային իրավունքի հարաբերական փոփոխման կայուն միտում: Դրանց փոխգործակցության մակարդակը մշտապես բարձրանում է: Միջազգային իրավունքի հաշվառումն անհրաժեշտ է դարձել ազգային իրավունքի բնականոն գործառնության համար:

Այդուհանդերձ, այսօր միջազգային իրավունքի նախապատվելի նշանակության սկզբունքին հետևելը տարբեր պետությունների արդեն գոյություն ունեցող իրավական նորմերի փոխգործակցության գործընթացում հանդես է գալիս որպես խաղաղության ապահովման և պետությունների միջև համագործակցության երաշխիքներից մեկը:

Ինչպես այն դեպքում, երբ իրավական համակարգն առաջնորդվում է միջազգային և ներպատական իրավունքի հարաբերակցության մոնիստական հայեցակարգով, այնպես էլ այն դեպքում, երբ այն առաջնորդվում է դուալիստական հայեցակարգով, պետք է լուծել միևնույն հիմնահարցերը: Դա պետության տարածքում միջազգային իրավունքի նորմերը գործողության մեջ դնելու հիմնահարցն է:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը և նրա կողմից՝ միջազգային իրավունքի՝ ազգային իրավունքի (մասնավորապես սահմանադրական) հետ հարաբերակցության որևէ օպտիմալ հայեցակարգի ընտրությանը, ապա այս պարագայում կարելի է խոսել սույն պարագրաֆում քննարկված հիմնական հայեցարգերի որոշ գույքադրման մասին: Մի կողմից, պետք է համաձայնել դուալիստական հայեցակարգի դրույթներին առ այն, որ միջազգային իրավական համակարգը և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգն ինքնուրույն երևույթներ են: Այսպես, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասում պարունակվող՝ միջազգային իրավական նորմերի առաջնայնության վերաբերյալ նորմը, պետք է հաշվի առնել, որ Հայաստանը չի կարող ստանձնել պարտավորություններ և կնքել պայմանագրեր, որոնք կհակասեն նրա Սահմանադրությանը: Հակառակ դեպքում դրանք չեն վավերացվի: Ուստի, ազգային իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի որևէ բացարձակ առաջնայնության մասին չի կարող խոսք լինել:

Մյուս կողմից, ՀՀ Սահմանադրությունը հիշատակված հոդվածում միջազգային պայմանագրերը հռչակել է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Այս դրույթը տեղավորվում է մոնիստական հայեցակարգի շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին նվիրված նորմերը: Եվ այստեղ, ինչպես ներկայացվում է, պետք է նշել միջազգային իրավունքի նորմերի գերակայության վերաբերյալ մոնիստական հայեցակարգի առավել մեծ ազդեցությունը:

Առաջին՝ միջազգային իրավունքի բազմաթիվ հանրաճանաչ նորմեր, նվիրված մարդու իրավունքներին, հանդիսանում են ինքնաիրագործելի և անմիջականորեն գործող, այսինքն՝ դրանք չեն պահանջում ինչ-որ ներքին ակտի ընդունում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետությունն ապահովում է

մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», իսկ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Դրանից հետևում է, որ հենց ՀՀ Սահմանադրությունը ինքնին չի կարող սահմանափակել հանրաճանաչ իրավունքներն ու ազատությունները, որոնց հիմնական աղբյուրը միջազգային իրավունքն է:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսել է տրամադրվող իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմի (կառուցակարգի) օգտագործման հնարավորությունը: Այսպես, Սահմանադրության 18-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է յուրաքանչյուրի իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Դրանով Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գերադաս իրավագրությունը: Դա վկայում է ինքնիշխանության որոշակի սահմանափակման մասին և հանդիսանում է միջազգային ու ազգային իրավունքի հարաբերակցության մոնիստական հայեցակարգի հատկանիշ<sup>30</sup>:

Արդյունքում՝ հարկ է նշել, որ վերը բերված բոլոր հայեցակարգերն առաջացել են ոչ պատահականորեն, դրանք արտացոլում են այս կամ այն պետության՝ իրականում գոյություն ունեցող շահերը: Նույնիսկ կարելի է դիտարկել որոշակի ընդհանուր միտում՝ միջազգային իրավունքի առաջնայնության կողմնակիցներն ավելի հաճախ ներկայացնում են ուժեղ պետության շահերը, որը երկարատև ժամանակաշրջանի ընթացքում զգալի ազդեցություն է ունեցել միջազգային իրավունքի զարգացման վրա: Ազգային իրավունքի առաջնայնության տեսությունն առաջ են քաշել գերմանական իրավաբանները՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ Գերմանիան արագորեն ուժեղ էր կուտակում, իսկ նրա միջազգային դիրքերն ավելի թույլ էին, քան մյուս պետություններինը: Այստեղից էլ բխում է դոկտրինան՝ ուղղված պետության կողմից կնքված պայմանագրերից հրաժարվելուն: Դուալիստական հայեցակարգն սկզբնապես մշակել են նվազ ազդեցիկ երկրների ներկայացուցիչ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

զիտնականները: Ուստի, չպետք է բացարձակա-  
նացնել հայեցակարգերից և՛ ոչ մեկը՝ դրանք բոլորն  
էլ կախված են ուժերի քաղաքական դրվածքից:  
Կցանկանալիս ընդգծել, որ ժամանակակից փու-  
լում մոնիստական-դուալիստական հիմնախնդիրն  
առավելապես ձեռք է բերում սոսկ զուտ տեսական  
բնույթ: Պրակտիկայում, անկախ նրանից, թե հայե-  
ցակարգերից որն է պաշտպանվում, անհրաժեշտ է  
լուծել միևնույն հարցերը: Դրանք են՝ երկրի տա-  
րածքում միջազգային նորմերը գործողության մեջ

դնելու, միջազգային իրավական նորմերի իրակա-  
նացման հուսալի կառուցակարգի ստեղծման, ինչ-  
պես նաև ներպետական և միջազգային իրավունքի  
նորմերի կոլիզիաների կանխման և լուծման հար-  
ցերը:

<sup>1</sup> Տե՛ս Вылегжанин П.Н. Нормы международного права обисходных линиях //Государство и право, 2012.№5. С. 80-82; Миронов Н.В. Соотношение международного договора и внутригосударственного закона // տե՛ս Вылегжанин П.Н. Нормы международного права обисходных линиях //Государство и право, 2012.№5. С. 80-82; Миронов Н.В. Соотношение международного договора и внутригосударственного закона // Советский ежегодник международного права, 1965. С. 68.

<sup>2</sup> Տե՛ս Грабарь В.Э. Материалы по истории литературы международного права в России.-М., 1958. С. 20.

<sup>3</sup> Տե՛ս Հարկ է նշել, որ այս տեսակետի կողմնակիցներ էին նաև հայտնի իրավագետներ՝ Է.Մ.Ամետիստովը, Բ.Գ. Բուտկիչը, Ա.Ս. Գավերդովսկին, Ե.Տ. Ուսենկոն, Ս.Վ. Չեռնիչենկոն և այլք:

<sup>4</sup> Տե՛ս Камаровский Л.А. Основные вопросы науки международного права. - М.,1892. С. 45.

<sup>5</sup> Տե՛ս Այդալիսի կարծիք է հայտնել բրիտանացի իրավագետ Ջ.Ֆիցմորիսիսան, տե՛ս Futzmaurice J. The general principles of International Law // Степкин Е.Ю. Соотношение норм конституционного права России и международного права. Дисс. канд. юрид. наук, М., 2004. С. 80.

<sup>6</sup> Տե՛ս Радойнов П. Проблемы международного права. - София, 1984.

<sup>7</sup> Տե՛ս Блищенко И.П. Международное и внутригосударственное право. - М., 1960. С. 15.

<sup>8</sup> Տե՛ս Усенко Е.Т. Соотношение и взаимодействие международного и национального права и Российская N2. С. 14.

<sup>9</sup> Տե՛ս Մեջբերումը կատարված է՝ Каланда В.А. О трансформации норм международного права в правовую систему РФ // МЖМП. 1994. N3. С. 48.

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ՝ Zom A. Girundzugeses volkerrechts. - Leipzig, 1903. S. 7 // Терешкова В.В. Применение норм международного права в судебной системе Российской Федерации. Дисс. канд. юр. наук. - Казань, 1998. С. 44.

<sup>11</sup> Տե՛ս Kelsen. General Theory of Law. - Cambrigde, 1945; Principles of International Law.-New York, 1967 // Суворова В.Я. Реализация норм международного права. - Екатеринбург, 1999.

<sup>12</sup> Տե՛ս Буткевич В.Г. Соотношение внутригосударственного и международного права.- Киев, 1981. С. 25.

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 52:

<sup>14</sup> Տե՛ս Тункин Г.И. Международное право. - М., 1999. С. 10.

<sup>15</sup> Տե՛ս Теория государства и права. Академический курс / Под ред. М.Н. Марченко.Т.1.-М., 1998. С. 98.

<sup>16</sup> Տե՛ս Хропанюк В.Н. Теория государства и права. - М., 1997. С. 334.

<sup>17</sup> Տե՛ս Մեջբերում կատարվել է մենագրությունից, տե՛ս Карташкин В.А. Права человека: международная защита в условиях глобализации. - М., 2009. С. 8-9.

<sup>18</sup> Տե՛ս Казанский П.Е. Введение в курс международного права. - Одесса, 1901. С. 53// Суворова В.Я. Реализация норм международного права. - Екатеринбург, 1999.

<sup>19</sup> Տե՛ս Смирнова Е.С. О проблеме взаимодействия норм международного и конституционного права без иллюзий / Конституционализм: идеал и/или реальность. -М., МГЮА, 2012. С. 237-238.

<sup>20</sup> Տե՛ս Крылов Б.С., Ильинский И.П., Михалева Н.А. Проблемы суверенитета в Российской Федерации. М.,1994. С. 35:

<sup>21</sup> Տե՛ս Док. ООН А6230. 1966. 27 июля. С. 232.

<sup>22</sup> Տե՛ս Конституции государств Европейского Союза. - М., 1999. С. 189.

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 255:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 392:

<sup>25</sup> Տե՛ս Лукашук И.И. Нормы международного права в правовой системе России. - М., 1997. С. 11.

<sup>26</sup> Տե՛ս Лукашук И.И. дународное право // Московский журнал международного права. 1995. N 2. С. 48.

<sup>27</sup> Տե՛ս Топорнин Б.Н. Европейские сообщества: право и институты. - М., 1992. С. 38.

<sup>28</sup> St'ú Costav. ENEL Case [1964] // European Court Reports 585 // Тихомиров Ю.А. Глобализация: взаимовлияние внутреннего и международного права. // Журнал российского права, N11, ноябрь, 2002. С. 31.

<sup>29</sup> St'ú Лукашук И.И. Глобализация, государство, право 21 век - М.: Спарк. 2000. С. 20.

<sup>30</sup> St'ú Պետության ազգային ինքնիշխանության սահմանափակման մասին է վկայում մասն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննության ընդունված գործը «Վոնստանտին Մարկինը ընդդեմ Ռուսաստանի»:  
Սանրանան տե՛ս Лапаева В. Дело Константина Маркина против России в контексте проблемы национального суверенитета // Сравнительное конституционное обозрение. N2. 2012. С. 77-84.

### РЕЗЮМЕ

*Основные концепции соотношения внутригосударственного и межгосударственного права.*

*Характер и значение в сфере защиты прав человека*

Таким образом, обобщая тему концепции соотношения внутригосударственного и межгосударственного права в сфере защиты прав человека можем свидетельствовать, что исторический и международный правовой опыт подчеркивают важность выполнения международных обязательств для правовой системы государства, в том числе в сфере личных прав и свобод человека. Это достигается взаимодействием внутригосударственного и международного права, в частности, через структуры, включающие направления и формы.

### SUMMARY

*The main concepts of correlation of domestic and international law.*

*Essens and meaning in the field of human rights protection.*

Thus, summing up the topic of the concepts of correlation of domestic and international law in the field of human rights protection, we can state, that the historical and international legal experience puts high emphasis on fulfillment of international obligations for the legal system of the given country, including in the field of personal rights and freedoms of the people. It is acquired by cooperation of domestic and international law, particularly, through mechanisms involving the directions and forms.

### ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ



## ԴԱՏԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ՈՐՊԵՍ ՏՎՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՍԱՆՔ

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը<sup>1</sup> (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսում է քրեական վարույթի նոր պարտադիր փուլ՝ նախնական դատալսումներ: Նախնական դատալսումները նախորդելու են դատաքննությանը և ներառելու են մինչդատական վարույթի արդյունքների ստուգմանն ու դատական քննության նախապատրաստմանն ուղղված բոլոր հարցերի քննարկումն ու լուծումը՝ մրցակցության և կողմերի հավասարության պայմաններում:

Դատարանի նախաձեռնությամբ կամ վարույթի մասնակիցների միջնորդությամբ՝ նախնական դատալսումներ կարող են անցկացվել, մասնավորապես, վարույթի մասնակիցներին հայտնաժամբարկի, նրանց ինքնաբացարկի կամ վարույթից հեռացնելու հարցերը լուծելու համար:

Նախնական դատալսումների ընթացքում բացարկի, ինքնաբացարկի և վարույթից հեռացնելու հարցերը քննարկվում են Նախագծի 60-65-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով:

